AZG NEW SHABAT.QXD 26/04/2018 22:55 Page 1


# Ազգ
Azg

27 ԱՊՐԻԼ 2018 ՈՒՐԲԱԹ 16(5512)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651


## «Պանամական թղթեր». Որքա՞ն կմտնի Հայաստանի գանձարան

**2016-ի ապրիլին աշխարհով մեկ լրագրողական մի հետաքննություն բացեց համեստ, ազնիվ ապրուստով բավարարվող քաղաքացիների աչքերը: Հայաստանում էլ «Հետքը» լույս սփռեց, թե ինչ ասել է «Պանամական թղթեր»: NDR-ի, WDR-ի եւ «Զյուդդոյչե ցայթունգի» լրագրողական բացահայտումից հետո Գերմանիան մեծ եկամուտների տեր է դարձել, իրազեկում է գերմանական հեռուստատեսությունը՝ մասնավորապես արձանագրելով, թե անցնող տարիներին երկրի հարկային մարմինները 140 միլիոն եվրո են գանձել՝ Mossack Fonseca գրասենյակի տեղեկատվության օգնությամբ: Հետաքննող տեղեկություններն ընդհանուր առմամբ հանգեցրել են 71 քրեական դատավարության, ավելի քան 2000 դեպք ուսումնասիրվում է: Ընտրությունների թոհուբոհում, երբ ԱԺ պատգամավոր դարձավ նաեւ «Պանամական թղթերից» հայտնի դարձած Միհրան Պողոսյանը, մեր լրատվամիջոցներում այլեւս չկարդացինք նրանից գանձվող գումարներն ի՞նչ եղան: Միգուցե հիմա՞ իրազեկ դառնանք:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Նիկոլին սպասվող կռիվը ինքն իր դեմ

Դեռեւս մարտի 16-ին մեր թերթի իմ սյունակում ստորագրել էի «Խորհրդարանական, թե՞ վարչապետական հանրապետություն, կամ գուցե միապետակա՞ն» վերնագրով հոդված, որտեղ շարադրել էի իմ մտորումները այդ օրերին տեղի ունեցող իրադարձությունների մասին: Հիշեցնեմ՝ խորհրդարանական մեծամասնությունը, հանրապետական, դաշնակցական եւ ծառուկյանական, փոխանակ ուժեղացնելու խորհրդարանի դերն ու իրավասությունները, փութաջանորեն հզորացնում էին նորացված Սահմանադրությամբ արդեն իսկ անհամաչափ հզորացված վարչապետական պաշտոնը, կողոպտելով ու նսեմացնելով հանրապետության եւ խորհրդարանի նախագահների իրավասությունները: Այդ էր պատճառը, որ նշյալ հոդվածում ժխտում էի այդ պայմաններում ՀՀ նախկին նախագահի հայտարարությունը, թե Հայաստանը թեւակոխում է խորհրդարանական կառավարման փուլ. դա անհեթեթություն էր եւ է՛. Հայաստանը թեւակոխում էր եւ է՛ վարչապետական, եթե կուզեք, ինչպես ուրիշներ են իրավամբ որակել՝ սուպերվարչապետական կառավարման փուլ: Ավելի շուտ՝ միապետական փուլ:

Ներողություն եմ խնդրում ընթերցողից, որ խախտելով լրագրողական էթիկան եւ անձնապես իմ սկզբունքը՝ շարունակում եմ մեջբերում անել իմ հոդվածից, որտեղ գրել էի նաեւ, մեղադրական խոսք հղելով ՀՀԿ-ական, դաշնակցական եւ ծառուկյանական պատգամավորներին, որ անձնակենտրոն իշխանություն ստեղծելով նրանք փաստորեն Հայաստանը կանգնեցնում են կրախի առաջ՝ ներսից ու դրսից խոցելի են դարձնում, նախ՝ հե՛ր, տվյալ վարչապետի, ապա՝ պետությա՛ն գոյությունը:

Հենց այդ օրերին, երբ գրվել էր այդ հոդվածը, զրույց ունեցա ՀՀԿ-ական մի քանի հին ընկերների հետ, որոնք, ինձ նման մտահոգ, ընդունեցին ասվածի ճշմարտությունը, սակայն իրենց վարմունքը բացատրեցին հետեւյալ կերպ. վերջին տասը տարում, եւ դրանից էլ առաջ, երկրում ստեղծվել է կառավարման մի համակարգ, որը ստիպում է գնալ նման քայլերի՝ երկրում տեղի ունեցող բոլոր քաղաքական ու տնտեսական քայլերը թելերով ու թելիկներով կախված են այդ նախագահի կամ նոր վարչապետի տրամադրությունից, որոշումից ու կամքից, հետեւաբար կտրելով այդ թելերից անգամ մի քանիսը, կստանանք քաոս, իսկ քաոսը կբերի պետականության կորստի: Որպես միակ մխիթարություն եւ ապահովություն, խոսակիցներս հիշեցրին, որ իրենց լիդերը հրաշալի գրոսմայստեր է, շախմատային հաշվարկումների մեծ վարպետ:

Այժմ, հետնյալ թվով կարող եմ ասել, ինչպես օրերս մամլո ասուլիսներից մեկում էի նշել, Սերժ Սարգսյանը եթե նույնիսկ շատ վարպետ շախմատիստ է, ապա միայն սպիտակներով խաղալու դեպքում. նա շատ թույլ է սեւերի քայլերը հաշվարկելու գործում: Իսկ սեւերը, այս պարագայում, ժողովուրդն է, երիտասարդությունը, հատկապես ուսանող երիտասարդությունը, որը ցույց տվեց, Նիկոլ Փաշինյան հեղափոխականի անուրանալի տաղանդի շնորհիվ, սպիտակների արքային անձնատվության մատնելու իր ողջ կարողությունն ու հուժկու թափը:

Այժմ Ն. Փաշինյանը, մեջքին ունենալով ժողովրդի առավել ակտիվ զանգվածների զորակցությունը (քիչ էր մնում ասեի՝ ուսապարկը), ձիավարում է սրարշավ, քաջ գիտակցելով, որ ժամանակը իր օգտին չէ: Նա արշավում է սրընթաց՝ գրավելու վարչապետական այդ նույն՝ գերհզոր, միապետական աթոռը, եւ օգտվելով նույն աթոռի՝ սահմանադրականորեն ուռճացված հնարավորություններից՝ իր կամքը պարտադրելու բոլորին, նաեւ... ինքնիրեն, կռիվ տալու իր իսկ դավանած կամ հայտարարած սկզբունքների, իր իսկ քննադատած կարգուսարքերի դեմ:

Կհաջողվի՞ նրան այդ պայքարի ելքը վճռել հօգուտ ժողովրդի, պետականության, ազգաբնակչության բարօրության, բարգավաճումի: Կասկածելու իրավունքը բոլորինս է, եւ առաջին հերթին՝ մեր խանդավառ երիտասարդությանը, որի ներողամտությանը ապավինելը հակացուցված է բոլորիս համար, նույնիսկ Նիկոլին եւ ամենի՛ց առաջ Նիկոլին:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## 11 օր, որ փոխեցին Հայաստանը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




11 այն օրերը, երբ տեղի էին ունենում բազմամարդ հանրահավաքներ ու երթեր, ապրիլի 12-23-ը, Հայաստանն անճանաչելիորեն փոխեցին: Անհավանականն՝ ակնհայտ, կարելի է անգամ այդպես բնութագրել տեղի ունեցածը: Կարելի է ասել՝ արդեն անցյալ է ՀՀԿ-ի իշխանությունը՝ ապրիլի 23-ին Սերժ Սարգսյանի հրաժարականով: Հայաստանում արժեհամակարգային մրցակցության նոր ձողանիշ են սահմանել երիտասարդությունն ու ուսանողությունը՝փողոցում իրենց նոր մտածելակերպն ու թավշյա հեղափոխությունն իրականացնելով:

*«Հայաստանի պատմության մեջ ունենք այլեւս նոր էջ: Մենք ապրում ենք Նոր Հայաստանում: Հայաստան, որտեղ յուրաքանչյուր հայաստանցի եւ աշխարհասփյուռ հայությունն իր ուժն ու եռանդը պետք է դնի երկրի զարգացման համար:*

Հայաստան, որին մասնակցույց են անելու աշխարհում՝ ժողովրդավարության, կառավարման, քաղաքացիական հասարակության, մշակույթի, գիտության ու տնտեսության զարգացման առումով:

...Բարի լո՛ւյս, Հայաստան: Բարի լո՛ւյս, Հայաստանի հպարտ քաղաքացի»: Անտեղյակ մարդը կկարծեր, թե սա փողոցում հեղափոխություն իրականացնող հեղափոխականներից մեկն է ասել, բայց սա ասել է Հայաստանի չորրորդ նախագահը՝ մեկ օր առաջ, Հայաստանի մտավորական ու կուսակցական շրջանակների հետ շփվելուց հետո, նշելով, որ Հայաստանի պատմության մեջ ունենք այլեւս նոր էջ:

### Ինչու դա տեղի ունեցավ

Ինչպես եւ ինչու դա տեղի ունեցավ՝ դեռ ամիսներ կվերլուծվի, սակայն աչքի զարնողն այս է.

-Ունեինք իրավիճակին անհամարժեք իշխանություն, որը տասնամյակից ավելի կառավարելով՝ չէր կարողացել փոփոխություններ մտցնել երկրի կյանքում, բեւեռացրել էր ժողովրդին՝ հասարակ հայ մարդուն զրկելով հեռանկարից, կոռուպցիայի եւ ապօրինությունների դեմը չէր առել՝ շատ չթվարկենք, բոլորդ գիտեք:

-Աճել էր այն սերունդը, որն անցավ հանրային մի շարք բողոքի ալիքների փորձառությամբ, ընկալունակ էր նոր մոտեցումների համար եւ պատրաստ էր արդեն իշխանափոխության, ինչն անսպասելի էր կարծրատիպերով առաջնորդվող քաղաքական ուժերի համար ու նրանց հանկարծակիի բերեց: Անկախության այս սերունդն այլեւս չէր ուզում կառավարվել հին ձեւով եւ թելադրեց իր խաղի կանոնները:

⇨12

## Quo vadis? Յո՞ երթաս, Հայաստան

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Վերնագիր դարձած մեր հարցի պատասխանը որոնենք գերմանական հայացքով: Հայաստանում կատարվող իրադարձություններն ամեն օր տեղ են գտնում գերմանական ռադիոյի՝ Deutschlandfunk (DLF)-ի լրահոսում, որ օգտվում է ֆրանսիական ծառայությունից, մեկումեջ հեռուստատեսության առաջին՝ ARD եւ երկրորդ՝ ZDF ալիքներն են անդրադառնում դրանց՝ հիմնականում իրենց Մոսկվայում հավատարմագրված թղթակիցների միջոցով, տպագիր, առցանց լրատվամիջոցներն էլ իշխանափոխության պահանջով բողոքի՝ բռնությունից զերծ ցույցերի մասին իրենց հրապարակումներում օգտվում են տարբեր աղբյուրներից: Նույնիսկ հարեւան Իրանում հավատարմագրված թղթակից չունեցող Հայաստանն իհարկե չի կարող պահանջել, որ յուրաքանչյուր արտերկրի լրատվամիջոց թղթակից ուղարկի Երեւան՝ տեղում պատրաստելու իր ռեպորտաժն ու վերլուծականը, բայց պաշտոնական Երեւանը կարող է գոնե իր լրատվությունն «Արեւմտերենով» արագ տարածել մի քանի լեզուներով՝ ներառյալ չինարեն: Մեր հետազոտած գերմաներեն տարածվող ահռելի նյութից այս աղբյուրը ցավալիորեն միշտ բացակա է:

Անցյալ շաբաթ գերմանական հեղինակավոր թերթերից «Զյուդդոյչե ցայթունգը» որոշեց Երեւանի փոթորկուն առօրյայի մասին ծանուցել այնտեղ գործուղված իր թղթակցի միջոցով: Նա եզակի չմնաց: Ապրիլի 24- ին ARD- ի լրատվական «Օրվա համայնապատկեր» ծրագրի ժամը 17- ի եթերում Մոսկվայի թղթակից **Ուդո Լիլիշկին** Երեւանից էր հնչեցնում իր մեկնաբանությունը: Պատասխանելով հաղորդավարի՝ մե՞ծ է Հայաստանում խաղաղ բարեփոխումներ անցկացնելու հավանականությունը հարցին, Լիլիշկին ասաց՝ մեծ է, քանի որ վարչապետի հրաժարականից հետո ժողովրդի ուրախությունը տեղը զիջել է մտախոհությանը, ուղիներ որոնելուն, քննարկումներին, ինչը կբացառի բռնությունը:

Բացառապես ներքաղաքական պայքարի մասին կարեւոր մեկ ուրիշ եզրակացություն հնչեց նույն ծրագրի ապրիլի 25-ի ժամը 10-ի թողարկմանը: Մոսկվայից **Բիրգիթ Վիրնիչը** շեշտադրեց, թե «թավշյա» անվանյալ հեղափոխությամբ ժողովուրդը պայքարում է կոռուպցիայի եւ օլիգարխների դեմ: Ապրիլի 24-ին ժամը 19-ի թողարկմանը Մոսկվայից թղթակից **Մարկուս Զամբալեն** էլ ընդգծելով ցույցերի խաղաղ բնույթը, անդրադարձավ դրանց վերաբերյալ արտերկրից հնչող գովաբանող արձագանքներին: ԳԴՀ կոչ է ուղղել բոլոր կողմերին հետագա օրերին էլ խոհեմություն ցուցաբերել, Ռուսաստանը, որ նախկին ԽՍՀՄ տարածքում բողոքի հանրահավաքների մասին մշտապես քննադատություն է հնչեցրել, Հայաստանում կատարվողի վերաբերյալ այլ կերպ է արձագանքել. ՌԴ արտգործնախարարության խոսնակ **Զախարովան** ասել է՝ Ռուսաստանը Հայաստանի կողքին է: ԼՂ հակամարտության հարցին անդրադարձել է ԵԱՀԿ- ն՝ Հայաստանին ու Ադրբեջանին կոչ անելով պահպանել հրադադարը, ծանուցեց ARD- ի թղթակիցը:

⇨2



**Հեղափոխությունը եւ նրա զավակները**

էջ 4



**Բաքվի հայկական պետական թատրոնի փակման շուրջը**

էջ Բ-Գ



**«Հեղափոխությունը պոռնիկ չէ»...**

էջ 5

AZG NEW SHABAT.QXD 26/04/2018 22:55 Page 2



ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Ափսոսա՞նք, թէ՞ չափսոսանք

20 տարեկան զինծառայող մահացած է Արցախի մէջ: Թերթին երկրորդ էջին մէկ կողմը, քանի մը տողով կը հաղորդուի լուրը: Եթէ մէկը ուշի- ուշով չկարդայ բոլոր վերնագիրները, ոչ իսկ կը տեսնէ տեղադրուած լուրը, իսկ կարդալէ ետք բան մը կը շարժի՞ իր ներաշխարհին մէջ, թէ՞ ամէն շաբաթ կրկնուող այս գոյժերը արդէն սովորական են դարձած ու գրեթէ անդրադարձ չեն ունենար ընթերցողին կողմէ, գուցէ գլխու թեթեւ տարուբերումով, որպէս ափսոսանք:

Ո՞վ ժամանակ ունի այս օրերուն սահմանապահ զոհուող զինուորներու լուրերով զբաղելու: Ինչպէս թերթերու առաջին էջերուն վրայ տեղադրուած ցուցարարներու լայնածաւալ լուսանկարները, այդպէս ալ Երեւանի հրապարակն ու փողոցները լայնածաւալ ցոյցերու թատերաբեմ դարձած են:

Զոհուած զինուորը, որուն անունը Արտակ է, կամ Աշոտ, Գագիկ է, կամ Էդիկ, շատ հաւանաբար աչքը սահմանին այն կողմ, իսկ ականջը ռատիոյին, աչքով կը հետեւի թշնամիի շարժումներուն ու ականջով՝ Երեւանի ցոյցերուն, ու սիրտը կը ցաւի, երբ լսէ որ հայ ոստիկանները բռնութիւն գործադրած են խաղաղ ցուցարարներուն հանդէպ, մինչ ցուցարարները լուր իսկ չունին, որ իրենց բարձրաձայնած լոզունգներուն ու կոչերուն աղմուկին մէջ ընտանիք մըն ալ որբացած է, որոնց հեկեկոցները ոչ իսկ լսուած են ընդհանուր ժխորին ու անտարբերութեան մէջ:

Երկիր է, իր սեւով ու ճերմակով, իր լաւով ու վատով, իր քաղցրով ու լեղիով. մարդիկ կը ծնին, կ'ապրին, կ'ուսանին, կ'աշխատին, կը գոհանան իրենց վիճակէն, չեն գոհանար, կը բողոքեն, ցոյցերու կը մասնակցին, համակիրներ կ'ունենան, չեն ունենար, բռնութեան կ'ենթարկուին, «թաւշեայ» է կ'ըսեն, քաղաքը կ'անդամալուծեն, համբերութեան բաժակը յորդած է կ'ըսեն, մեծերը խոհեմութեան կոչ կ'ընեն, կ'ենթարկուին, չեն ենթարկուիր, քաշքշուք, իրարանցում եւ օդին մէջ սաւառնող հարցում՝ Համլէթեան ոճով՝ «Լինել, թէ՞ չլինել»... Իսկ մենք, քաղաքացիներ ենք, մեր սեւով ու ճերմակով, մեր լաւով ու վատով, մեր քաղցրով ու լեղիով եւ «Լինել»ու մասին կը մտածենք. լինե՛լ, աւելի լաւը, քան երէկ. չլինե՛լ անդէմ ու անխօս, այլ՝ տեսակէտ ու կարծիք ունենալ եւ զանոնք արտայայտելու իրաւունք:

Երկիր է, իր ամէն ինչով: Թրքական հեռատեսիլը օրը քանի անգամ ցոյց կու տայ Հայաստանի ցոյցերը եւ յատկապէս բռնութեան պատկերները: Թրքամէտ Euronews-ն ալ նոյնը կ'ընէ: Կեցցէ դրամը:

Նոր վարչապետը հաւանաբար անհանգիստ է, բայց աներեր, վերանորոգուած հին կառավարութիւնը, իբր ոչինչ պատահած, պիտի շարունակէ իր գործը: Մէկը կ'ըսէ՝ այս անգամ Սեւակը սխալած պիտի ըլլայ, քանի որ «պատը» էլ պատ կրնայ չմնալ, կամ՝ մնալ ու ճաք տալ, սակայն պատին զարնող ճակատն ալ պիտի չ«պակսի», այլ դափնեպսակ պիտի հագնի: Ուրիշ մը դիմատետրի իր էջին վրայ կը գրէ, որ անիմաստ են ցոյցերը, բան պիտի չփոխուի, այնքան ատեն, որ ոստիկանութիւնն ու բանակը իշխանութեան հետ են:

Անհաշիւ կարծիքներ. մարդիկ անտարբեր չեն, սակայն բոլոր թեր ու դէմ կարծիքներու աւարտին «Միայն թէ արիւն չյեղուի, միայն թէ զոհեր չըլլան»...

Երիտասարդութեան պոռթկումը այնքան բնական է, որքան տարեցներուն համակերպումն ու մխացող լռութիւնը: Մեծերը յոգնած են արդարութիւն պահանջելէն. երիտասարդները դեռ կայտառ են ու իրավիճակի փոփոխութեան իրենց պահանջքին մէջ իրաւացի են:

Երկիրը կ'եռեւեփի: Ուր որ է ճաքը կա՛մ պիտի եփի, կա՛մ կաթսայէն դուրս պիտի թափի ու աղտոտէ չորս կողմը, եթէ խոհարարները զգոյշ չըլլան:

Նախկին վարչապետին հանդիպումը Փաշինեանի հետ ձախողեցաւ. որո՞ւ մեղքով: Սակայն մէկ բան ականջիս մէջ զամուած մնաց՝ «Երեկի Մարտի 1-ից դաս չէք քաղել»... Այս խօսքը ամէն վերյիշելուս, մէջէս դող մը կ'անցնի:

Ինչպէս կ'ըսեն,- գրութեանս մելանը չչորցած,- պատահեցաւ անակնկալը՝ Սերժ Սարգսեանը հրաժարեցաւ: Արիւն չյեղուեցաւ, յաղթեց բանականութիւնը, յաղթեց ժողովուրդը: Հիմա Հայաստանը նոր կացութեան մը առջեւ է: Յետո՞յ:

# Եվս մեկ հայրենասիրական քայլ






Ժամանակները փոխվում են, փոխվում է նաեւ Արցախի Քաշաթաղի շրջանի՝ Վահան Թեքեյանի անունը կրող Բերձորի թիվ 1 միջնակարգ դպրոցի ուսումնական միջավայրը: Ասում են լավ սկիզբը գործի կեսն է, իսկ մեր գործում լավ ու ազգանվեր սկիզբը դրվել է տարիներ առաջ: Բերձորի դպրոցում այժմ սովորում է շուրջ 200 աշակերտ, որոնք արդեն հնարավորություն ունեն ուսանել վերանորոգված չորրորդ դասարանում, որը կրում է Սարգիս Հացպանյանի անունը: Դասարանի վերանորոգումը հովանավորել է Արշակ Չոպանյան ինստիտուտը (Փարիզ):

Նորոգված դասասենյակի բացման եւ անվանակոչության արարողությունը տեղի ունեցավ ապրիլի 21-ին: Միջոցառմանը ներկա էին Արցախի Հանրապետության կրթության, գիտության եւ սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, Փարիզում գործող Արշակ Չոպանյան ինստիտուտի տնօրեն Վարուժան Սիրապյանը, Հայաստանում ԱՄՆ եւ Կանադայի ԹՄՄ ներկայացուցիչ Գայանե Մուրադյանը, Քաշաթաղի շրջանային վարչակազմի աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանը, դպրոցի տնօրենությունը, ուսուցիչներ եւ աշակերտներ:

Դպրոցի տնօրեն **Անահիտ Քոսակյանը** բացման իր խոսքում նշեց՝ դպրոցի աշակերտները միշտ աչքի են ընկել իրենց բարձր առաջադիմությամբ, մասնակցելով տարբեր մրցույթների եւ օլիմպիադաների՝ արժանացել են պարգեւների եւ նվերների: Աշակերտների առաջադիմությունը եւ ոգեւորությունը է՛լ ավելի բարձրացավ հատկապես վերջին 1,5 տարում, երբ դպրոցում վերանորոգվեցին մի քանի դասասենյակներ, իսկ դասերը սկսեցին անցկացվել նորոգված, լուսավոր, մաքուր ու ջերմ՝ հայոց լեզվի եւ գրականության (Կանադա), Հրանտ Դինքի անվան պատմության (Կանադա), զինվորական պատրաստության (Ֆրանսիա), Սարգիս Հացպանյանի (Ֆրանսիա) անվան դասարաններում:

Անահիտ Քոսակյանը ընդգծեց, որ դպրոցի տնօրենությունը եւ ուսուցչական ողջ կոլեկտիվը որոշել են միաձայն այդ դասարանը կոչել Սարգիս Հացպանյանի անունով՝ հաշվի առնելով նրա ծառայությունը հայրենիքին, մասնակցությունը Արցախյան գոյամարտին:

Այնուհետեւ դպրոցի տնօրենը շնորհակալագիր հանձնեց Արշակ Չոպանյան ինստիտուտի տնօրեն Վարուժան Սիրապյանին: Վերջինս շնորհակալություն հայտնելով շնորհակալագրի համար՝ նկատեց, որ իրենց միության համար կարեւոր է հայ մանուկների եւ երիտասարդների կրթությունը, Չոպանյան ինստիտուտը աջակցել եւ շարունակելու է աջակցել հայրենանվեր այսպիսի ձեռնարկների իրականացմանը:

9-րդ եւ 10-րդ դասարանների աշակերտները բովանդակալից ներկայացրին Սարգիս Հացպանյանի կենսագրությունը, ականատեսներով փաստեցին, որ նա 1990 թվականին եկել է Հայաստան եւ ընդգրկվել Լեոնիդ Ազգալդյանի ազատագրական բանակի կազմում: Աշակերտները հանգամանորեն ներկայացրին Արցախյան գոյամարտում նրա անցած պայքարը՝ մանրամասնեցին, թե ինչպես է պաշտպանել Քարվաճառի տարածաշրջանում գերության մեջ մնացած ադրբեջանցի կանանց ու երեխաներին:

Աշակերտների ելույթից հետո խոսեց Արցախի հանրապետության կրթության գիտության եւ սպորտի նախարար **Նարինե Աղաբալյանը**: «Այս փոքրիկ միջոցառումը մեծ խորհուրդ ունի: Մեր երկրի իշխանությունները պատերազմից հետո առաջին հերթին դպրոցաշինության ծրագիր են իրականացրել՝ կարեւորելով կրթության բնագավառը երկրի կայացման գործում: Այս տարիների ընթացքում մի քանի տասնյակ դպրոցներ, այդ թվում նաեւ՝ Քաշաթաղի շրջանում, կառուցվել են, հիմնանորոգվել, եւ գործընթացը շարունակվում է: Այս կարեւոր գործում մեծ է Սփյուռքի մեր հայրենակիցների դերը: Սա խոսում է հայության միասնության մասին»,- ասաց Նարինե Աղաբալյանը: Նախարարը շնորհակալություն հայտնելով բարերարներին եւ միջոցառումը կազմակերպիչներին՝ ականատեսներով նկատեց, որ այսօրվա երիտասարդությունը բանիմաց ու գիտակ է: Նախարարը հավելեց նաեւ, որ նախարարությունը հետամուտ կլինի, որպեսզի հնարավորինս շուտ լուծվեն առկա խնդիրները եւ ապահովվի լավագույն կրթություն, քանզի այսօրվա աշակերտներն են մեր ապագան եւ երկրի վաղվա տերը:

Այնուհետեւ ներկաները բարերարների հետ քննարկեցին հետագա անելիքները:

**ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ**
**Երեւան -Բերձոր-Ստեփանակերտ-Երեւան**

# Quo vadis? Յո՞ երթաս, Հայաստան

⇨1

Գերմանական լրատվական հայացքն ընդհանուր առմամբ ճիշտ է փոխանցում հայաստանյան իրականությունը, տրամադրությունները ու տրամաբանությունը, արձանագրում է, թե ԵԱՏՄ անդամ Հայաստանի համար ԵՄ- ի հետ 2017-ին կնքած համաձայնագիրը բացվող նոր հնարավորությունների պատուհան է, բողոքող զանգվածի ցանկությունները չի բխեցնում աշխարհաքաղաքական կենտրոններից որեւէ մեկի հուշարարությամբ, ընդգծում է, որ Հայաստանի ներքին խնդիրն է, սակայն նշում, որ ընդդիմության առաջնորդ Փաշինյանը Սփյուռքի սատարմանն էլ է դիմել: Սոցցանցերով տարածված «Քայլ արա», «Մերժիր Սերժին» կոչերը հաջողություն ունեցան՝ Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Վիեննայում, Բրյուսելում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում ՀՀ դեսպանությունների, հյուպատոսությունների առջեւ զանգվածային հանրահավաքներ գումարվեցին: Բեռլինում այն տեղի ունեցավ ապրիլի 21-ին, եւ ըստ մասնակիցներից մեկի՝ լրագրող **Արփի Մախսուդյանի** մեզ փոխանցած տեղեկության, հանրահավաքին 250-300 հոգի է եղել, ելույթ է ունեցել նաեւ Բեռլինի Մաքսիմ Գորկի թատրոնում այդ օրերին հանդես եկող կանադահայ դերասանուհի **Արսինե Խանջյանը**:

### Ապրիլի 24- ին՝ անցյալը ոգեկոչելով, ներկայի հանդեպ հույսով

«Ազատագրում անցյալից», այսպես էր վերնագրել ապրիլի 24-ի իր հրապարակումը ARD-ի թղթակից Զիլվիա Շթյոբերը, որ արձանագրել էր՝ ցեղասպանության հիշատակի օրը հայերն անցյալից ավելի ապագային են հառում իրենց հայացքը: Ապրիլի 23-ին Մայնի Ֆրանկֆուրտի Ս. Պողոսի տաճարում, հաջորդ օրը Բեռլինի քաղխորհրդի հանդիսությունների սրահում, Քյոլնի Ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցում կայացած Հայոց ցեղասպանության հուշահանդեսների գրավոր ելույթները չփոխվեցին իհարկե, ոչ էլ երաժշտական ծրագիրը փոխվեց, բայց ՀՀ դեսպանը, Գերմանահայոց առաջնորդը, հայ համայնքի ներկայացուցիչները իրենց գրավոր ելույթին, հայոց լեզվով բանավոր մի պարբերություն ավելացրեցին՝ խոհեմության կոչ, խաղաղ մնալու աղոթք Հայաստանի ժողովրդին, քաղաքական գործիչներին:

Սփյուռքում ապրիլի 24-ին երբեք չեմ տեսել, որ մասնակիցներից շատերը նկատելի պայծառ տրամադրություն ունենան, Սերժ Սարգսյանի հրաժարականը արձանագրած ժողովրդի միակամությունն ու հաղթանակը հույս էր տվել, թե Հայաստանը պատմության նոր էջ է բացել, որ ամրացնելու է անկախ, ժողովրդավար պետության հիմքը:Պարսկահայերից մտահոգություն էլ լսեցի՝ մենք մի հեղափոխություն տեսել ենք, փախել ենք դրանից: Իսկ նախկին հայաստանաբնակներից մի քանիսը չբացառեցին, որ ԳԴՀ-ն կթողնեն, երկիր կվերադառնան:

AZG NEW SHABAT.QXD 26/04/2018 22:55 Page 3



# Նիկոլի թվի մտքերից

**ՆԱԻՐ ՅԱՆ**

Սե՞ւ ես, թե սպիտակ, ոստիկա՞ն ես, թե ոչ ոստիկան, չա՞ր ես, թե բարի, բարիկադի ա՞յս կողմում ես, թե այն. մի քանի օրում հայաստանյան հասարակությունը բաժանվեց երկու բեւեռի: Առօրյա կյանքում՝ երկու տասնամյակից ավելի այս բաժանումը կար: Այդ բաժանման հետ համակերպված կամ չհամակերպված, դրանից բողոքելով կամ չբողոքելով ապրում էինք: Իշխող կուսակցության ղեկավարման, վարքագծի ու ինքնարտահայտման հատկապես վերջին մեկ տասնամյակը հասարակության համբերության բաժակը պռնկեպռունկ լցրեց: Վրադիր՝ ապրիլյան պատերազմը, երբ պարզվեց, որ մերն ամենեւին էլ տարածաշրջանի ամենամարտունակ բանակը չէ, իհարկե, սպառազինման առումով: Ապրիլյանն էլ իր հերթին ընդգծեց հասարակության իշխանավորների ու ժողովրդի միջեւ անջրպետը: Մենք սովոր էինք, որ կա հասարակության այս մի հատվածի համար նախատեսված թանձր իրականություն՝ վիրավորված ինքնասիրությամբ, նսեմացված արժանապատվությամբ, խոցված բարոյականությամբ, թանկ ապրուստով, կոմունալ ուռճացված վարձերով, առաջնագծում ծառայելու դատավճռով, բյուջեն լցնելու պարտավորություններով եւ այսպես շարունակ: Եվ կա չասենք հասարակության կամ հանրույթի, ասենք՝ ընտրյալների հատվածը, որի համար կա մեկ այլ՝ հասարակության առաջին հատվածի ապրած իրականության հետ ոչ մի աղերս չունեցող մեկ այլ իրականություն: Եվ ուրեմն երկու իրականությունների բախումն ուշանում էր, բայց անխուսափելի էր: Ի՞նչ արեց Նիկոլ Փաշինյանը: Նա խաղաքարտերը դրեց հասարակության ոտնահարված արժանապատվության, տասնամյակներով ձեռք բերված ընկճախտի, երկրում իշխող ՀՀԿ-ական ամենաթողության ու անպատժելիության համար պատասխանատու գլխավոր կերպարի՝ Սերժ Սարգսյանի նկատմամբ համաժողովրդական ատելության վրա: Ինչքան էլ փշաքաղեցնող ու հակաքրիստոնեական է այս բառը, բայց այն, ինչ տածում է մեր հասարակությունը Սերժ Սարգսյանի նկատմամբ, իսկապես, ատելություն է: Ատելություն՝ մեկ անհատի նկատմամբ, որը, հասարակության համոզմամբ՝ իր անտանելի կյանքի գլխավոր մեղավորն է: Ու քանի որ անկախության սերունդն ավելի ազատամիտ է, տարիքի բերումով իրադարձություններին ավելի բուռն ու էմոցիոնալ արձագանքող, ավելի հախուռն ու էնտուզիաստ, Նիկոլը խաղաքարտերը հենց ջահելների վրա էլ դրեց՝ հենվելով նրանց էներգիայի, առաջ մղվելու ձգտումների, նույնիսկ ինքնազոհության պատրաստակամության վրա: Սակայն այսքանով հանդերձ՝ միեւնույն է, անգամ նա չէր սպասում, որ իր նախաձեռնած քայլերթերն ու հանրահավաքներն այսքան բազմամարդ կլինեն: Անգամ քաղտեխնոլոգների կանխատեսած թվերը չէին գերազանցում մի քանի հազարը, լավագույն դեպքում՝ 15 հազար մարդ: Բայց հանրահավաքները ձնագնդիի սկզբունքով մեծացան ու հզորացան, դարձան ձնասար: Մի քանի տասնյակի հասնող հանրահավաքներում ահա թե ինչ տեսա:

Ես տեսա ճաշակով ու բրենդային հագնված հարյուրավոր երիտասարդ ընտանիքների. ամուսինները միասին ամսական ստանում են 2-3 հազար դոլար աշխատավարձ: Նրանք հրապարակ էին եկել ոչ թե հանուն Նիկոլի, այլ հանուն իրենց գաղափարների: Նրանց խնամված արտաքինը, խելացի հայացքները, երեխաների լուսավոր դեմքերը վկայում էին, որ ապրում են կյանքի բարձր արժեհամակարգով՝ մեծ ուշադրություն դարձնելով ինտելեկտի զարգացմանը, մեր երկրի ընդհանուր վիճակի հետ համեմատած՝ չունեն սոցիալական խնդիր, հավանաբար իրենց թույլ են տալիս տարին մեկ անգամ ճամփորդել եւ երեխաներին ուղարկել ոչ թե հանրակրթական, այլ մասնավոր վճարովի դպրոց: Նման ցուցարարների թափառիկ հայացքները սպասողական էին ու անհանգիստ: Հենց նրանք էին կազմում Նիկոլի հանրահավաքների սերուցքը: Ու բնական է, որ հենց նրանք էին գիտակցաբար, գաղափարապես մերժում Սերժին: Որովհետեւ նրանց ընդվզումը պատճառաբանված ու հիմնավորված էր՝ իրենք կիրթ, գրագետ քաղաքացի են, բանիմաց, որակյալ մասնագետ, այլ երկրներում կվարձատրվեին ոչ թե 2, այլ 20 հազար դոլար: Բայց որ ամենաէականն է՝ Սերժին ու առհասարակ Հայաստանի իշխանական ամբողջ համակարգին մերժելու նրանց դրդապատճառը սոցիալական խնդիրը չէր, այլ այն, որ իրենց հայրենիքում նրանք անհեռանկար, լճացած ապագա էին տեսնում: Նրանք ընդվզում էին օրինազանց, անպատժելի վարչակարգի դեմ, ուզում էին, որ իրենց երեխաներն ապրեն արժանապատիվ կյանքով՝ բարոյահոգեբանական առողջ մթնոլորտում, գնահատված ու կարեւորված ոչ թե միայն հարկերը վճարելիս կամ երբ ընտրություններ են, այլ ամեն օր՝ որպես ՀՀ ինքնաբավ քաղաքացի:

Ես տեսա փրփրուն, ոգեւորված, ծովը ծնկներից երիտասարդ ուսանողների, որոնք պատրաստ էին խորտակել ցուցարարի իրենց ճամփան փակող դեկանատներ ու ռեկտորատներ, պատրաստ էին հանուն Նիկոլի անգամ մահապարտ դառնալ: Նրանք ամենաբարձրն էին վանկարկում հավաքների կարգախոսը: Այս եռուն երիտասարդները երկու շաբաթ տան երես չէին տեսել, Նիկոլի երեսը մինչ ցույցերը տեսած չլինելով՝ հաշված օրերի ընթացքում նրան կուռք էին սարքել՝ մտքում երազելով, որ մի տասը տարի հետո իրենք էլ են մորուք պահելու, ուսապարկ կրելու, զինվորականի շապիկ հագնելու եւ փորձելու են իշխանափոխություն անել: Ու երանի՜ թե իրենց աջ ձեռքն էլ փշալարերը չէ, ավելի լավ է՝ ոստիկանի արձակած գնդակը վիրավորի, իրենք վիրակապ դնեն, փաթաթեն ու Նիկոլի պես շաբաթներով այն չհանեն, հերոսանան, աստվածանան, սրբանան:

Ես տեսա այս էնտուզիաստ, բոցավառ երիտասարդների հակառակ սեռին՝ աղջիկ տեսակին նույնպես: Ճիչը՝ բարձր, «Մերժիր Սերժին»-ը՝ անհագուրդ ու խրոխտ: Մանկությանս պատկերացումների լենինյան դրոշակակիր կամ կոմերիտուհի: Երազող աչքերով նայում էին ամբիոնի վրա՝ Նիկոլի կողքին կանգնած նրա կնոջը՝ Աննային ու մտքում ուրվագծում իրենց ընտրյալի նիկոլանման կերպարը: Եվ ուրեմն բոցավառ աչքերով, բոցաշունչ վանկարկումներով առանձնացող այսօրինակ հազարավոր աղջիկ-տղաներն անկասկած Նիկոլի քաղաքական անցյալի մասին ոչինչ չգիտեն: Դե ասենք, մի քանի տասնյակ հազարավոր ցուցարարներին այդ անցյալը չէր էլ հետաքրքրում. նրանք եկել էին ի դեմս երկրի իշխանությունների ու ղեկավարի՝ իրենց համար անընդունելի կերպարին հրապարակավ ո՛չ ասելու, ռեժիմից ազատվելու: Նրանց մեջ պռնկեպռունկ լցված այդ ատելությունն առաջացել է ոչ միայն տարեկիցների շրջանում, բուհում, բակում, բանակում, քաղաքում արժանի ու անարժանի, թիկունքովի ու անթիկունքի միջեւ անարդար ու անհավասար «մենամարտերից». այդ ատելության առաջին սերմերը գցվել են նրանց ընտանիքներում: Իսկ համաձայնենք, որ հատկապես վերջին տասնամյակում հասարակ մահկանացուներս իրավունք ու պատճառ ունենք մինչեւ մեր հոգու խորքը բողոքելու երկրիս իշխանությունների իշխանավարությունից: Եվ ուրեմն Նիկոլը հենվեց քաղաքականապես ոչ հասուն հենց այս էնտուզիաստների թվաքանակի ու մինչեւ վերջ գնալու պատրաստակամության վրա: Այստեղ հիշենք Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմը:

Ես վերհիշեցի Լեւոն Տեր-Պետրոսյանի, Րաֆֆի Հովհաննիսյանի տապալված ցույցերի խաբված մասնակիցներին՝ միջին ու հատկապես ավագ սերունդ, որի երազանքներն առավելապես կապված էին կենսաթոշակները մի-երկու հազար դրամով բարձրացնելու, ամիսը գոնե մեկ անգամ միս ուտելու պայմանական բարեփոխումների հետ: Ի դեպ, հենց Նիկոլին բռնեցին, Րաֆֆին եկավ, իր մասին հիշեցրեց: Նա իհարկե չգրավեց բացակա Նիկոլի տեղը, թեեւ շատ կուզենար: Նիկոլի բացակայությունից փորձեց օգտվել Զարուհի Փոստանջյանը: Բայց դե իր ամուսնուն «ծախված» որակած Փոստանջյանին Նիկոլի կին Աննան չներեց ու բարձրախոսը մեծ ջանքերի գնով խլեց նրա ձեռքից: Սա, իմիջիայլոց, նախկին ու ներկա ընդդիմադիրների մասին: Եվ ուրեմն Րաֆֆիի ու Տեր-Պետրոսյանի հետ այլեւս ոչ մի հույս չկապող միջին ու ավագ սերունդը սկսեց սեփական որդու չափ սիրել Նիկոլին: Ես տեսա այդ ծնողական անկեղծ սերը: Միգուցե Նիկոլի կերպարը նրանց երազանքների տրամաչափը մի քիչ ավելացրել է՝ արդեն ոչ թե մի-երկու հազար դրամով, այլ միանգամից 5 հազար դրամով բարձրացած թոշակ եւ միս՝ ամիսը ոչ թե մեկ, այլ երկու անգամ:

Ես տեսա, որ Նիկոլը ջարդեց ընդդիմադիր քաղաքական գործչի, ցույցեր նախաձեռնողի դասական կարծրատիպը՝ ոչ թե կոստյում ու փողկապ, այլ զինվորականի շապիկ, ուսապարկ, կեպի գլխարկ: Ոչ թե «թող օգնականներս հանրահավաքը կազմակերպեն, ես հետո որպես շեֆ կգամ ու հարմարավետ ամբիոններից իմ բոցաշունչ ելույթը կունենամ»: Ո՛չ, Նիկոլը ճիշտ հակառակն արեց. հանրության վստահությունը շահելու նրա խաղաքարտերից մեկը ցույց տալն էր, թե ես ձեզանից մեկն եմ, հագնվել եմ ավելի հասարակ ու էժան, քան դուք, քայլում եմ ձեր կողքով. մենք նույն հարթության վրա ենք՝ փողոցում ու ես չեմ խորշում դրանից: Նա իր հանրահավաքներին անգամ ձայնային հզոր տեխնիկա չօգտագործեց. ու սա դարձյալ քաղաքական տեխնոլոգիա էր՝ ինձ լսելու համար դո՛ւք, ձեզնից յուրաքանչյուրն ինքնակամ կջանա ավելի մոտ կանգնել ինձ, հավաքվել, խտանալ, լռությունը լարել, որպեսզի իմ ամեն բառը փորձի լսել: Սա հոգեբանական գործոն է: Նիկոլն այդպես էլ չփոխեց իր իմիջը, անգամ ձեռքի փաթաթանը չհանեց: Այդպիսով նա ստեղծեց միայն իրեն հատուկ ու ազդեցիկությամբ անգերազանցելի, տպավորիչ կերպար՝ ազգի փրկչի, հեղափոխականի, չարին հաղթած բարու ինքնակերտ կերպար: Թեեւ պետք է նշել, որ այդ կերպարի կերտման մեջ ակամայից իր ներդրումն ունեցավ նաեւ Սերժ Սարգսյանը: Բերման ենթարկվելու պահից սկսած՝ մինչեւ ազատ արձակում, ամեն րոպե Նիկոլն ավելի ու ավելի հերոսացավ: Նրա որպիսության մասին հասարակությունն ավելի մտահոգ էր, քան սահմանին կանգնած զինվորների: Ու կալանավայրից Նիկոլը դուրս եկավ՝ որպես մեր ժամանակների հերոս, որպիսին համենայն դեպս անկախության շրջանում չէինք ունեցել:




Ես տեսա երեխաների, որոնք ծնողներին նմանակելով՝ անգիր արած կրկնում էին «Քայլ արա, մերժիր Սերժին»: Նրանք հաստատ ճանաչում են ե՛ւ Սերժ Սարգսյանին, ե՛ւ Կարեն Կարապետյանին, Գալուստ Սահակյանին, Գագիկ Ծառուկյանին եւ էլի շատ ու շատ քաղաքական դեմքերի: Բայց, օրինակ, Հովհաննես Թումանյանին, Գրիմ Եղբայրներին, Անդերսենին՝ դժվար թե: Այ այսպիսի քաղաքականացված մանկություն ունեն մեր երեխաները, իհարկե, ոչ լավ օրից: 9 տարեկան աղջկաս համադասարանցի տղան մորը հարցրել է. «Մամ, ինձ 9 տարի մնաց ապրելու, չէ՞»: «Ինչպե՞ս թե, բալես, ինչո՞ւ 9 տարի»,- սարսափել է մայրը: «Դե 9 տարի հետո բանակ եմ գնալու»: Պարզվեց՝ այդ տարիքի երեխաներից շատերն են այսպես մտածում:

Ես տեսա նաեւ դասադուլի մասին դասագրքերում կարդացած ու առաջին անգամ դասադուլին իրական մասնակցած պատանիների, որոնք նույնպես բավականաչափ քաղաքականացված են: Պատանիներն էլ ուսանողների նման հույսեր չեն կապում իրենց հայրենիքի հետ, թե այստեղ լավ ապագայի նախադրյալներ կան: Հարցախույզ արեք ու կհամոզվեք՝ միջակ սովորողից մինչեւ պատանի Նյուտոն, բոլորի գերնպատակը հետագա կրթությունն ու կյանքն արտասահմանում դասավորելն է: Ու այդպես են նրանց ուղղորդում հենց նրանց ընտանիքում: Ուրեմն եւ ծնողները դեմ չէին, որ իրենց անչափահաս զավակները պայքարեն արմատական իշխանափոխության համար:

Ես տեսա մաքուր, ազնիվ, սեփական արժանապատվությունը, ազգային արժեքներն ամեն ինչից վեր դասող հրաշք-բազմության: Նրանք փողոց ու հրապարակ էին դուրս եկել ոչ թե հանուն Նիկոլի, այլ իրենց անկուն կամքը, ոգին, արդար խոսքը վերջապես լսելի դարձնելու համար: Նրանք մեր երկրի շարժիչ ուժն են, պետականության, քաղաքացիական հասարակության կորիզը: Նրանք իրենց խնդիրների, ճնշված ինքնասիրության, անարդարությունների մասին չեն թմբկահարում, նրանք սիրում են իրենց հայրենիքը, ուզում են այստեղ ապրել, բայց իրենց օտարված, ավելորդ չզգալ:

Հին հեքիաթներում թագավորները դերվիշի շորեր հագած՝ հաճախ էին դուրս գալիս, մտնում ժողովրդի մեջ ու պալատականների թաքցրած ճշմարտությունները, իրական իրականությունն այդ կերպ բացահայտում: Ես դերվիշի շորերով թագավոր չտեսա հանրահավաքների ժամանակ, բայց կուզեի տեսնել: Կուզեի, որ ոչ ոք հանկարծ ու հանկարծ չհամարձակվեր շահագործել բազմահազար երիտասարդների ազնիվ մղումները, մաքուր երազանքները, հավատն ու նվիրումն իրենց պայքարին ու հաղթանակին: Կուզեի, որ հանկարծ ու հանկարծ որեւէ մեկը համազգային ընդվզման ալիքը չծառայեցներ իր հակապետական, հակաազգային, բայց սեփական շահերին: Կուզեի, որ այս շարժումը հանկարծ ու հանկարծ ուղղորդված չլիներ ներսի կամ դրսի մութ ուժերի կողմից: Ու նաեւ կուզեի, որ Օմար Խայամի քառյակի ու իմ երկրում տիրող իրավիճակի միջեւ ոչ մի ընդհանրություն չլիներ:

Հավերժության գաղտնիքը մութ
ոչ դու գիտես եւ ոչ էլ ես,
Ոչ դու կարող ես վերծանել
գրերն այս մութ եւ ոչ էլ ես:
Իրականը՝ քողի ետեւ զրույցն է միայն,
Երբ քողն ընկնի, էլ չենք լինի
այս աշխարհում ոչ դու, ոչ ես:

AZG NEW SHABAT.QXD 26/04/2018 22:55 Page 4



ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու

# Հեղափոխությունը եւ նրա զավակները

Հայտնի արտահայտությունը՝ «հեղափոխությունը խժռում է իր զավակներին», պատկանում է Ֆրանսիական հեղափոխության առաջնորդներից Դանտոնին, երբ վերջինիս մահապատժի էին ենթարկում 1894թ. աշնանը։ Սակայն Դանտոնը միակը չէր այս ցուցակում։ Ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո, դրա կազմակերպիչները եւ առաջնորդները մեկը մյուսի հետեւից սկսեցին զոհ գնալ իրենց իսկ կազմակերպած հեղափոխությանը։ 1789թ.-ի Բաստիլի գրավումից հետո Ֆրանսիայում սկսվեց քաոսի ու հեղաշրջումների մի ամբողջ շղթա, որի արդյունքում մեկը մյուսի հետեւից իշխանության էին գալիս հեղափոխական տարբեր խմբավորումներ, որոնք իրենց պարտքն էին համարում ֆիզիկապես ոչնչացնել իրենց քաղաքական ընդդիմախոսներին։

Միայն 1793թ. գիլյոտինին զոհ գնաց 17 հազար մարդ, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում հեղափոխության կազմակերպիչներն ու առաջնորդները։ Ընդհանուր առմամբ մինչեւ 1815թ., որը որոշ պատմաբաններ համարում են ֆրանսիական հեղափոխության ավարտը, այդ երկրում սպանվեց մոտ 2 միլիոն քաղաքացիական անձ։ Իրար հաջորդած հեղաշրջումներին ու դավադրություններին զոհ գնացին հեղափոխության տարբեր ժամանակաշրջանի առաջնորդները՝ Մարատը, Դանտոնը, Ռոբեսպիեռը եւ շատ ուրիշներ։ Ֆրանսիական հեղափոխությունը «խժռում էր իր զավակներին», ու սա դարձավ մի օրինաչափություն, որը հետագայում կրկնվեց այլ երկրներում եւս։

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից շատ չանցած, արդեն 20-ական թվականներին, դրան զոհ գնացին բոլշեւիկյան մի շարք հայտնի գործիչներ, իսկ 30-ականներին, Ստալինի իշխանության օրոք, ձերբակալությունները եւ գնդակահարությունները ԽՍՀՄ-ում արդեն զանգվածային բնույթ էին կրում եւ դրանց առաջին զոհերը հենց ռուսական հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդներն էին, որոնց հետեւեցին բոլշեւիկյան կուսակցության կարկառուն դեմքերը, քաղաքացիական պատերազմում հաղթած զինվորականները եւ զորահրամանատարները։

Սակայն ֆրանսիական ու ռուսական հեղափոխությունները միակը չէին, որ «խժռում» էին իրենց զավակներին։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, հետգաղութային շրջանում, աֆրիկյան եւ արաբական պետություններում տեղի ունեցող իշխանափոխություն-հեղափոխությունները, որոնք շատ հաճախ մեկը մյուսին էին հաջորդում, հանգեցնում էին նրան, որ նախկին հեղափոխական զինակիցները սկսում էին մեկը մյուսին ոչնչացնել։

ԽՍՀՄ-ի փլուզման շրջանում Արեւելյան Եվրոպայում սկսված հեղաշրջումները անվանվեցին արդեն այլ կերպ՝ թավշյա կամ անարյուն հեղափոխություններ։ Նմանատիպ հեղափոխության առաջին օրինակը տեղի ունեցավ 1989թ. Չեխոսլովակիայում։ Ժողովրդական համազգային բողոքի ալիքի հետեւանքով տեղի ունեցած անարյուն հեղաշրջման եւ իշխանափոխության արդյունքում երկրի կառավարումը իրենց ձեռքը վերցրեցին ընդդիմության ներկայացուցիչները՝ հանձին հայտնի դիսիդենտ Վացլավ Հավելի, որին խորհրդարանը ընտրեց երկրի նախագահ եւ ձեւավորվեց նոր կառավարություն։ Հետագայում, սոցիալիստական ճամբարի նախկին պետություններում տեղի ունեցան մի շարք հեղաշրջումներ եւս, որոնք նույնպես կոչվեցին թավշյա, պայմանավորված դրանց խաղաղ բնույթով։

Արդեն 20-րդ դարի վերջին եւ 21-րդ դարի սկզբին Սերբիայում եւ ապա Վրաստանում եւ մի շարք այլ երկրներում տեղի ունեցած հեղափոխությունները կոչվեցին գունավոր։ Վրաստանի դեպքում այն նաեւ անվանվեց վարդերի հեղափոխություն, որի կազմակերպիչը եւ ղեկավարը Միխայիլ Սաակաշվիլին էր։

Սակայն սրանք, խաղաղ հեղաշրջումները, որպես կանոն բացառություններ էին քան օրինաչափություններ. աշխարհում տեղի ունեցած հեղափոխությունների մեծ մասը աչքի են ընկել իրենց դաժանությամբ, քաղաքացիական բախումներով, իրար հաջորդող հեղաշրջումներով եւ ահաբեկչություններով։ Այդ հեղափոխությունները որպես կանոն երկար տարիներով հետ են գցում պետությունների զարգացումը, շատ դեպքերում՝ նաեւ հանգեցնելով դրանց ավերմանը եւ ոչնչացմանը։

Հեղափոխություն կոչվող հաջորդ ալիքը, որը տարածվեց արաբական երկրներում, ստացավ «Արաբական գարուն» անվանումը։ Ի տարբերություն թավշյա հեղափոխությունների, սրանք արդեն արյունալի էին եւ ուղեկցվում էին հսկայական կորուստներով, քաղաքացիական պատերազմներով։ Այդ հեղափոխությունների արդյունքում մի շարք պետություններ՝ Եգիպտոսը եւ Թունիսը մի քանի տասնամյակով հետ ընկան զարգացման իրենց ընթացքից, իսկ Լիբիան եւ Սիրիան քայքայվեցին ու դրանց վերականգնումը որպես մեկ միասնական միավոր քիչ հավանական է։

Սակայն հեղափոխությունների կողմից սեփական զավակներին խժռելու սկզբունքը որպես կանոն պահպանվեց եւ արդեն նրանք, որոնք կանգնած էին այդ հեղափոխությունների ակունքներում, հիմա կա՛մ կենդանի չեն, կա՛մ գտնվում են փախուստի մեջ։ Մեր տարածաշրջանի ամենահայտնի հեղափոխական Սաակաշվիլին որպես քրեական հանցագործ պաշտոնապես որոնվում է երեք պետությունների՝ Վրաստանի, Ուկրաինայի ու Ռուսաստանի կողմից։ Բացի այդ, նրան զրկել են թե՛ Վրաստանի եւ թե՛ Ուկրաինայի քաղաքացիությունից, իսկ ԱՄՆ-ը նրան զրկել է նաեւ իր տարածք մուտք գործելու մշտական վիզայից։

Այս օրերին Հայաստանում ծավալվող իշխանափոխության գործընթացը դիտարկելիս, որը նաեւ թավշյա հեղափոխություն են կոչում, շատ կարեւոր է հասկանալ ոչ միայն դրա հնարավոր ազդեցությունը եւ հետեւանքները մեր պետության վրա (ինչը առանձին վերլուծության թեմա է), այլեւ թե ովքեր են այն ղեկավարում եւ ովքեր են հայկական այս հեղափոխության զավակները։ Քանի որ համաժողովրդական անհնազանդության ալիքն է նրանց բարձրացրել, հետեւաբար այդ ալիքի կատարից վայր ընկնելը կարող է հենց նրանց սպառնալ։

Հանրապետական կուսակցության 20-ամյա իշխանությունը բնակչության մեծ մասի կողմից գնահատվում է չարիք, որը արգելակում էր երկրի զարգացումը, ու թույլ չէր տալիս, որ կատարվեն խորքային բարեփոխումներ։ Հետեւաբար, երբ Սերժ Սարգսյանը փորձեց սահմանադրական փոփոխությունների միջոցով երկարացնել Հայաստանում իր իշխանությունը, սա դարձավ այն վերջին կաթիլը, որը լցրեց բնակչության համբերության բաժակը, ինչը եւ դարձավ համաժողովրդական շարժման պատճառ։


Ժորժ Դանտոն

Նիկոլ Փաշինյանի կողմից այս շարժման ղեկավարումը նույնպես պատահական չէ, ինչպես ցույց է տալիս նախորդ հեղափոխությունների ու հեղաշրջումների փորձը. նմանատիպ անհնազանդության ալիքները որպես կանոն ղեկավարում են իրենց էքսցենտրիկ պահվածքով եւ վարքով հայտնի ու հիշվող անձինք։ Հիշենք թեկուզ նույն Սաակաշվիլիի ֆենոմենը եւ նրա պահվածքը տարբեր իրավիճակներում։ Նմանատիպ անձինք որպես կանոն աչքի չեն ընկնում իրենց ինտելեկտով, սակայն նրանք դա կոմպենսացնում են բնածին, այսպես ասենք, հոտառությամբ, կամ ժողովրդական լեզվով՝ քթածակությամբ, ու կարողանում են շատ ավելի լավ հասկանալ, թե այս պահին ինչ է ուզում փողոցը, եւ փողոցին առաջարկել այն, ինչը ցանկանում են լսել։ Նրանք նաեւ համարվում են պայքարող տեսակ, քանի որ իրենց կյանքը այլ կերպ չեն կարող լցնել, օրինակ՝ ի վիճակի չեն գիտությամբ կամ ասենք լուրջ գրականությամբ զբաղվել։

Հետաքրքրական է, որ նախկինում հայտնի բոլոր էքսցենտրիկ հեղափոխականները որպես կանոն զբաղվել են լրագրությամբ, բայց նաեւ որպես կանոն՝ առանձնապես լավ լրագրողներ երբեք չեն եղել՝ Ռոբեսպիեռ, Լենին, Մուսոլինի, Ֆիդել Կաստրո եւ այլն։ Հայաստանում սկսված ու արդեն թավշյա հեղափոխություն անունը ստացած շարժումը առաջ է քաշել իր զավակներին, որոնց էլ, նույն այդ հեղափոխության կողմից «խժռվելու» հավանականությունն աճում է՝ պայմանավորված նաեւ այդ շարժման հզորացման հետ։

ՍԱՌԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Նյու Յորք

# Զուտ հայկական հեղափոխություն

Հայաստանում տեղի ունեցող թավշյա, շատերի բնորոշմամբ՝ հայկական հեղափոխությունը, աշխարհում ժողովրդավարության հաղթանակի մի փայլուն օրինակ է, այսօր այնքան երանելի շատ երկրների համար։ Այս պայքարով հայ ժողովուրդն աշխարհին կրկին ներկայացավ որպես ազգ-անհատականություն, ազգ-որակ, ով ի վիճակի է մերժելու իրեն պարտադրված սուտն ու բռնատիրությունը։ «Վարդագույն», «Նարնջագույն», «Արաբական գարուն», «Մայդան»... Այն չկրկնեց իր ետեւում արյան բաղնիքներ թողած ոչ մի գունավոր հեղափոխության տարբերակը։ Կար մարտի մեկի դառն ու անամոք հիշողությունը, որի կրկնումից խուսափելու համար երկուստեք ցուցաբերվում է խոհեմություն։ Անշուշտ նման մասշտաբի երեւույթը զերծ չէր լինելու տարաբնույթ սադրանքներից, այնպիսի նսեմ արարքներից, ինչպիսին՝ քաղաքացիական հագուստով ոստիկանների բռնություններն էին երիտասարդների հանդեպ, կամ ոստիկանության կողմից վերաբերմունքը կանանց ու տարեցների նկատմամբ, կամ որոշ ցուցարարների առանց համարանիշով մեքենաներ վարելը մարդաշատ փողոցներում՝ վտանգի ենթարկելով մարդկանց։ Համացանցը գերբեռնված է այսօր հայաստանյան իրադարձությունների մասին հրապարակումներով։ Աշխարհասփյուռ հայությունը քուն ու դադար կորցրած գամված է էկրաններին, «գութ» հայցելով «նորին մեծություն» ինտերնետի արագությունից։ Միջազգային հանրությունն առաջատար լրատուների միջոցով իրազեկվում է Հայաստանում տեղի ունեցող ժողովրդական շարժման յուրաքանչյուր քայլի մասին, բարձրանում է մեր երկրի ժողովրդավարության վարկանիշը։

«Հետխորհրդային այս հեղափոխությունը Ռուսաստանի աշխարհաքաղաքական դերի մասին չէ։ Երբեմն հայկական ցույցերը պարզապես՝ հայկական ցույցեր են։ 1999 թվականից ի վեր Հայաստանում իշխում է մեկ կուսակցություն՝ ՀՀԿ։ Ապրիլին Ս. Սարգսյանի երկրորդ եւ վերջնական ժամկետի ավարտից հետո ՀՀԿ մտահոգ էր իր իշխանության անվերջ վերարտադրման խնդրով»,- գրում է **Թոմաս դե Վաալը** «Foreign Policy» պարբերականում։

«Ես սխալ եմ, Նիկոլ Փաշինյանը ճիշտ է»։ Միջազգային լրատվամիջոցների համար նախկին վարչապետ Սերժ Սարգսյանի այս արտահայտությունն այդպես էլ առեղծված մնաց՝ դիրքորոշման շատ կտրուկ եւ հանկարծակի փոփոխություն էր սա Նիկոլ Փաշինյանին «Մարիոթ» հյուրանոցում բոյկոտելուց հետո։ Թերեւս վերեւներից կտրուկ պարտադրանքը միայն կարող էր ստիպել օգտագործել այս ինքնախարազանող խոսքը, ենթադրում են որոշ վերլուծաբաններ, եթե ոչ, ապա՝ ինչպե՞ս կարող էր տաս տարիների քաղաքական փորձ ունեցող երկրի ղեկավարը այս աստիճանի «զինաթափվել» հակառակորդի առջեւ։ Այդուհանդերձ, պետք է գնահատել արյունահեղությունը կանխող Սերժ Սարգսյանի հրաժարականի քայլը ապրիլի 24-ից առաջ, որպես մեծ կամքի դրսեւորում։

Փաշինյանը ճիշտ է, քանզի նա մտավ ժողովրդի մեջ, ընկավ դռնե-դուռ դեռ 2017-ի խորհրդարանական ընտրությունների ընթացքում, հուսալքված մարդկանց ավետելով իր «Ելքը»։ Իր իշխանության 10 տարիների ընթացքում ե՞րբ է երկրի նախկին ղեկավարը խոսել ժողովրդի հետ՝ «Էլեկտրական Երեւանի» ցույցերի՞ ժամանակ, քառօրյա պատերազմի՞ց հետո, «Սասնա ծռերի» խռովությա՞ն ընթացքում։

Փորձության ժամանակ է ի հայտ գալիս իսկությունը։ Մենք վկաներն ենք այսօր ՀՅԴ հարյուրամյա կուսակցության խայտառակ հեղինակազրկմանը, ի դեմս նրա բյուրոյի եւ ԱԺ երեսփոխանների։ Թե ինչպես տասը տարիների ընթացքում այն կորցրեց ընդդիմադիր կուսակցություն լինելու իր իմունիտետը, դառնալով ՀՀԿ հաճկատարն, ու այսօր էլ, ըստ քաղաքական պատեհության շտապեց երանգափոխվել, դուրս գալով ՀՀԿ-ի հետ խորհրդարանական կոալիցիայից։ Մենք տեսանք ժողովրդին ոչինչ ասել չցանկացող հայերի հոգեւոր առաջնորդ՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի տարօրինակ պահվածքը։ Հիշենք Ն.Ս.Օ Տ.Տ. Վազգեն Առաջինի օրհնությունն ու աջակցությունն իր ժողովրդին մեր ազգի համար բախտորոշ պահին։

Ինչեւէ, քաղաքակիրթ ժողովրդի մեր դարավոր իմաստությունը մեզ թույլ չպետք է տա վերածվելու Եգիպտոսի կամ Ուկրաինայի։ ՀՀԿ-ի դեմ պայքարն էլ չպետք է ուղեկցվի սեւ ու սպիտակի մերժողությամբ, ատելությամբ, վհուկների որսով։ Կարեւոր է, որ չկրկնվեն ՀՀՇ-ական քաոսն ու ապաշնորհ մարդկանց պորտֆելավորման ժամանակները։ Այսօր եզակի պատմական պահի ենք ականատես բոլորս, եւ ամենքի պարտքն է Հայաստանում եւ Սփյուռքում մասնակցել մեր հզոր, ուժեղ Հայոց պետության կերտմանը։

Իսկ Թրամփն այս անգամ էլ չարտասանեց «ցեղասպանություն» բառը։ Աստված իր հետ, մեր կառուցվելիք ամուր Հայաստանով մի օր կստիպենք այդ անել ոչ միայն Թրամփին...

AZG NEW SHABAT.QXD 26/04/2018 22:55 Page 5



ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# «Հեղափոխությունը թոռնիկ չէ»...




Հեղափոխությունն ու իշխանությունը մի շարք ընդհանրություններ ունեն. երկուսի դեպքում էլ օգտվում են նրանք, ովքեր արժանի չեն, երկուսի երկար ձգվելուց էլ համը դուրս է գալիս, երկուսից էլ՝ մինչեւ հանցագործություն մեկ քայլ է, եւ վերջապես երկուսում էլ խուժանությունը շատ է, այնքան շատ, որ եթե իշխանություն է, դրա դեմ ելնում են, եթե հեղափոխություն է, դրանից հիասթափվում են:

Ճիշտն ասած, հեղափոխություն ասելիս՝ նկատի չունեմ Հայաստանում վերջին օրերին տեղի ունեցածը, որը, չնայած ոչ պակաս հետաքրքրական է, քան յուրաքանչյուր հեղափոխություն:

Թերեւս կարիք չկա հիշեցնելու, թե որ օրը եւ ժամը քանիսին Գագիկ Ծառուկյանը որոշեց միանալ «հեղափոխականներին»: Միայն հիշեցնեմ, որ այս պատմական միացումից մի քանի րոպե հետո Սերժ Սարգսյանը հրաժարական տվեց: Երեւի պետք չէ նաեւ հիշեցնել, թե ի՞նչ էր խոսում Նիկոլ Փաշինյանը՝ Գագիկ Ծառուկյանի մասին մինչեւ հեղափոխությունը: Նաեւ այն պետք չէ հիշեցնել, որ պարոն Ծառուկյանը ամենադասական օլիգարխն է, ըստ որոշ տվյալների՝ դրանց բոլորի «պապան», իսկ օլիգարխիայի դեմ այս «հեղափոխությունը» պայքարում է, ամեն դեպքում մարդիկ ասում են, որ նոր Հայաստանում, որ արդեն եկել է, պարզապես դեռ չի երեւում, օլիգարխներ չեն լինելու: Հիմա նրանց «պապան» հեղափոխականների կողքին է: Նրանց հետ է նաեւ Արթուր Բաղդասարյանը, նրանց հետ է արդեն նաեւ ՀՅԴ-ն, շուտով նրանց կողքին կլինեն թաղային հեղինակությունները, մի խոսքով՝ այն ամենն ու բոլորը, որոնք ՀՀԿ-ի հետ էին, այսօր հեղափոխականների կողքին են: Ստացվում է, որ սա իրոք «ազգային հեղափոխություն» էր, բայց որեւէ մեկին չի հետաքրքրում, լավ, բայց ո՞ւմ դեմ, ի՞նչը փոխելու համար, եթե օլիգարխներն էլ են մնում, թաղային հեղինակություններն էլ, պարոն Ծառուկյանի միլիոններն ու առյուծներն էլ, նույնիսկ Գյումրիի նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանի գլխարկն է մնում, եւ Արթուր Բաղդասարյանի մուրաբաներն ու երազանքները: Լավ, ի՞նչը փոխեցիք: Վարչապետի՞ն, շատ լավ, է՞լ... Մինչ կմտաբերեք, ասեմ, որ հեղափոխությունից հետո Հայաստանում երթուղայիններում էլի ճխլված են գնում, տատիկներն էլի կանգնած նայում են, թե ինչպե՞ս են հանգիստ նստած հաղթանակած երիտասարդները, որոնց ցավն այս օրերին այնքան շատ ու շատերը տարան, որ ինձ թվում է Հայաստանում մի քանի սերունդ այլեւս ցավ չի ունենալու:

Չէ, ես հասկանում եմ, որ օրինակ տրանսպորտի հարցը լուծելու համար «հեղափոխականներին» ժամանակ է պետք, որպեսզի նրանք սափրվեն, հանեն զինվորական համազգեստը, ուսապարկը, վարդի բույրով օճառով լոգանք ընդունեն, հագնեն իրենց կոստյումները, գան ԱԺ, ընտրվեն վարչապետ, ձեւավորեն կառավարություն ու օրինագծեր ուղարկեն ԱԺ, որոնցով մեր կյանքը կբարգավաճի, սառնարանները կլցվեն, բոլորս կսկսենք ընտիր մեքենաներ քշել՝ ընդ որում արագաչափեր չեն լինի, քանի որ դրանք հեղափոխության օրերին կացիններով ջարդել ենք ու պետհամարանիշեր չեն լինի, որովհետեւ առանց դրանց էլ հեղափոխության օրերին լավ քշել ենք:

Չէ, լուրջ. ի՞նչ կարիք կա կարգուկանոնի, չէ՞ որ դրա բացակայությունը երկրում անվանում են «ժողովրդի հաղթանակ»: Բայց խուժաններին հաստատ կպատժեն, սրանում չկասկածեք: Կպատժեն, քանի որ ամեն հեղափոխություն բերում է իր խուժաններին ու որպեսզի նոր խուժանները կարողանան խուժանություն անել, հները պետք է պատժվեն: Չէ, «հեղափոխականները» մեղավոր չեն, որ իրենց հետ Բաղրամյան փողոցի շենքեր են լցվելու խուժանները, մեղավոր չեն, քանի որ այդ շենքերը առանց նրանց չեն լինում: Պարզապես ոչ մի հեղափոխություն խուժանությունից չի ազատում, լինի այն կարմիր, նարնջագույն, թե թավշյա:

Կոնկրետ՝ Նիկոլի «հեղափոխությունը» մեզ նաեւ օլիգարխներից չի ազատում: Նրանցից ոմանց գործերն, իհարկե, կվատանան, ոմանց հնարավոր է ոտքով հարվածեն, որպեսզի նրանք զգան, թե ինչ են զգում, երբ ոտքով հարված են ստանում, ուրիշներին հնարավոր է արգելեն զբաղվել, օրինակ ֆուտբոլով, որ հասկանան, թե ինչ է նշանակում մեծ ֆուտբոլին կողքից նայելը, բայց սա չի նշանակում, որ օլիգարխիան երկրում անհետանալու է: Կան օլիգարխներ, որոնք բարի հոգի ունեն ու միշտ ուրախ են ու հպարտ, որ ժողովրդի կողքին են: Մի խոսքով, Չե Գեւարան, որը մեր Նիկոլից տարբերվում է, օրինակ նրանով, որ հեղափոխություն է արել, մի անգամ ասել է՝ «Հեղափոխությունը թոռնիկ չէ, որ ով երբ ուզի՝ անի»:

# Նիկոլ Փաշա՞

Երբ ընկեր Բ. Փանջունին փոքրիկ երեխա էր, ամեն ինչ քանդում էր: Երբ փոքրիկ Փանջունիին հարցնում էին, թե ի՞նչ է անում, նա ասում էր՝ շինում եմ:

Հիմա, ինչպես հասկանում եք, Նիկոլ Փաշինյանը շինում է մեր երկիրը: Նա հենց այդպես էլ ասում է՝ բավական է, որքան շինեց ՀՀԿ-ն, հիմա իմ շինելու ժամանակն է: Ու ժողովրդի հետ, որի թվի մասին դեռ կխոսենք, շրջում է թաղից՝ թաղ ու շինում: Օրինակ, երբ հայտնի դարձավ, որ Սերժ Սարգսյանը հրաժարական է տվել, ես Աբովյան պուրակում էի, հիվանդանոցի մոտ: Հիվանդներն իրենց սենյակների պատուհաններից թաշկինակներ էին թափահարում՝ ողջունելով քաղաքի տոնական իրարանցումը: Հիվանդները, նրանք՝ ովքեր որպես կանոն տանել չեն կարողանում աղմուկը: Սա եւ առհասարակ ապրիլի 23-ի Երեւանը թերեւս լավագույն գնահատականն է՝ Սերժ Սարգսյանի իշխանության տարիների, եթե հարցին ռոմանտիկ մոտենանք:

Բայց եթե մի կողմ դնենք ռոմանտիկան, ապա վերջին երկու շաբաթվա ընթացքում Հայաստանում տեղի ունեցավ միայն երկու ուշագրավ բան: Սերժ Սարգսյանը հրաժարական տվեց՝ ընդունելով, որ ինքը սխալվել է, եւ Հանրապետության՝ լեփ-լեցուն հրապարակը բղավեց՝ Նիկոլ-Նիկոլ-Նիկոլ: Հիմա, ինչպես պնդում են նրանք, ովքեր վստահ են, որ այս ամենը նախօրոք պատրաստված սցենար չէր, պայքարի վերջնական փուլն է: Ճիշտ է, այդ նույն մարդիկ չեն բացատրում, թե իրենք որտեղի՞ց գիտեն, որ սա պայքարի վերջնական փուլն է, եթե ամեն ինչ նախօրոք ու մանրամասն մշակված չէր: Ինչեւէ: Ինչպես Նիկոլ Փաշինյանն է ասում՝ հիմա ժողովուրդը պահանջում է, որ ՀՀԿ-ն էլ հեռանա, դե այսինքն իշխանությունն անցնում հանձնի ժողովրդի կողմից ընտրված վարչապետին, որը կկազմի ժամանակավոր կառավարություն, հետո ԱԺ-ն, որին ամենեւին էլ ժողովուրդը չի ընտրել, կլուծարվի, կնշանակվեն նոր ԱԺ ընտրություններ, ժողովուրդը կընտրի խորհրդարան, որն էլ իր հերթին՝ վարչապետ: Սա, ինչպես ասում են, ժողովրդի օրակարգն է:

Ես իհարկե ներողություն եմ խնդրում ժողովրդից, բայց օրինակ եթե մեկ այլ ժողովրդի, ասենք՝ շվեդներին ասենք, որ հայ ժողովուրդը պահանջում է ժողովրդի կողմից ընտրված վարչապետ, ապա մարդիկ բարձր կծիծաղեն, չնայած այն հանգամանքին, որ շվեդները որպես կանոն բարձր չեն ծիծաղում: Բացատրեմ, ՀՀ Սահմանադրությունը, որի դեմ, կարծես թե ոչ Նիկոլ Փաշինյանը, ոչ էլ ժողովուրդը որեւէ բան չունեն, սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության վարչապետին ընտրում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, ընդ որում, վարչապետի թեկնածու կարող է առաջադրել միայն խորհրդարանում մեծամասնություն կազմած ուժը (լինի դա առանձին կուսակցություն, թե կոալիցիա): Այսինքն ՀՀ Սահմանադրությունը չի սահմանում, որ վարչապետին ընտրում է ժողովուրդը, բայց եթե անգամ սահմաներ, ի՞նչ է նշանակում ժողովրդի կողմից ընտրված վարչապետ: Ժողովուրդը որքա՞ն է: Եթե հավատանք ՀՀԿ-ին, 3 միլիոնից մի փոքր ավելին, եթե հավատանք սեփական աչքերին՝ շուրջ 2 միլիոն, այսքանից քանի՞ տասնյակ, լավ՝ հարյուր հազարն են Հանրապետության հրապարակում «Նիկոլ» բղավել: Հարյո՞ւր, երկու հարյո՞ւր, լավ կես միլիոնը...քիչ չէ՞, որպեսզի ժողովուրդ կոչվի: Գուցե Նիկոլ Փաշինյանի կարծիքով ժողովրդի այն հատվածը, որը «Նիկոլ» չի բղավում, ժողովուրդ չէ՞, բայց սա դեռ ոչինչ, գուցե Հանրապետության հրապարակում հավաքված՝ լավ կես միլիոն ժողովրդի համար մյուսները ժողովուրդ չե՞ն:

⇨10

# Հարգելի պարոն ժողովրդական վարչապետ

**Եւ այսպես՝ Հանրապետության հրապարակը պետք է տա վարչապետի անունը: Թեկնածուները շատ չեն, ժողովրդի կողմն անցած առաջին ոստիկանը, որին բացի վարչապետի պաշտոնից, նաեւ 10 հազար ԱՄՆ դոլար են խոստացել, Իռան, որը տանը սպասում է իր ամուսնուն, որն իր հերթին հեղափոխություն է անում եւ ուշ է գնալու տուն, հենց այդ ամուսինը, որը ուղիղ եթերում (ի դեպ՝ հայաստանյան հեղափոխությունը հեռարձակվում էր եւ է ուղիղ եթերով), հայտարարեց, թե՝ «Իռա, էսօր ուշ եմ գալու տուն», այն փոքրիկ տղան, որը մի անգամ ելույթ ունեցավ հրապարակում, քանի որ երեխաներն էլ իրավունք ունեն եւ նրանք էլ են «մերժում Սերժին», եւ վերջապես՝ Նիկոլ Փաշինյանը: Այս բոլորից Հանրապետության հրապարակն ընտրեց Նիկոլ Փաշինյանին, ամեն դեպքում՝ հրապարակը բղավում էր «Նիկոլ», ճիշտ է, ոչ բոլորը, բայց դա երկրորդական հարց է:**

**Ավելի ուշ, բացառապես օտարերկրյա լրատվամիջոցների հետ ասուլիսին, Նիկոլ Փաշինյանն ասաց, որ եթե ժողովուրդն իր վրա դնի վարչապետի պարտականությունները, ապա ինքը պատրաստ է: Իսկ ժողովուրդը դրեց, այն նույն ժողովուրդը, որը 2008-ին, 2009-ին, բղավում էր «Լեւոն-նախագահ», այդ թվում՝ Նիկոլ Փաշինյանի հետ միասին, այն նույն ժողովուրդը, որը 2013-ին բղավում էր «Րաֆֆի-նախագահ», այսօր բղավում է «Նիկոլ-վարչապետ», բայց սա էլ երկրորդական հարց է, ինչպես նաեւ այն, թե ինչո՞ւ է Փաշինյանը ասուլիս անում միայն օտարերկրյա լրատվամիջոցների համար, ու այս առումով՝ ինչո՞ւ չի տարբերվում, օրինակ Սերժ Սարգսյանից:**

**Կարեւորն այս պարագայում մեկ այլ բան է՝ հարթակը, որտեղ կանգնած են Նիկոլ Փաշինյանը, Համլետ Ղուշչյանը, Կարգին Հայկոն, Արարատ Միրզոյանը, Սասուն Միքայելյանը, ...տրամաբանում եմ, որ Նիկոլ Փաշինյանի, որը, հիշեցնեմ, ժողովրդական վարչապետն է, ապագա կաբինետը: Ի դեպ, այդ կաբինետի կազմի մասին որեւէ մեկը Փաշինյանից ինչ-որ բան լսե՞լ է: Ասենք, երբ նա դառնա ժողովրդական վարչապետ, ո՞վ է լինելու պաշտպանության նախարարը, իսկ արտաքին գործերի՞նը, մշակույթի՞նը: Հասկանալի է, Կարգին Հայկոն կլինի ու ամեն Նոր տարի, վարչապետ Փաշինյանի ուղերձից հետո, կցուցադրվի մշակույթի նախարարի հեղինակած հերթական «Սուպերմաման», բայց կոնկրետ ՊՆ-ն ու ԱԳՆ-ն ովքե՞ր են ղեկավարելու: Ինչո՞ւ պարոն ժողովրդական վարչապետն այս մասին չի խոսում, չունի՞ կադրեր, թե՞ վստահ է, որ եթե նրանց անունները տա, հազիվ թե հրապարակը բղավի՝ «Նիկոլ-վարչապետ»: Լավ, ո՞րն է Նիկոլ Փաշինյանի թիմը, եթե այն հարթակն է, ապա կներեք, բայց այդ թիմը մի տեսակ վստահություն չի ներշնչում, ու որպեսզի ճիշտ հասկացվեմ՝ ավելի վստահելի չէ, քան Սերժ Սարգսյանի կաբինետն էր, եթե Փաշինյանն իր նախարարներին պետք է ընտրի իր եւ Սերժ Սարգսյանի սիրած երիտասարդներից, ապա ես վախենում եմ, քանի որ նախարար լինելու համար պետք է գոնե մեկ բուհ ավարտած լինես, իսկ տվյալ պարագայում՝ գոնե դպրոց... Լավ, ունի՞ Փաշինյանը քաղաքական թիմ, որը հենց վաղը պատրաստ է անցնել աշխատանքի ու դա ավելի լավ անել, քան ՀՀԿ-ականներն էին անում: Գուցե պարոն Փաշինյանն այնքան եռանդ ունի, որ բոլորի փոխարեն ինքն է աշխատելու, եթե այդպես է, ապա ինչո՞ւ էր դեմ Սերժ Սարգսյանին, չէ՞ որ վերջինս էլ բոլորի փոխարեն էր աշխատում, կամ որոշում:**

**Եւ մի հարց էլ. գիտի՞ արդյոք պարոն ժողովրդական վարչապետը, որ օրինակ Չինաստանը կամ Հյուսիսային Կորեան կոչվում են ժողովրդական Հանրապետություններ, սակայն Սի Ցինպինին ու Կիմ Չեն Ընին անվանում են բռնապետ... Ընդ որում, եթե որեւէ հյուսիս-կորեացու պատահական հանդիպես ու հարցնես, թե ո՞վ է քո առաջնորդը, նա առանց տատանվելու եւ սիրով կասի՝ Կիմ Չեն Ընը: Ուրեմն գիտի՞ արդյոք պարոն Փաշինյանը, որ ժողովրդի լիակատար աջակցությունն ունեն միայն բռնապետները, իսկ ժողովուրդը սա գիտի՞...**

Հ. ԱՖՅԱՆ

AZG NEW SHABAT.QXD 26/04/2018 22:55 Page 6



# Տնտեսական վերականգնման համաժողով Ղրիմում

Օրերս Յալթայի միջազգային տնտեսական համաժողովի շրջանակներում անցկացվել է Սիրիայի տնտեսության վերականգնմանը նվիրված ռուս-սիրիական կոնֆերանս: Ներդրումներ են նախատեսվում այն երկրներից, որոնք սիրիացիների հետ կողք-կողքի պայքարել են ահաբեկչության դեմ, հայտարարել է Սիրիայի տնտեսության նախարար **Սամեր Ալ-Խալիլը**: Նրա խոսքերով, երկրի վերականգնմանը չպետք է մասնակցեն նրանք, ովքեր մասնակցել են Սիրիայի ժողովրդի դեմ կազմակերպված արյունահեղությանը եւ այժմ էլ շարունակում են դա:

Արժույթի միջազգային հիմնադրամի հաշվարկներով, Սիրիայի տնտեսության վերականգնման համար պահանջվում է առնվազն 200 մլրդ դոլար: Նախագահ **Բաշար Ասադը** վերականգնման ծախսերը գնահատում է 400 մլրդ դոլար: Նրա կարծիքով, այդ աշխատանքները կտեւեն 10-15 տարի: Վերականգնման գործընթացի առաջին շարքերում Ռուսաստանն է: Ղրիմի Հանրապետության ղեկավար **Սերգեյ Աքսյոնովը** հայտարարել է, որ կոնֆերանսի ընթացքում ստորագրվել են 62 մլրդ ռուբլի ընդհանուր արժողությամբ ներդրումային համաձայնագրեր: Խոսքը միայն ռուսական ներդրումների մասին չէ: Սիրիացի գործարարները իրենց հերթին պատրաստ են ներդրումներ կատարել Ղրիմի տնտեսության մեջ: Խոսքը մասնավորապես հյուրանոցի կառուցման մասին է:

Գերմանիայի Բունդեսթագի պատգամավոր **Վալդեմար Գերդտը** Յալթայի համաժողովում ընդգծել է, որ իր երկիրը չի մասնակցում սիրիական հակամարտությանը, բայց դրա տնտեսությունը անմիջականորեն կապված է կարգավորման հետ: «Գերմանիայում ներկայումս կա 2 մլն սիրիացի փախստական»: Պատգամավորի խոսքերով, իր երկիրը արդեն ավելի քան 100 մլն դոլար է ծախսել այդ մարդկանց պատշաճ կերպով ընդունելու համար: Գերմանիան պատրաստ է օժանդակել այն սիրիացիներին, որոնք կուզենան հայրենիք վերադառնալ՝ վերակառուցմանը նպաստելու համար: Մասնավորապես նախատեսվում է ստեղծել համատեղ գերմանա-սիրիական ձեռնարկներ: Երկուսուկես հազար սիրիացիներ արդեն դրանց մասնակցելու պատրաստակամություն են հայտնել: Պատգամավորն առաջարկել է համանման կոնֆերանս անցկացնել նաեւ Գերմանիայում:

Ղրիմում ռուս-սիրիական կոնֆերանսի անցկացումը բացատրվում է նրանով, որ թերակղզին, որպես ՌԴ սուբյեկտ, ամենից մոտ է գտնվում Սիրիային: Թերակղզին կարող է տրանսպորտային կարեւոր հաղորդակցությունների մեկնարկ ծառայել եւ ռուս-սիրիական համագործակցության կամուրջ դառնալ: Այս տարի Ղրիմում կկառուցվի ավտոմոբիլային կամուրջ, եկող տարի՝ երկաթուղային, իսկ հեռանկարում նախատեսվում է բացել հաղորդակցություն Սիրիայի խոշորագույն նավահանգիստ Լաթաքիայի եւ ՌԴ սեւծովյան նավահանգիստների միջեւ:

ՌԴ Դաշնության խորհրդի անդամ **Օլգա Կովիդիտին** կարծում է, որ սիրիացի ապագա կառավարիչները պետք է կրթություն ստանան Ռուսաստանում, այլ ոչ թե ԱՄՆ-ում կամ Մեծ Բրիտանիայում: Սիրիացի պատանիները Ռուսաստանում կրթություն կստանան ոչ միայն զինվորական, այլեւ քաղաքացիական մասնագիտությունների գծով, գրում է Международная жизнь հրատարակչությունը:

Միջազգային տնտեսական համաժողովում Ռուսաստանի հետ կապերի ընդլայնման օգտին հանդես է եկել Բունդեսթագի պատգամավոր **Մարկուս Ֆրոնայերը**: Փոխադարձ պատժամիջոցների հետեւանքով Գերմանիայի կրած վնասը նա գնահատել է 100 մլրդ դոլար: Պատժամիջոցների վերացում առաջարկելով՝ նա ընդգծել է, որ Արեւմուտքի կառավարությունները Սիրիայի հարցը եւ Սկրիպալների թունավորման դեպքը օգտագործում են Ռուսաստանի դեմ ուղղված պատժամիջոցների քաղաքականությունը շարունակելու նպատակով: Եկկողմ հարաբերությունների բարելավումը միայն կնպաստի երկու երկրների շահերին, նշել է պատգամավորը:

## *Ֆրանսիական թերթը Մոսկվայի համար Սիրիայի կարեւորության մասին*

Արժե նշել, որ Սիրիայում պատերազմ սկսվելուց յոթ տարի անց Մոսկվան շարունակում է պաշտպանել Բաշար Ասադի վարչակարգը: Le Journal Du Dimanche ֆրանսիական թերթի լրագրողուհի **Ջոյա Լաստենեն** դա բացատրում է հետեւյալ կերպ:

1. Ռուսաստանն իրեն համարում է Արեւելքի քրիստոնյաների պաշտպան: Պատմաբան Պիշոնը իր «Սիրիա. ո՞րն է Ռուսաստանի խաղադրույքը» գրքում գրում է, որ Կրեմլը եւ Ռուսաստանի ուղղափառ եկեղեցին Սիրիայում իրենց դերը տեսնում են արաբական աշխարհում քրիստոնյա փոքրամասնությանը պաշտպանելու մեջ:

2. Սիրիայում Ռուսաստանի տնտեսական շահերն ունեն կարեւոր, բայց ոչ վճռական նշանակություն: Սիրիական Թարթուս նավահանգիստը Միջերկրական ծովում նավարկող ռուսական ռազմանավերի միակ ռազմակայանն է եւ միակ ելքը դեպի «տաք ծովեր»: Լաթաքիայում գտնվող ավիաբազան Ռուսաստանի երկրորդ հենակետն է տարածաշրջանում, նշում է թերթը: Բաշար Ասադի վարչակարգը ռուսական զենքի համար գնորդ է: Սա կարեւոր խաղադրույք է, բայց ամենագլխավորը չէ, ընդգծում է **Ֆրեդերիկ Պիշոնը**:

3. Հաջորդ պատճառը Սիրիայի անկայունության հնարավոր տարածումն է Ռուսաստանի հարեւան շրջաններում: Ռուսաստանը շատ դատողություններ է անում բուֆերային գոտիների տերմիններով, պարզաբանում է Ռազմավարական հետազոտությունների փարիզյան հիմնադրամի փորձագետ **Իզաբել Ֆակոնը** Le Journal Du Dimanche-ին տված հարցազրույցում: Ռուսաստանը փորձում է վերահսկողության տակ պահել հարեւան երկրները ի դեպս անկայունության ծագման:

Հետխորհրդային տարածքում արմատական իսլամի տարածմանը խոչընդոտելու վերաբերյալ Մոսկվայի հռչակած կարգախոսը լոկ պատրվակ է, չխոսելով արդեն Ռուսաստանում կամ նախկին խորհրդային այլ հանրապետություններում գործող ջիհադիստական խմբավորումների մասին: Այդ պատճառով **Վլադիմիր Պուտինը** «արաբական գարնան» ալիքներն ընկալեց որպես իր երկրի դեմ ուղղված սպառնալիք:

4. Ի հեճուկս ամերիկացիների աշխարհակալական նկրտումների, Ռուսաստանն ուզում է լինել ավելին, քան տարածաշրջանային տերությունն է: Սիրիայում Ռուսաստանի միջամտության մեջ Իզաբել Ֆակոնը տեսնում է Բարաք Օբամայի խոսքերի ուղղակի հետեւանքը: Օբաման 2014 թ. Ռուսաստանն անվանել էր տարածաշրջանային տերություն: «Ռուսաստանն ուզեց ԱՄՆ-ին ցույց տալ, որ ինքը տարածաշրջանային տերություն չէ եւ կարողանում է միջամտել, երբ դիպչում են իր շահերին»:

Պուտինյան Ռուսաստանը նաեւ ձգտում է իրեն վերադարձնել այն տեղը, որն ինքը աշխարհակարգում զբաղեցնում էր նախքան Խորհրդային Միության փլուզումը: Կրեմլը փորձում է թուլացնել ամերիկացիների շոշափելի ազդեցությունը, որպեսզի ակտիվորեն զարգացնի բազմաբեւեռ աշխարհը: Այս կապակցությամբ երկիրը գործընկերների կարիք ունի: Վերջիններիս նա փնտրում է Սիրիայի, Իրանի, Չինաստանի եւ այլ երկրների հետ իր հարաբերություններում, գտնում է Լաստենեն:

Սիրիայում միջամտելու միջոցով՝ Մոսկվան նաեւ ձգտում էր Արեւմուտքի երկրներին դրդել իր հետ երկխոսության, կարծում է Իզաբել Ֆակոնը: Փորձագետի կարծիքով, տեղի է ունեցել հիասթափություն «միջակա առավելությունների հարցում»: «Խոսքը հակառուսական պատժամիջոցների մասին է, որոնք, բնավ չվերացվեցին, եւ Արեւմուտքի երկրները չեն մոռացել Ուկրաինայի դեպքերի մասին»:

5. Ռուսաստանը վախենում է իր ազդեցության ոլորտում վարչակարգի փոփոխությունից: Ամեն գնով հարկավոր է խուսափել վարչակարգի կտրուկ փոփոխությունից: Ըստ պատմաբան Ֆրեդերիկ Պիշոնի, այդ հարցն իրենից ներկայացնում է Սիրիայի հակամարտության նախընտրելի փաստարկը: Դա հաստատում է Իզաբել Ֆակոնը. «Ռուսաստանի կարծիքով՝ Արեւմուտքի երկրները վերստին ձեռնարկում են վարչակարգի փոփոխման գործողություններ: Մոսկվան գտնում է, որ վերջին տարիներին ինքը տեսել է մի ամբողջ շարք գունավոր հեղափոխություններ՝ Վրաստան, Ուկրաինա, Կիրգիզիա, Լիբիա, Իրաք եւ Լիբանան»: Արեւմուտքի ակնհայտ ազդեցությամբ պայմանավորված նման իրադարձությունները այդ բոլոր երկրներին հեռացրեցին Ռուսաստանի ազդեցության գոտուց:

6. Ռուսները մերժում են պաշտպանության նպատակով միջամտելու Արեւմուտքի պնդումները: Ազդեցությունը կորցնելու վախից բացի, Սիրիայում առկա է արժեքների հակամարտություն: Ռուսաստանը խիստ կասկածամտորեն է վերաբերվում պաշտպանությանն ուղղված պատասխանատվության սահմաններին, որոնք դրվում են Արեւմուտքի միջամտության արդարացումների հիմքում: Նրա կարծիքով, օգտագործվող չափանիշները չափազանց անհուսալի են:

Ռուսաստանը հիասթափված է Լիբիայի պատերազմի նախադեպից, նշում Լաստենեն: Կրեմլը Մուամմար Քադդաֆիի սպանության փաստի մեջ տեսնում է ՄԱԿ-ի բանաձեւերի խախտում եւ այդ ժամանակվանից ի վեր վետո է դնում Սիրիայում ՄԱԿ-ի անունից Սիրիայում առաջարկվող ամեն տեսակ գործողությունների վրա:

Պ.Ք.

# Աջակցություն երեխաներին՝ լաւ ապագա կերտելու համար

**Իր հիմնադրման օրից Հայ եկեղեցին միշտ կանգնած է եղել որբի, այրու, կեղեքյալի եւ աղքատի կողքին: Եկեղեցին թանգարանացած վայր չէ, այլ այն կենդանի, շնչող ու սփոփարար սպեղանի է յուրաքանչյուր հայորդու համար:**

**Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան թեմը, իր առաջնորդի՝ Հովնան արք. Տերտերյանի գլխավորությամբ, բազմապիսի օժանդակություններով նեցուկ է կանգնում հայ մանկանը, երիտասարդին ու ընտանիքին: Այդ օժանդակություններից մեկն է «Էջմիածնի երեխաների հիմնադրամ»ը, որը նյութական օժանդակություն է տրամադրում Հայաստանում ապրող ծնողազուրկ եւ կարիքավոր երեխաներին:**



**Հիմնադրամը հիմնված է թեմի նախկին առաջնորդներից՝ Վաչե արք. Հովսեփյանի օրոք, սակայն այն վերջին տարիներին նոր թարմությամբ աննախադեպ վերելք ապրեց: Հիմնադրամի ատենապետներն են տեր եւ տիկին Սայաթ եւ Հերմինե Օրունճաքչիէլները:**

**2016 թվականն էր, երբ «Էջմիածնի երեխաների հիմնադրամ»ը ծնունդ տվեց «Մանկապարտեզի ծրագրի»ն, որի գործունեությունը ծառայեց նաեւ գյուղական շրջաններում մանուկների համար առողջ կրթական միջավայր ստեղծելու գործին: Օրինակ. Հիմնադրամը հովանավորում է Քարակերտի Գրիգոր Նարեկացի հոգեւոր-մշակութային կենտրոնի 30 երեխաների սննդի տարեկան ամբողջական ծախսերը: Կենտրոնի տնօրեն Աննա Ղուկասյանը մեր հետ ունեցած հարցազրույցի ընթացքում դրվատելով հիմնադրամի գործունեությունը՝ ասաց. ««Էջմիածնի երեխաների հիմնադրամ»ի շնորհիվ մեր երեխաները լիարժեք սնվեցին եւ իրենց առօրյան անցկացնում են եւ անցկացնելու են ավելի ջերմ ու գունեղ միջավայրում: Առ այդ, իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում Հովնան սրբազանին, ողջ անձնակազմին, այս ծրագրին նպաստողներին, որոնք իրենց ուժն ու կորովն են ներդրել այս ծրագիրը կյանքի կոչելու համար, եւ այն բոլոր աստվածահաճո ծրագրերն ու նպատակները, որոնք ուղղված են մեր հայրենիքի մատաղ սերնդի քրիստոնեական դաստիարակությանը: Թող Աստված պահի ու պահպանի հայրենիքիս նկատմամբ նման մարդկանց գործունեությունը եւ երջանկություն պարգեւի մեր մատաղ սերնդին»:**

**«Էջմիածնի երեխաների հիմնադրամ»ը իր գործունեությունն է ծավալել նաեւ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ գյուղում, որտեղ թիվ 5 մանկապարտեզը գտնվում էր անմխիթար վիճակում: Նշենք, որ Ճամբարակ գյուղը Ադրբեջանի սահմանից ընդամենը 1 կիլոմետր հեռավորության վրա է տեղակայված: Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան թեմը, համագործակցելով Գեղարքունիքի թեմի եւ քաղաքապետարանի հետ, 2017 թվականին հիմնովին նորոգեց մանկապարտեզի տանիքը: 2018-ին, Հիմնադրամը Հովնան արք. Տերտերյանի նախաձեռնությամբ, որոշել է նաեւ նույն մանկապարտեզի դռներն ու պատուհանները փոխարինել նորով՝ մանուկներին ցուրտ եղանակից զերծ պահելու եւ նրանց տաքուկ «օջախ» պարգեւելու համար:**

**Հիմնադրամը բարձր գիտակցությամբ եւ նախանձախնդրությամբ գործում է ու պիտի շարունակի գործել, գործունեություն, որ ազգանվեր ծառայություն է յուրաքանչյուր հայ երեխայի նկատմամբ: Նվիրատվություն կատարողը պետք է գիտակցի, որ նա ո՛չ միայն անմեղ երեխաների կյանքն է բարելավում եւ լավ պայմաններ ստեղծում, նաեւ նրանց հույս, հավատ եւ սեր է ներշնչում ապագայի նկատմամբ: Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան թեմը՝ համագործակցելով գիտակից հայորդիների հետ, շարունակելու է յուրաքանչյուր հայ մանուկին անհոգ մանկություն եւ անկեղծ ժպիտ պարգեւել:**

ԱԼԵՔՍ ՍՐԿ. ԳԱԼԱՅՃՅԱՆ

AZG NEW SHABAT.QXD 26/04/2018 22:55 Page 7



# Նշաձողը՝ 10.000 դոլար. ինչ է այն, կամ՝ այսպես երկիր չեն կառավարում

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՕՒՄՅԱՆ

ՀՀ բարձրագույն իշխանությունը որեւէ հիմնավոր բացատրություն չգտնելով այն հարցին, թե ինչու տնտեսական աճի պայմաններում երկրի քաղաքացին այն իր առօրյայում չի զգում, շաբաթներ առաջ հայտարարեց, թե մեր քաղաքացիների կյանքը կբարեփոխվի, երբ երկրների համար որոշիչ համարվող համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) 1 բնակչի հաշվով կազմի 10.000 ամերիկյան դոլար: Ամիսներ առաջ էլ դրամով 7-անիշ թվով աշխատավարձ ստացող Հայաստանի զարգացման հիմնադրամի՝ ԱՄՆ-ի հռչակավոր Հարվարդ համալսարանի շրջանավարտ տնօրենն էր սույն հարցի կապակցությամբ թիվ հռչակել: Հանրային լրագրողուհու հարցին ի պատասխան նա հայտարարեց, որ հայաստանցին լավ կապրի, երբ նրա հաշվով երկրի ՀՆԱ-ն կազմի 7.000 դոլար: Չգիտեմ ՀՀ վերնախավից ով ինչ այլ թիվ է ներկայացրել, ուստի առաջնորդվեմ բարձրագույն իշխանության սահմանած նշաձողով՝ 10.000 դոլարով. ի՞նչ է այն:

Մերօրյա Հայաստանի շարքային քաղաքացին, ով մտահոգ է երկրի տնտեսության անմխիթար վիճակով եւ դրա կայացման գործընթացում է տեսնում իր վաղվա օրն ու ընտանիքի ապագան, հաճախ է այսօրինակ հարցեր հնչեցնում: Չէ՞ որ ամենատարբեր միջոցներով տեղեկացված է, որ ասենք վերջին 20-25-ամյակում Երկիր մոլորակի շատ պետություններում են անկայուն քաղաքական, ֆինանսա-տնտեսական, տարերային իրադարձություններ արձանագրվել, սակայն դրանք ինչ-որ ձեւով հաղթահարվել են, մարդկանց հուսալքվածությունը կանխվել է: Իսկ ահա մեզանում արձանագրվող արտագաղթը հաստատում է, որ երբեմնի դրախտավայր հռչակված հայոց բնօրրանն այն տարածքը չէ, ուր հարկավոր է ապրել, ընտանիք կազմել, երեխաներ ունենալ, կարճ ասած՝ Աստծո տված իրեն բաժին ժամանակից հաճույք ու բավականություն ստանալ: Այսօրինակ պարագայում հնչող ինչո՞ւ հարցը բնական համարելով, փորձենք հերթական անգամ պատասխան ստանալ, թող որ սիրողական մակարդակով, սակայն համաշխարհային վիճակագրությունից վերցված թվերի ու փաստերի օգնությամբ, որը հիմնականում տեղ է գտել ԱՄՆ-ում տպագրվող «Համաշխարհային փաստեր. 2018» տեղեկատուում:

Թերթում եմ այբբենական կարգով առաջին իսկ երկրների մասին ներկայացվող էջերը. 2017-ին Ալբանիա՝ 1 բնակչի հաշվով ՀՆԱ-ն 12.000 դոլար, Ալժիր՝ 15.000 դոլար: Մի փոքր անց հանդիպում եմ վերջիններիս հարեւան Եգիպտոսին՝ 12.100 դոլար, Խորվաթիային՝ 22.100 դոլար: Բայց չէ՞ որ այս երկրներում անկայուն վիճակներն անվերջ են, ռազմական ծախսերն զգալի, կառավարությունները հաճախ են փոփոխվում: Այնուհանդերձ ստացվում է, որ մերոնց նախանշած 10.000 դոլար ցուցանիշը մի այնպիսի անհասանելի նշաձող չէ, որ հարկ է անորոշ ժամանակի համար նպատակ հռչակել եւ խնդիրները գիտենք ասելով սեփական քաղաքացիներին անվերջ հանգստացնել: Անշուշտ իրենց մոտեցումն է, միայն թե տարիները տասնամյակներ են դառնում, ապա 20-25-ամյակ, իսկ համազգային ու համապետական խնդիրները լուրջ մտահոգություններ են ծնում, լուծումներ ոչ միայն չեն առաջարկվում, այլեւ դրանց իրականացումներ չեն գտնվում: Արդյունքում՝ գրեթե չաշխատող երկիր, որտեղ արդեն մեկ տասնամյակ ու ավելի տեսանելի արժեք չի ստեղծվում, քանզի 10 մլրդ դոլար մեր համախառն ներքին արդյունքը զգալիորեն գերազանցող, 16 մլրդ դոլար ցուցանիշ ունի հազիվ 400 հազար բնակիչ ունեցող Մալթա կղզու համանուն պետությունը: Եվ հարցը՝ ինչու է այսպիսի վի-



ճակ ստեղծվում, ինչում է բնականաբար: Պատասխանը գտնելուն մասամբ օգնում է արածի ու չարածի բացահայտումը, որը փորձենք իրականացնել փաստերի օգնությամբ:

Ընթերցում ենք ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի հաստատած ծրագրի «Կառավարության գործունեությունից ակնկալվող հիմնական արդյունքները» 10 հիմնական կետերից մի քանիսը. Համախառն ներքին արդյունքի տարեկան 8-10 տոկոս իրական աճ, աղքատության էական հաղթահարում՝ ապահովելով 11,2 տոկոսից ցածր ընդհանուր աղքատության եւ 1,6 տոկոսից ցածր ծայրահեղ աղքատության մակարդակ:

Ոգեւորող նպատակներ, իսկ թե ինչ միջոցներով, պարզվում է հետագայում. կառավարությունը պետական կառավարման համակարգի կադրային ներուժի հետեւողական ամրապնդման նպատակով մտադիր է զգալիորեն ավելացնել համակարգում աշխատելու գրավչությունը՝ աշխատանքի որակը եւ աշխատավարձի մակարդակը մրցունակ դարձնելով մասնավոր հատվածին:

Հիմա հետեւենք տողերիս հեղինակին մտահոգող երկրի գյուղոլորտում տիրող գործընթացին՝ կապված ծրագրի կադրային ներուժի հետեւողական ամրապնդման ցանկության հետ: Այն ընդունելու պահին ՀՀ գյուղատնտեսության նախարարը Դավիթ Լոքյանն էր: Ամիսներ անց նրան փոխարինեց Արամայիս Գրիգորյանը, որը մոտ 1 տարի անց պաշտոնը զիջեց Ա.Ալավերդյանին: 2010 թվականը սկսվեց Սերգո Կարապետյանի նախարարությամբ: Ընդունենք որ վերջինը համեմատաբար երկար պաշտոնավարեց, բայց արդյոք այն որեւէ ձեւով արդարացնո՞ւմ է 2008-2010 թվականների թվով 4 գյուղնախարարների անհասկանալի, անբացատրելի ու անընդունելի շքահանդեսը: Որեւէ բացատրություն դժվար է գտնել; Նախարարներից յուրաքանչյուրը, ինչքան էլ չընդունենք կադրային ջարդ հասկացությունը, իր կուսակցական շահերն ուներ, առաջին երկուսը դաշնակցականներ էին, հաջորդները՝ ՕԵԿ-ականներ: Կառավարման այս ոճը նվազագույնը անփութություն եւ անտարբերություն է երկրի տնտեսության հիմնական ճյուղերից մեկի՝ գյուղատնտեսության հանդեպ, որտեղ լրջագույն խնդիրներ կան ՀՀ պարենապահովության եւ պարենանվտանգության առումներով: Որ տրվածն անհարկի գնահատական չէ, փորձեմ հիմնավորել պարզ մի օրինակով: Ս. Կարապետյանն իր գործունեության առանցքում դրեց ինչ-որ կոոպերատիվների օգնությամբ թե միջոցներով գյուղոլորտում վիճակը բարեփոխելու խնդիրը: Մոտ 6-ամյա գործունեության ընթացքում գրեթե ոչինչ չստացվեց, եթե գյուղերի դատարկվելը չնկատենք: Բայց արի ու տես այս տարիներին ոլորտում 14 տոկոս աճ արձանագրվեց, երբ ՀՀ առեւտրային շուկան հիմնականում գոյատեւում էր ներկրվող պարենի ու սննդի հումքի շնորհիվ: Արդյունքում՝ նրան փոխարինած հերթական կ ա ր ե ն կ ա ր ա պ ե տ յ ա ն ա կ ա ն գյուղնախարարն անգամ ակնարկ չի անում այդ կոոպերատիվներ կոչվողի մասին, որոնց կազմավորման նպատակով բյուջեից ու վարկային զգալի միջոցներ ծախսվեցին: Գյուղաբնակները մշտապես են նշում, որ իրենց հուսալքության է հասցնում գյուղի հիմնախնդիրները թողած այլ հարցերով կառավարելու տպավորություն ստեղծելը: Հիմնախնդիրներ ասելով նրանք նկատի ունեն ՀՀ կառավարության միջոցներով ձեռք բերվող սերմերի որակը, լիարժեք անասնակերի իսպառ բացակայությունը, որոնց արդյունքներով իրենց օրնիբուն աշխատանքը պահանջված արդյունք չի ապահովում. Հեկտարից 2-3 տոննա հացահատիկի ստացումը, կովերի տարեկան 2000 լիտր կաթնատվությունը, մսատու անասնապահության չգոյությունը, հետեւանքը՝ մեր մարդկանց առաջնահերթ սննդակարգում արտերկրներից ներկրվող մսատեսակների, բուսական յուղի, կաթի փոշու հսկայական ծավալները: Փոխարենը, խնդրեմ ծրագրվել է, որ 2008 թվականին երկրում առկա 8 հազար ավանակների թիվը 2015-ին հարկ է հասցնել 10,5 հազարի, 25 հազար ճագարների էլ թիվը 80 հազարի: Համանման երեւույթ արձանագրվեց նաեւ 2016-ին, երբ նորանշանակ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանի օրոք խնդիրներ համարվեցին շինշիլաբուծությունը, բրոկկոլիի ցանքատարածությունների զգալի ավելացումը, երբ հայ տանտիրուհիների կողմից խոհանոցներում օգտագործվող սոխն ու սխտորն է անգամ ներմուծվում, սկսած Իսրայելից մինչեւ Չինաստան, եգիպտոսից էլ Իրան: Այսպես երկիր չեն կառավարում, պարոնայք ՀՀ պատասխանատուներ:

Փորձենք ներկայացնել, թե առաջիկա 10-ամյակում ինչ վիճակ կունենանք ՀՀ առեւտրաշուկայում: Այն պարզելու համար օգտվենք նախորդ 10-ամյա ժամանակահատվածում արձանագրված գործընթացներից: Ըստ գյուղատնտեսության նախարարության կողմից այդ շրջանում տպագրվող «Ագրոլրատու» շաբաթաթերթի Երեւան քաղաքի շուկաներում գյուղատնտեսական մթերքների միջինացված գները 2007 թվականի օգոստոսին հետեւյալն էին. տավարի միս, նվազագույն եւ առավելագույն գներ 1340-1500 դրամ, խոզի միս 1480-1740 դրամ, Լոռի պանիր 1240-1600 դրամ, կգ լավաշ 380-450 դրամ, մեղր 2600-3000 դրամ: Կարագի գնի հետ կատարվածը գիտենք բոլորս. այն ուսումնասիրություններում բացակայում է, քանզի ՀՀ տնտեսությունում թե կենդանական, թե բուսական յուղ ընդհանրապես չի արտադրվում: Փորձում ենք ներկայացնել պարենի այն տեսակները, որոնց պարբերական սպառումով է հայաստանաբնակը պայմանավորում իր կյանքի որակը, իր ընտանիքի պարենային բարվոքությունը: Որ դրանց գները 10-ամյակ անց հիմնականում կրկնապատկվել են, կարծես որեւէ մեկը չի առարկի: Իսկ կեռապատկվե՞ն արդյոք ՀՀ-ում աշխատավարձերն ու կենսաթոշակները, որպեսզի 2028-ին հայաստանցին իր առօրյայի դրական փոփոխություն զգա: Դժվար թե: Եվ այս ամենը զուտ այն պատճառով, որ ՀՀ տնտեսությունում չկա մրցակցային միջավայր, փոքր ու միջին գործարարությունը տնտեսությունում որոշիչ դեր ունենալու փոխարեն աստիճանաբար մարում է, երբ կայացած տնտեսություններ ունեցող երկրներում այդտեղ են արտադրվում մսամթերքի, կաթնեղենի, գինիների, այլ սննդատեսակների ամբողջական ծավալները, այդկերպ ապահովելով անհրաժեշտ աշխատատեղեր, որակյալ սպասարկում եւ ծառայություններ: Իսկ ահա մեզ խոստացվում էր, որ «կառավարությունը պետք է կարողանա նախապես կանխատեսել ապագա մարտահրավերները եւ մշակել դրանց դիմակայելու երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր»: Թե ինչ է պարունակում ապագա մարտահրավերներ արտահայտությունը, դժվար է ենթադրել, քանզի հայաստանյան հանրության բացարձակ մեծամասնությունը կոնկրետ առօրյա խնդիրներ ունի, որոնք ինչքան էլ պարզ ու հասարակ են, այնուհանդերձ խորանալով խոչընդոտում են նրա առօրյայի բարեփոխմանը: Նշել ենք եւ կրկնում ենք. այն սկսվում է առավոտյան համեստ նախաճաշով, որից հայաստանյան հանրության բացարձակ մեծամասնությունը զրկված է: Հետեւանքում ստացվում է մի վիճակ, երբ երկրում կազմավորվում է զանցառուական ցանցային միջավայր: Յուրաքանչյուրը նախընտրում եւ որոշում է հարցերը լուծելու իր ձեւն ու միջոցը, իր աշխատանքային պարտավորությունների մեղմ շրջանցումից մինչեւ պաշտոնական դիրքի չարաշահումը: Տրանսպորտի աշխատանքը կանոնակարգողն իր մեթոդն է կիրառում, հացարտադրողն իր հնարքը բանեցնում, բուժաշխատողն իր ծառայությունն ընդգծում, հարկահավաքն իր պարտավորություններում է թերանում, պաշտոնյա դասն էլ երկրի սահմանների պաշտպանությունից ոչ պակաս կարեւոր երկրի պարենապահովության եւ պարենանվտանգության հիմնախնդիրն է ձախողում: Այսկերպ հանրությունը հայտնվում է մի վիճակում, որը երկրի բարձրագույն ղեկավարը տարիներ առաջ «գաղջ» որակեց: Եվ սա զուտ այն պատճառով, ինչքան էլ նման մտածողությունը ստամոքսային պարզամտություն դիտարկվի, որ Հայաստանի Հանրապետության հետպատերազմյան ողջ ժամանակահատվածում չի հաջողվում լուծել հանրության բացարձակ մեծամասնության պարզ ու հասարակ սննդակարգը, մարդկանց առողջության, տրամադրության, ոգեւորության նախապայմանը:

Թե ինչու էր ՀՀ կառավարությունն արդեն 25-րդ տարին պարզապես անտեսում այս ամենը, դժվար է ասել, որի հետեւանքն է համընդհանուր հուսալքությունը, անգամ բազմատասնյակ հազարավորների այս օրերին ընթացող փողոցային գործողությունների պայմաններում: Նրանց եւ իրենց հարյուր հազարավոր համակիրներին հիմնավորապես հոգնեցրել է այն վիճակը, երբ իրենց իսկ կողմից մուծվող հարկերով ու տուրքերով վարձատրվող պետական վերնախավը շարունակում է բացահայտ սպասարկել ներմուծողների շահերը: Միայն 2018-ի առաջին եռամսյակում ՀՀ արտահանումն ավելացել է 28 տոկոսով, ներմուծումը 39 տոկոսով: Գաղտնիք չէ, որ արտահանվողը հիմնականում ազգային հարստություն երկրի ընդերքն է, ներմուծվողը՝ սնունդը, հայ հողի մշակին իր աշխատանքից օտարելու, հարյուր հազարավոր հեկտարներով գյուղնշանակության հողերն անմշակ թողնելու պայմաններում: Եվ հանրային պահանջը՝ այսպես երկիր չեն կառավարում, ինչում է ինքնաբերաբար ու տեղին:

25.04.2018 թ.

AZG NEW SHABAT.QXD 26/04/2018 22:55 Page 8



# Բունիաթովականություն եւ ալիեւականություն

ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

1965 թվականին Բաքվում լույս է տեսել տխրահռչակ պատմաբան Զիա Բունիաթովի «Ադրբեջանը 7-9-րդ դարերում» ռուսերեն գիրքը, որը պատմության կեղծարարության դասական օրինակներից է:

Չափից ավելի «զարգացնելով» իր գրքի խմբագիր «աղվանագետ» Զելիկ Յամպոլսկու «տեսությունները»՝ վայ-պատմաբան Զ. Բունիաթովը եկել է այն համոզման, որ դարեր ի վեր գոյություն է ունեցել աղվանների երկիրը՝ Մեծ Աղվանքը (Ալբանիա), որը տարածվել է Կովկասյան լեռներից մինչեւ Արաքս եւ բուն Աղվանքից զատ ընդգրկել է նաեւ Սյունիքը, Ուտիքը, Արցախը եւ այլ տարածքներ: Այդ լայնածավալ երկրում ապրած աղվանները մինչեւ 8-րդ դարն ունեցել են իրենց եկեղեցին եւ մշակույթը, սակայն «ագրեսոր» հայերը արաբ զավթիչների միջոցով նվաճել են Աղվանքը, բռնի «հայացրել» են աղվան ժողովրդին, պարտադրել նրան լուսավորչական դավանանքը, յուրացրել նրա երկիրն ու մշակույթը: 11-13-րդ դարերում արդեն աղվանները, որպես ժողովուրդ, գոյություն չեն ունեցել, սակայն նրա անմիջական արյունակից ժառանգորդն են ադրբեջանցիները, որոնք ինչ-ինչ պատճառներով ընդունել են մուսուլմանություն: Եվ քանի որ ադրբեջանցիները թյուրքական ժողովուրդ են, ապա աղվանները եւ Աղվանքի մյուս ժողովուրդները եւս ունեն թյուրքական ծագում: Եվ քանի որ աղվանները նույն ադրբեջանցիներն են, ուրեմն Մեծ Աղվանքը, իր նշված տարածքներով հանդերձ, Ադրբեջան է:

Այսպիսի զառանցաբանությամբ, ահա, ընդամենը 11-րդ դարում Այսրկովկաս թափանցած օղուզ-թյուրքական քոչվոր ցեղերից մեկի այս ներկայացուցիչը, իր ցեղին բնորոշ ձեւով «զավթել է» պատմական Աղվանքն ու Մեծ Հայքի մի շարք նահանգներ ու գավառներ՝ հայտարարելով դրանք աղվանական-ադրբեջանական: Նույն զառանցաբանությամբ ու թալանչիական մոլուցքով նա աղվանական-ադրբեջանական է համարել նաեւ այդ տարածքներում ստեղծված հայ մշակույթն ու մատենագրությունը: Առաջին հարվածը, բնականաբար, ստացել է Աղվանքի մեծ պատմիչ, Ուտիքում ծնված Մովսես Կաղանկատվացին. հայտարարվել է, թե նրա «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը նախապես գրված է եղել աղվաներեն, ապա հայերն այն թարգմանելով գրաբար՝ ոչնչացրել են բնագիրը: Աղվան են համարվել նաեւ նույն՝ Ուտիք նահանգի Պարտավ քաղաքում գործած բանաստեղծ Դավթակ Քերթողը, նույն նահանգի Տավուշ գավառում ծնված խոշոր մատենագիր Վանական Վարդապետը, նույն նահանգի Գանձակ քաղաքում ծնված նշանավոր մատենագիրներ ու կրթական-մշակութային գործիչներ Մխիթար Գոշը, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արեւելցին, Դավիթ Ալավկա որդին, ինչպես նաեւ Արցախի Փառիսոս գավառում ծնված մեծանուն Հովհաննես Սարկավագ Իմաստասերը եւ ուրիշներ: Նրանք համարվել են ծագումով աղվաններ (իմա՝ ադրբեջանցիներ), իսկ նրանց երկերը՝ աղվանական-ադրբեջանական գրականության «հայագիր» հուշարձաններ:

Այսքանով, սակայն, Զ. Բունիաթովը չի բավարարվել (ինչպես ասում են՝ ախորժակն ուտելիս է բացվում): Նա Ադրբեջան է համարել ոչ միայն Մեծ Աղվանքը, այլեւ պատմական Ատրպատականը, այլեւ Խորհրդային Հայաստանի գրեթե բոլոր տարածքները, որտեղ եւս «բուն հայկական» ոչինչ չի տեսել...

Բնականաբար, պատմական փաստերի եւ իրողությունների նման վայրենի խեղաթյուրումն ու ցնորական եզրահանգումները, անգամ խորհրդային ժողովուրդների կեղծ-եղբայրական քաղաքականության պայմաններում, չէին կարող անարձագանք մնալ, ուստիեւ գիտական լուրջ փաստարկումներով հերքվել-ջախջախվել են: Նկատի ունենք բազմարդյուն բանասեր Ասատուր Մնացականյանի եւ մեծանուն Պարույր Սեւակի, այլեւ անվանի պատմաբան Կարո Մելիք-Օհանջանյանի ռուսերեն ծավալուն գրախոսական-հոդվածները (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1967, թիվ 1, էջ 177-190, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, թիվ 2, էջ 169-190): Այս ժամանակ, ահա, ծագեց բունիաթովականություն եզրույթը, որպես հոմանիշ պատմության կեղծարարության:

Բունիաթովականությունը ծագել է դեռեւս Բունիաթովից առաջ, հատկապես թյուրքական այն մակաբույծ ցեղերի մեջ, որոնք այլոց (հիմնականում՝ հայության) պատմության ու մշակույթի կողոպուտով ձգտում են ինքնահաստատվել՝ որպես հնագույն եւ մշակութային ժողովուրդներ: Այդ երեւույթը տարածվել է առավելաբար սելջուկ թուրքերի հետ (նաեւ հետագայում) ասպատակությունների եկած, նույնպես օղուզական ծագմամբ օսման-թուրքերի «պատմագիտության» մեջ: Այստեղ հանդես են եկել բազմաթիվ «բունիաթովներ» (Զ. Գյոքալփ, Շ. Գյունալթայ, Ք. Գյուրյուն, Է. Ուրաս, Ա. Էնգին, Ա. Յալչըն, Է. Հալիդե, Մ. Հոջաօղլու, Ա. Քեմալ, Չ. Քյուրշատ. այս անհաճո անունների շարքը կարելի է երկար շարունակել): Անխնա խեղաթյուրելով հայոց հին ու նոր պատմությունը՝ նրանք հանգել են անգամ պատմական Հայաստանի գոյության հերքմանը, Արեւմտյան Հայաստանի բնիկներ համարելով թյուրքական ցեղերին եւ Թուրքիայի պատմության սկզբնավորումը հասցնելով մինչեւ... Շումերի վաղնջական ժամանակները...

Վերադառնանք, սակայն, բուն Բունիաթովին: Հայ մասնագետների կողմից ջախջախիչ հարված ստանալուց հետո էլ նա շարունակել է իր հակահայ գործունեությունը՝ փայլուն կերպով հաստատելով, որ պատմության զեղծարարությունը կատարվում է՝ այն ծառայեցնելու համար տվյալ երկրի վարած նենգ քաղաքականությանը: Հատկապես հիշատակելի է Բունիաթովի՝ սումգայիթյան ջարդերի պատճառները «քննող» «Ինչո՞ւ Սումգայիթ» հոդվածը, որն արժանացել է Արկադի Ղուկասյանի սարկաստիկ քննադատությանը (տե՛ս նրա «Բաց նամակ քեռի Զիային կամ Իմամի կոչման ճանապարհին» հոդվածը, «Советский Карабах», 1989, մայիսի 28):

Այստեղ տեղին ենք համարում հիշել նաեւ, որ Զիա Բունիաթովը 1997 թվականին, Բաքվի իր տան առաջ, սպանվել է իր իսկ հայրենակից «աղվան»-ադրբեջանցիների ձեռքով: Ի դեպ, պաշտոնական վարկածի համաձայն, սպանությունը կազմակերպել էին «Հըզբոլլահի» Բաքվի մասնաճյուղի անդամները, որոնք Բունիաթովին համարել են իսրայելական «Մոսադ» հատուկ ծառայության անդամ, որն Ադրբեջանում սիոնիզմ է տարածել: Ահա, Բունիաթով «գիտնականի» եւ գործչի կերպարը: «Գիտնական», որ դարձել է ադրբեջանական «պատմագիտության» հայրը, ուղեցույց-մենտորը, որին շարունակել եւ որի «տեսությունները» առավել զարգացրել են նրա սաները, նորագույն «բունիաթովները»:

Ագրեսիվ են հատկապես «բունիաթովուհիները», որոնց մեջ առավել առանձնանում է Ֆարիդա Ջաֆար կըզը Մամեդովան: Վերջինս ինքը խոստովանել է, որ Հեյդար Ալիեւը ադրբեջանցի պատմաբաններից պահանջել է գիտական քննադատության ենթարկել Աղվանքի վերաբերյալ Հայաստանում լույս տեսած բոլոր ուսումնասիրությունները, ուստիեւ ինքը սկսել է զբաղվել աղվանագիտությամբ եւ «հայկական հանգույցը» քանդելու, այն է՝ հայոց պատմությունն առավել լավ խեղաթյուրելու համար, նույնիսկ գրաբար է սովորել:

Մամեդովայի «աղվանագիտական»-հակահայկական աշխատությունները (որոնք, ի դեպ, լույս են տեսել նաեւ ռուսերեն, գերմաներեն եւ ֆրանսերեն) ջերմորեն է ընդունել ինքը՝ Բունիաթովը, գնահատելով դրանց մեջ իր առաջադրած «գաղափարների» հաստատումն ու զարգացումը: Իսկ Հեյդարի որդի Իլհամը Մամեդովային կոչել է «ճշմարտության ասպետ», որն անդուլ պայքարում է «պատմության հայկական կեղծարարության դեմ»:

Ժամանակին Մամեդովայի հակագիտական աշխատությունները եւս արժանացել են հայ մասնագետների արժանի հակահարվածին (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1987, թիվ 3, էջ 166-189): Քննադատել են նաեւ օտարազգի մասնագետները. հիշատակելի է հատկապես ռուսաստանցի պատմաբան, ազգագրագետ Վիկտոր Շնիրելմանի «Հիշողության պատերազմներ» նշանավոր գրքում (Մոսկվա, 2003 թ.) կատարված հիմնավոր առարկությունը, որտեղ հեղինակը, որպես եզրահանգում, պատմությունը միտումնավոր խեղաթյուրող Մամեդովային համարել է Ադրբեջանում պետական աջակցությամբ ծավալվող, այսպես կոչված, «աղվանական առասպելի» գլխավոր քարոզիչը:

Այս ամենով հանդերձ, շարունակելով իր զեղծարարությունները, Ջաֆար կըզը խանումը 2005 թվականին հրատարակել է «Կովկասյան Աղվանքը եւ աղվանները» («Кавказская Албания и албаны») մենագրությունը: Իր սպասածին հակառակ, սակայն, այդ գիրքը Ադրբեջանի «գիտական» շրջանակներում սվիններով է ընդունվել, եւ հեղինակը համարվել է «հայրենիքի դավաճան», «հայկական լրտես»: Հիմնական պատճառն այն էր, որ Մամեդովան գրքում բերել է մի քարտեզ, որտեղ նշված է «Մեծ Հայքը» (Великая Армения):

Մամեդովան, իր իսկ խոստովանությամբ, նոր սերնդի «բունիաթովների» ու «բունիաթովուհիների» կողմից ոչ միայն ենթարկվել է հալածանքների ու վիրավորանքների, այլեւ հետապնդվել է ու գտնվել ֆիզիկական հաշվեհարդարի սպառնալիքի տակ: Նա ամեն կերպ փորձել է ապացուցել, որ ինքը ոչ միայն «չի ծախվել հայերին», այլեւ լիովին հակահայկական մենագրություն է գրել:

Իր կորսված «պատիվը» վերականգնելու համար վայ-պատմաբանուհին հետագայում, մամուլում եւ հեռուստատեսությամբ, հանդես է եկել առավել կոշտ հայամերժ ելույթներով (վերջինը՝ այս տարի): Համացանցում ողողված այդ ելույթներում նա հայտնել է այն համոզմունքը, թե «աղվանական ողջ մշակույթի» ժառանգորդ ադրբեջանցի ժողովուրդը ոչ թե ուղղակիորեն սերվել է աղվաններից, այլ բաղադրված է երեք հզոր էթնոմշակութային շերտերից՝ կովկասալեզու, թյուրքալեզու ու իրանալեզու, եւ թե «աղվանական»-ադրբեջանական մշակութային ակունքները սկսվում են ե՛ւ զրադաշտական, ե՛ւ հուդայական, ե՛ւ մուսուլմանական միջավայրից: Սա արդեն մի նոր ցնցող «դոկտրին» է՝ հատկապես իր հուդայական կողմով (արի ու մի՛ հավատա, որ Մամեդովայի հոգեւոր հայր Բունիաթովը իսկապես սիոնիստ է եղել):

Հասկանալի պատճառով, Ջաֆար կըզը խանումը (ինչպես առհասարակ արդի ադրբեջանցի «պատմաբանները») առավելապես անդրադառնում է ադրբեջանական բռնատիրությունից վերջապես (հուսով ենք՝ վերջնականապես) ազատագրված Արցախին: Նա նորանոր հորինումներով ձգտում է հաստատել բունիաթովյան «գաղափարները», թե Արցախը եղել է Աղվանքի մի մասը, թե այն Հայաստանի հետ ոչ մի կապ չունի, թե Արցախի հայերը աղվաններ են, որոնք իրենց համարում են հայեր, թե Գանձասարը հայերի կողմից բռնազավթված աղվանական Եկեղեցու առաջնորդարանն է եւ այլն, եւ այլն... (Մամեդովայի վերջին ելույթում առկա զեղծարարություններին հակադարձել է արդյունավոր միջնադարագետ Վանո Եղիազարյանը «Գրական թերթի» մարտի 14-ի համարում տպագրած իր հոդվածում. համացանցում տեղադրված են նաեւ այդ հոդվածի ռուսերեն եւ անգլերեն թարգմանությունները):

Ադրբեջանցի առավել նոր սերնդի «ուսումնասիրողները», Իլհամ Ալիեւի անմիջական հրահանգով, շատ ավելի առաջ են անցել՝ հասնելով անհեթեթության այն գագաթնակետին, թե հայերը ոչ միայն Արցախում, այլեւ Արեւելյան Հայաստանում եւ առհասարակ Այսրկովկասում բնիկներ չեն, այլ ուշ շրջանի եկվորներ, եւ թե բոլոր այդ տարածքներն ադրբեջանական են: Դե իսկ Արեւմտյան Հայաստանը եւ Փոքր Ասիան առհասարակ, մշտապես պատկանել է թուրքերին (այն, ինչ վաղուց շրջանառվում է թուրքական «պատմագիտության» մեջ): Իսկ «Մեծ Հայքը» հնարովի, հակագիտական հասկացություն է, եւ այն երբեք գոյություն չի ունեցել: Այս ամենը, ադրբեջանական նավթադոլարների շռայլ օգտագործմամբ, աշխարհին հրամցվում է ամենատարբեր ձեւերով՝ համացանցով, մենագրություններով, հոդվածներով, ֆիլմերով, միջոցառումներով: Հիշատակելի են մասնավորապես «Հայերը չեն եղել Կովկասում» աշխարհով մեկ սփռված ֆիլմը, Աղվանք-Ադրբեջան պետության հիմնադրման 2500-ամյակի եւ «ադրբեջանական մշակույթի հարուստ կենտրոն» Երեւանի (Էրիվանի) հիմնադրման 500-ամյակի տոնակատարությունները եւ, մանավանդ, Հայաստանի Հանրապետության տարածքը Ադրբեջան համարելու նախագահ Ալիեւի զառանցագին հայտարարությունները:

Ինչպես տեսնում ենք, բունիաթովականությունն արդեն վերածել է ալիեւականության, ինչը ուղեկցվում է Հայաստանի եւ Արցախի սահմանների դեմ ամենօրյա ռազմական ոտնձգություններով՝ շատ ավելի լուրջ սպառնալիքի տակ դնելով մեր ազգային անվտանգությունը...

Նշեցինք, որ պատմության ադրբեջանական զեղծարարություններն արժանացել են հայ մասնագետների հակահարվածներին: Այստեղ ցանկանում ենք հիշել նաեւ հայերեն, անգլերեն, ռուսերեն եւ պարսկերեն աշխատություններով հանդես եկող վաստակաշատ աշխարհագրագետ եւ քարտեզագետ Ռուբեն Գալչյանին (մասնավորապես անցյալ տարի տպագրված նրա «Ադրբեջանական պատմա-աշխարհագրական զեղծարարությունները» հատորը), հմուտ պատմաբաններ Վալերի Թունյանին, Արտակ Մովսիսյանին. վերջինս այս ասպարեզում բավական աչքի է ընկել հատկապես իր սցենարներով նկարահանված «Հռոմից ավելի հին մայրաքաղաքը» եւ «Պատմության կեղծարարները. Ադրբեջան» ֆիլմերով: Այս ամենը, սակայն, չհամակարգված, առավել տարերային բնույթ կրող անձնական ազնիվ նախաձեռնություններ են, եւ իսկապես, ինչպես Ա. Մովսիսյանն է ասել իր հարցազրույցներից մեկում, ցավոք սրտի, նման զեղծարարությունների դեմ «պետական մոտեցում չկա»:

Մենք ունենք Պաշտպանության նախարարություն, որ կազմակերպում է մեր երկրի սահմանների պաշտպանությունը. անհրաժեշտաբար պիտի ունենանք նաեւ մեր դարավոր պատմության ու մշակույթի սահմանները պաշտպանող զորեղ պետական կառույց:

Վերջացնելով՝ ասենք, որ իր հակահայ ելույթներից մեկում Իլհամ Ալիեւը (ներողություն ենք խնդրում այս անհաճո անունը քանիցս հիշատակելու համար) հայտարարել է. «Մենք պետք է ավելի ուժեղանանք, ունենանք ավելի զորեղ բանակ եւ ապահովենք տնտեսական զարգացումը»: Սա ավելի շատ մեզ՝ հայերիս է վերաբերում: Միայն հզոր պետություն ստեղծելով է, որ կկարողանանք հուսալիորեն պաշտպանել մեզ մեր ազգային ինքնությունը վտանգող բունիաթովականությունից եւ ալիեւականությունից:

AZG NEW SHABAT.QXD 26/04/2018 22:55 Page 9



ԱՐԱՔՍ ՍԱՖԱՐՅԱՆ

Բրյուսել

# Բրյուսելում խաղաղ ցուցարարներին ոչ խաղաղ վերաբերմունք

Անցնող շաբաթ ոչ միայն Հայաստանի ներքաղաքական կյանքն էր անվերապահորեն հագեցած, այլեւ Եվրոպայում ապրող հայերի համար շաբաթը դարձավ հայության ոգեւորության, պոռթկումի, նոր զարթոնքի, հայության միասնության շաբաթ: Եվրոպական տարբեր երկրներում, Հայաստանի դեսպանատան մոտ, մեր հայրենակիցները բողոքի ձայն բարձրացրին, սատարելու Հայաստանում ընթացող «Քայլ արա՝ մերժիր Սերժին» ակցիային: Բելգիայի հայերն իհարկե անմասն չմնացին եւ Բրյուսելի Եվրոմիության հարակից տարածքում, ուր տեղակայված են տարբեր երկրների դեսպանատներ, մեր հայրենակիցներն անցկացրեցին խաղաղ երթ, ինչը սակայն ուղեկցվեց բելգիական ոստիկանների բիրտ միջամտությամբ:





Ամեն տարի Բելգիայի հայերն ապրիլի 24-ին Բրյուսելում՝ Թուրքիայի դեսպանատան առջեւ բողոքի ցույցեր են անցկացնում: Այս տարի, սակայն, Բելգիան արգելել էր ապրիլի 24-ի ավանդական դարձած ցույցը, բայց փոխարենը թույլատրել այն կազմակերպել ապրիլի 21-ին: Մոտ վեց տասնյակից ավել հայեր ապրիլի 21-ին դարձյալ շրջափակել էին Բրյուսելում Թուրքիայի դեսպանատան տարածքը եւ հերթական բողոքն արտահայտեցին թուրքական իշխանությունների հասցեին: Եվ քանի որ հանգամանքների հեգնանքով Հայաստանի եւ Թուրքիայի դեսպանատները Բրյուսելում եւս հարեւաններ են, բելգիահայերը թուրքական դեսպանատանն ուղղված բողոքի ակցիայից հետո, միաժամանակ, երթը շարունակեցին հայկական դեսպանատան ուղղությամբ՝ ի սատարումն Հայաստանում ընթացող երիտասարդական շարժմանը: Ամբողջ երթի ընթացքում ոստիկանությունն իր պարտքն էր կատարում, տարածքը հսկում էր, որպեսզի ցույցը խաղաղ ընթանա: Սակայն, հայկական դեսպանատան առջեւ «Մերժիր Սերժին» վանկարկումներից հետո, ոստիկանները հարձակվեցին խաղաղ ցուցարարների վրա, եւ ուժային մեթոդներով, իրարանցում, հրմշտոց ստեղծելով՝ փորձում էին ճնշել երթը:

Բրյուսելն աշխարհի կոսմոպոլիտ մայրաքաղաքներից է եւ գրեթե ամեն շաբաթ այստեղ իրենց բողոքի խուքը միջազգային ատյաններին են հասու դարձնում յուրաքանչյուրը: Ոստիկանների ուժային գործողություններ խաղաղ ցուցարարների վրա երբեւէ չի կիրառել, քանի որ որեւէ ցույց նախապես արտոնվում է:

Ըստ շրջանառվող լուրերի, ոստիկաններին խուճապի մեջ են գցել մեր հայրենակիցներից հատկապես այն անձինք, ովքեր արտոնություն են ստացել ցույց անցկացնելու միայն թուրքական դեսպանության մոտ , իսկ հայկական դեսպանատան առջեւ ցույցը համարել են ոչ արտոնված եւ այդ մասին անմիջապես տեղեկացրել են ոստիկանությանը: Բարեբախտաբար մեր երիտասարդների զգոնության արդյունքում ոստիկաններն անմիջապես սթափվեցին եւ կանխվեց բախումնային իրավիճակը:

Հաջորդող երկուշաբթի ապրիլի 23-ին, հայ ցուցարարներին հաջողվել է մտել ՀՀ դեսպանատուն եւ խաղաղորեն փորձել իրենց աջակցությունը հայտնել Հայաստանի ցուցարարներին եւ պահանջել դադարեցնել աշխատանքները ,միանալ իրենց բողոքին, սակայն, ռոպեներ անց, անսպասելիորեն ոստիկանները ներխուժել եւ հարձակվել, մահակներով հարվածելով, բռնության են ենթարկել հայ ցուցարարներին: Թեպետ ՀՀ դեսպան **Թաթուլ Մարգարյանը** կատարվածը հերքում է, պնդելով թե իրենք չեն դիմել տեղական ուժային կառույցների օգնությանը, հավաստելով, որ տարածքը ոստիկանության հսկողության ներքո է, եւ որ ոստիկաններն այնտեղ են հայտնվել առաջացած աղմուկից :

Հարկ է նշել, որ հաճախ եմ անցնում այդ փողոցով եւ հազվադեպ եմ նկատել ոստիկանների, առավել եւս Բելգիայում առանց որեւէ պարզաբանման ոստիկանները երբեք, միանգամից չեն հարձակվում քաղաքացիների վրա :

Հայաստանի դեսպանատունը համարվում է ՀՀ տարածք եւ ոչ մի ուժային կառույց առանց որեւէ թույլտվության իրավունք չունի ներխուժել շենքից ներս : Հավաստի աղբյուրներից տեղեկացանք նաեւ, որ մեր ցուցարարները երբ շենքի ներսում են եղել, դեսպանատան դուռն այդ պահին բաց չի եղել, հետեւաբար ոստիկանները չէին կարող աղմուկի հետեւանքով հանկարծ այնտեղ հայտնվել: Տարիներ ի վեր ժողովրդավարական երկրում ապրող մեր երիտասարդները հոգեբանական եւ ֆիզիկական ճնշման ենթարկվեցին ոչ այնքան օտարի, այլ դարձյալ ներքին հրահրումով:

# Վաստակաշատ գիտնականը, կրթության հմուտ կազմակերպիչը

## *Ակադեմիկոս Վիլեն Պարույրի Հակոբյանի ծննդյան 80-ամյակը*



**Առաջիկա մայիսի 1-ին լրանում է ճանաչված դեղաբան, մանկավարժ եւ հասարակական գործիչ, Երեւանի պետական բժշկական համալսարանի երկարամյա նախկին ռեկտոր, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վիլեն Պարույրի Հակոբյանի ծննդյան 80-ամյակը:**

**Վիլեն Հակոբյանի գործունեության մեջ ցայտունորեն առանձնանում են մի շարք հիմնական կոչումներ՝ գիտնական, ուսուցիչ, բժշկական բարձրագույն կրթության հմուտ կազմակերպիչ եւ հասարակական գործիչ:**

**Վ.Պ. Հակոբյանը ծնվել է 1938 թ.-ի մայիսի 1-ին, Հայկական ԽՍՀ Թալինի շրջանի Գառնահովիտ գյուղում: 1960 թ.-ին ավարտել է Երեւանի պետական բժշկական ինստիտուտի Բուժական ֆակուլտետը: Աշխատել է Արթիկի շրջանում՝ որպես գյուղական բժշկական տեղամասի վարիչ: 1967 թ.-ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1977 թ.-ին՝ դոկտորական թեզերը:**

**Վ.Պ. Հակոբյանը բարեխղճորեն աշխատել է Երեւանի պետական բժշկական համալսարանի ուսումնավարչական գրեթե բոլոր օղակներում՝ ավագ լաբորանտից հասնելով ամբիոնի վարիչի, ռեկտորի պատասխանատու եւ պատվաբեր պաշտոններին:**

**1987 թ.-ին ընտրվելով Երեւանի պետական բժշկական համալսարանի ռեկտոր, Վ.Պ. Հակոբյանը 19 տարի շարունակ դրսեւորել է կազմակերպչի եւ նորարարի մեծ հմտություն: Հիշենք թեկուզ անցումային շրջանի 1991-1994 թվականները, տնտեսական ու էներգետիկ ճգնաժամը: Սակայն այդ պայմաններում Երեւանի պետական բժշկական համալսարանը հանրապետության միակ բուհն էր, որը կարողացավ ունենալ անխափան էլեկտրաէներգիա եւ ջեռուցում, եւ ոչ միայն ապահովեց իր աշխատանքի բնականոն գործընթացը, այլ նաեւ նկատելիորեն վերընթաց ապրեց:**

**Հիրավի, նրա անդուլ եւ հետեւողական աշխատանքների շնորհիվ մեծացավ ու խորացավ Երեւանի պետական բժշկական համալսարանի միջազգային ճանաչումը: Անուրանալի են նրա ծառայությունները արտասահմանյան ուսանողների ներգրավման, անգլալեզու ուսուցման համակարգ ստեղծելու, սեփական համալսարանական կլինիկական հիվանդանոցներ եւ հանրակացարաններ ունենալու գործում:**

**Ակադեմիկոս Վ.Պ. Հակոբյանի հետեւողական գործունեության շնորհիվ 1991 թ.-ին Երեւանի պետական բժշկական ինստիտուտը վերանվանվեց մեծն բժշկապետ Մխիթար Հերացու անվամբ, իսկ 1995 թ.-ին ինստիտուտը վերակազմավորվեց համալսարանի:**

**Ճանաչված գիտնականն իր ներդրումն է կատարել տեղական եւ միջազգային մի շարք հանդեսների աշխատանքներում: Բավական է նշել, որ Վ.Պ. Հակոբյանը երկար տարիներ (1989-2007 թթ.) խմբագրել է ՀՀ ԳԱԱ «Հայաստանի բժշկագիտություն» հանդեսը: Գիտնականի եւ կազմակերպչի նրա վաստակը գնահատվել է արտասահմանյան մի շարք ակադեմիաների եւ գիտական ընկերակցությունների անդամ ընտրվելով:**

**Վ.Պ. Հակոբյանի գիտամանկավարժական գործունեությունն արտացոլված է նրա ավելի քան 300 աշխատություններում (որոնց զգալի մասը հրատարակվել է միջազգային գիտական հանդեսներում): Նա հեղինակ է 6 մենագրությունների (որոնցից 2-ը հրատարակվել է արտասահմանում՝ Մոսկվայում եւ Աթենքում), 11 ուսումնամեթոդական ձեռնարկների, ֆարմակոլոգիայի 3 դասագրքերի: Իր գործընկերների հետ ստեղծած այդ ուսումնական ձեռնարկները ֆարմակոլոգիայի հայերեն լեզվով առաջին բուհական դասագրքերն են Հայաստանում: Վ.Պ. Հակոբյանն ստացել է 24 հեղինակային արտոնագիր: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 5 դոկտորական եւ 19 թեկնածուական ատենախոսություններ:**

**Նա բազմիցս հրավիրվել է աշխարհի տարբեր երկրներ եւ զեկուցումներով հանդես եկել միջազգային գիտաժողովներում:**

**Վ.Պ. Հակոբյանն իր գիտական աշխատանքներն սկսել է տակավին ուսանողական տարիներին, տասնամյակներ շարունակ զբաղվել է կենտրոնական նյարդային համակարգի արյան շրջանառության ուսումնասիրության հարցերով: Գիտական հետազոտությունների նոր ուղղություն դարձան նրա առաջադրած սակավաշարժության եւ ֆիզիկական ակտիվության պայմաններում ուղեղային արյան շրջանառության կարգավորման մեխանիզմներին ուղղված աշխատանքները: Նա հաջողությամբ զարգացրել է ուղեղային արյան շրջանառության ինքնակարգավորման նյարդաքիմիական տեսությունը:**

**Վ.Պ. Հակոբյանն ակտիվորեն մասնակցել է մեր նորանկախ հանրապետության ստեղծման ու կայացման գործընթացին, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման արդար պայքարին, ինչպես նաեւ հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդմանը:**

**Պատշաճ ձեւով գնահատելով մեր անկախ պետականության համար ֆիզիկապես ամուր, առողջ եւ մարտունակ բանակ ունենալու եւ այն բարձրորակ զինվորական բժիշկներով ապահովելու կարեւորությունը՝ Վ.Պ. Հակոբյանի անմիջական նախաձեռնությամբ եւ ղեկավարությամբ 1994 թ.-ին Երեւանի պետական բժշկական համալսարանում հիմնադրվեց եւ մինչ օրս հաջողությամբ գործում է Ռազմաբժշկական ֆակուլտետը:**

**Հայրենիքի պաշտպանության եւ բանակաշինության գործընթացում ներդրած ուրույն ավանդի համար ակադեմիկոս Վ.Պ. Հակոբյանն արժանացել է բժշկական ծառայության գնդապետի կոչմանը, ինչպես նաեւ «Դրաստամատ Կանայանի», «Գարեգին Նժդեհի», «Սպարապետ Վ. Սարգսյանի» եւ ԼՂՀ-ի «Մայրական երախտագիտության» մեդալներով:**

**Ակադեմիկոս Վ.Պ. Հակոբյանը պարգեւատրվել է նաեւ հանրապետության մի շարք բարձրագույն պարգեւներով, ներառյալ «Մխիթար Հերացու» մեդալով, «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, արժանացել է Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակին, գիտության վաստակավոր գործչի կոչմանը:**

**Իր բազմաբնույթ գործունեության մեջ Վ.Պ. Հակոբյանը միաժամանակ ծավալել է հասարակական բուռն գործունեություն, որի շնորհիվ արժանացել է «Երեւանի պատվավոր քաղաքացի» կոչմանը, ինչպես նաեւ պարգեւատրվել է բազմաթիվ հուշամեդալներով եւ շնորհակալագրերով:**

**Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը, բարձր գնահատելով Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ Վ.Պ. Հակոբյանի ազգանվեր աշխատանքը, նրան պարգեւատրեց «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» եւ «Սուրբ Ներսես Մեծ» շքանշաններով:**

**Նա արժանացել է նաեւ «Ամենափրկիչ Քրիստոսի տաճարի» Մոսկվայի Պատրիարքության երախտավորագրին:**

**Բժշկագիտության եւ մարդասիրության բնագավառում, ինչպես նաեւ հասարակական գործունեության մեջ իր արժանի ծառայությունների արդյունքում Վ.Պ. Հակոբյանը պարգեւատրվել է Ալբերտ Շվեյցերի եւ Վերանդսկու անվան «Ոսկե աստղ» բարձրագույն պարգեւներով, Ֆ. Նանսենի անվան ոսկե հուշամեդալով եւ այլն:**

**Ներկայումս Վ.Պ. Հակոբյանն իր կուտակած փորձն ու հմտությունը ներդնում է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտահետազոտական կազմակերպություններում:**

**Ակադեմիկոս Վ.Պ. Հակոբյանի բազմաթիվ աշակերտներն ու հետեւորդները, հանրապետության եւ արտերկրի բժշկական հասարակությունը, բոլոր նրանք, ովքեր ճանաչում են Վ.Պ. Հակոբյանին, զգացել են նրա հոգատար, արտացավ վերաբերմունքը, իրենց երախտագիտության եւ հարգանքի տուրքն են մատուցում անխոնջ մանկավարժին եւ հայրենասեր քաղաքացուն, որն իր ողջ գիտակցական կյանքը նվիրաբերել է իր հայրենիքին ու ժողովրդին ծառայելու պատվավոր գործին:**

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

# Զգոնությունը չթուլացնելու կոչ

**Իմ արժանապատիվ, թասիբ-նամուսով, պատվախնդիր հայ ժողովուրդ, քանի դեռ ամբողջովին չեն իրականացել Նիկոլ Փաշինյանի թվարկած կետերը, հիմա, առավել քան երբեւէ, անհրաժեշտ է զգոն լինել, սթափ լինել եւ կարգապահ լինել: Ավելի ուշադիր է պետք լինել, քան այն ժամանակ, երբ ոստիկանները բերման էին ենթարկում: Խնդրում եմ, աղաչում եմ, խմած մի՛ նստեք ղեկին, մի՛ գերազանցեք մեքենայի արագությունը, դրսում ընդհանրապես մի՛ խմեք եւ ուրիշ խթանիչներ մի՛ օգտագործեք, փողոցները մի՛ կեղտոտեք, գազոնները մի տրորեք, մի՛ ծխեք հանրահավաքների կիպ կանգնած մարդկանց շարքերում: Ցնծությունը վիթխարի է, հուզմունքին չենք դիմանում, մարդկանց ինքնազգացողությունը ավելի հաճախակի է վատանում: Հարազատներս, սիրելիներս, կյանքս, արեւս, լուսինս (ով ինչպես որ սիրում է դիմել իր մերձավորին), եղեք բացարձակ սթափ, մաքսիմում կարգապահ, ուշադիր եւ զգոն: Կարգապահությունը յուրաքանչյուր հաղթանակի նախապայմանն է, իսկ ամեն հաղթանակ պաշտպանության կարիք ունի, քանզի ամենախոցելին հենց նոր հաղթանակ տարած մարդն է եւ ամենակատաղին՝ ռեւանշ վերցրած պարտվողը: Ժողովուրդ ջան, հաղթանակել ենք, բայց այն դեռ լիակատար չէ, դիմացեք մինչեւ նոր ընթացակարգով նոր կառավարության վերջնական հաստատումը:**

Անահիտ ԱՐՓԵՆ

# Նիկոլ Փաշա՞

⇨5

Եթե են, եթե ժողովուրդը իսկապես ուզում է, որ հենց Նիկոլը դառնա ՀՀ վարչապետ, որ քայլ անի ու մերժի Իլհամ Ալիեւին, ապա ինչո՞ւ է Նիկոլը վախենում ՀՀԿ-ի օրոք անցկացված արտահերթ խորհրդարանական ընտրություններից, որոնց պատրաստակամությունն ի դեպ, հայտարարեց Կարեն Կարապետյանը: Թող լինեն այդ ընտրությունները, եւ թող ժողովուրդը, որը հիշեցնեմ Նիկոլին ուզում է վարչապետ կարգել, գնա ընտրության, չվերցնի 10 հազար դրամը, ու իր ձայնը տա Նիկոլի կուսակցությանը, որն էլ կհաղթի, եթե ժողովուրդը նրա հետ է, խորհրդարանում կկազմի մեծամասնություն ու Նիկոլին կառաջադրի վարչապետի թեկնածու ու այդ ժամանակ նույնիսկ Շարմազանովն ու Արտաշես Գեղամյանը Նիկոլին կընտրեն:

Եթե ՀՀԿ-ն արտահերթը անցկացնի, հենց ինքն էլ կհաղթի՞, է, բա եթե ժողովուրդը միասնական է, համախմբված, մեծից՝ փոքր Հանրապետության հրապարակում «Նիկոլ» է բղավում, այդ ինչպե՞ս պետք է ՀՀԿ-ն հաղթի... Եւ ուրեմն, եթե Նիկոլ Փաշինյանը չի համաձայնում ՀՀԿ-ի առաջարկած արտահերթ խորհրդարանական ընտրություններին, ուրեմն Նիկլոը վախենում է, որ ժողովուրդը, այս դեպքում՝ մեծամասնությունը, իրեն չի ընտրելու, դրա համար էլ, քանի դեռ ժողովուրդ ասելով հասկացվում է Հանրապետության հրապարակի՝ լավ կես միլիոնը, որ «Նիկոլ» է բղավում, հրաշալի պահ է՝ վարչապետ դառնալու համար: Պահ կամ առիթ:

Մյուս կողմից, չի բացառվում, որ Նիկոլ Փաշինյանն ուղղակի չի վստահում ժողովրդին, այսինքն ինքը համոզված է, որ եթե ՀՀԿ-ն արտահերթ ընտրություններ անի, ժողովուրդը դավաճանելու է իրեն, բայց եթե առաջնորդը չի վստահում ժողովրդին, ժողովուրդն իրավունք ունի չէ՞ դա իմանալ:

Ի դեպ, առաջնորդի մասին: Ժողովրդական վարչապետ տերմինը ըստ ձեզ լավ է ինչո՞ւմ: Ասենք որքանո՞վ է այն տարբերվում ժողովրդի հայր, կամ առհասարակ հայր տերմինից: Իմ կարծիքով՝ ոչնչով, ես նաեւ կարծում եմ, որ եթե որեւէ մեկը գալիս է իշխանության (թեկուզ ժամանակավոր, թեկուզ սրիկաներին տապալելով) Սահմանադրության խախտմամբ, ապա նա ոչնչով լավը չի լինելու իր նախորդներից, որոնց դեմ պայքարում էր, քանի որ նրանք Սահմանադրություն էին խախտում: Ամեն դեպքում, հարգելի ժողովուրդ, ժողովրդական լինում է, օրինակ երգը, կամ պարը, կամ հեքիաթները, ...բայց ոչ երբեք առաջնորդը: Որտեղ առաջնորդը դարձավ ժողովրդական, այդտեղը կոչվում է բռնապետություն:

Հա, մի բան էլ. երբ Նիկոլ Փաշինյանը դառնա վարչապետ, նա պահպանելո՞ւ է ուժեղ վարչապետի ինստիտուտը, որը ստեղծվեց հատուկ Սերժ Սարգսյանի համար, թե՞ ինքնակամ հրաժարվելու է իր լիազորությունների մի մասից: Նման բան ասել է՞...

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# «Քայլ արա»

ԱՆԱՀԻՏ ԱՐՓԵՆ

Թվում էր՝ հուսալքվել ենք, չկանք ու կորսված ենք անվերադարձ, սակայն մի կայծ, եւ բոցը չուշացավ: Հերթական անգամ հայ մարդը ապացուցում է, որ ինքը վաստակել է արժանապատիվ ապրելու իրավունքը: Ազգը ազգ չէ, եթե իր մեջ չի կրում հավաքական քանքար ու չի հպարտանում իր արժանապատվությամբ, իսկ երկիրը երկիր չէ, եթե չի խրախուսում (իշխանավորների ականջը խուլ) այդ քանքարը կերտողներին ու չի փայփայում իրեն ավանդված արժեքները: Հո չե՞նք անտեսում հայ մտքի նվաճումները, ինչ է թե դրանք ստեղծվել են նախորդ դարերում: Չէ՞ որ տներից ոչ ոք դուրս չթափեց խորհրդային արտադրության սառնարաններն ու հեռուստացույցները: Մինչդեռ հայի ստեղծած ու նորանկախ երկրին այնքան անհրաժեշտ շատ արժեքներ մեր երկրի ղեկավարողների թեթեւ ձեռքերով ավերվեցին ու անմիջապես թալանվեցին: Եվ, արդեն որերորդ անգամ, հայը ստիպված եղավ ամեն ինչ նորից սկսել զրոյից:

Հայոց համազգային շարժման բուռն ալիքից մինչեւ պատերազմական տարիների նվազագույն պայմաններում ապրելը բոլորս պայքարեցինք մի շնչով: Տոկացինք, որովհետեւ ընկրկել չէր կարելի: Որովհետեւ հայրենիքն էր վտանգված: Որովհետեւ երկիր էինք կառուցում: Դիմացանք, որովհետեւ լի էինք մարդկային լույսով, ջերմությամբ, միմյանց օգնելու պատրաստակամությամբ, ապագայի հանդեպ խոր հավատով, մեր ճակատագիրը ինքներս տնօրինելու եւ մեր երեխաներին մեր երազած պետությունն ավանդելու անխորտակելի կամքով: Սակայն ինչքան բարձր ճախրեցինք մեր երազանքներում, այնքան մեծ եղավ մեր հիասթափությունը, քանզի ղեկավարումից հանելով պատասխանատվության կրումը եւ կառավարումը համարելով հնարավորինս իշխում՝ ԽՍՀՄ-ի ծանր վարագույրները բացվելիս ճանապարհին մամլվեց դարեդարյա արարչականը, եւ կուլիսներից բեմառաջ խուժեց ախտակիրը: Խաղացանկում՝ ջլատիչ ու պառակտիչ բարձրամբիոն ներկայացումներ ու ստորին ռեգիստրներում երգվող անմաքուր երգեցողություն: Աչքներս՝ էլի դեպի դուրս (որ սեռ ու հոգի փոխել տան), վզներս՝ էլի ուրիշի առաջ ծռած, որ փող տա (թեկուզ դեմքներիս թքի կամ գոտկատեղից ներքեւ զարկի)...

Անհնար է ասել, թե երբ էր ավելի դժվար՝ պատերազմի՞ օրերին, թե՞ հետո, երբ արդեն էլեկտրականություն կար, իսկ լավ կյանքի լույսը գնալով մարում էր: Նախկին արդարամարտիկները կարծում էին, թե կյանքն իրենք իրենց պատկերացրածով են փոխելու, բայց բոլորը չէ, որ հասկանում էին, թե ամեն զինվոր գեներալ չի դառնում, կամ որ կռիվը սպանություն չէ, պայքարը՝ ծեծ, իսկ փողն ու իշխանությունը չեն ազատում պատասխանատվությունից ու չեն ծնում ամենակարողություն: Բարոյական արժեքները փոխել տվեցին, չափորոշիչները անկում ապրեցին, ամենաթողությունն ու անպատժելիությունը հայոց աղբյուրները ցամաքեցրին, մարդիկ էլ բռնեցին գաղթի ճամփան, երբեմն՝ ստիպված: Ու դժվար է ասել, թե ում համար է ավելի ծանր՝ գնացողի՞, թե՞ մնացողի: Նրա՞նց, ովքեր բարձրագույն կրթությամբ սկսեցին վարորդ աշխատել, նրա՞նց, ովքեր լեզվի մաղձը հանդարտեցնելու ճար չեն գտնում, թե՞ նրանց, ովքեր ոչինչ չեն անում, բայց աշխատողից լավ են ապրում: Պատերազմից հետո սկզբի մի քանի տարին իներցիայի ուժով ապրեցինք՝ աչքներս լույս ունեցող շենքերին, հետո՝ գովազդներին: Խաբկանքը չընկալելով՝ քիչ-քիչ ընտելացանք գլխներիս կախված ահռելի վահանակներին ու մինչեւ հիմա գլխի չենք, որ ամեն փայլուն բան դեռ ոսկի չէ: Այսքան տարի մեզ քաշ տվեց միայն այն զգացողությունը, որ աշխատանք ունենք: Ու թաթախվեցինք հնարավորինս ճահճաբար:

Կշտացանք, այլեւս: Ժամանակն է նորից որոնք հնդրելու, թացը չորից զանազանելու, կողմնակի ազդեցություններից ձերբազատված ընտրելու, պետքականը աշխատեցնելու, ամեն ինչ երկրի ու ազգի շահերին ծառայեցնելու, հատկապես՝ տնտեսության մեջ: Իսկ ինչը որ անհրաժեշտ է տալ, հարկ է, որ ինքներս տանք, ոչ թե խփենք գլխներիս, վերցնեն, մանավանդ այն, ինչը պետք չէ, որ մեզնից, ազգից կամ երկրից դուրս գա: Շատ ենք տառապել, շատ ենք կորսվել, բայց երեւում է դեռ լրիվ չենք հանձնվել, թեեւ այս տարիներին ինչ ստեղծեցինք, գրեթե արցունքաթաթախ ստեղծեցինք: Նախ՝ Հայոց գնահատական կամ պատիժ կհասցներ: Այլապես, շնորհաշատ հայի քանքարը հիմա վաղուց էր հրաշքներ գործել:

Աշխարհը հերթական պահին է ականատես լինում, որ արհավիրքի օրերին հայը պատնեշի նման կանգնում է չար հեղեղի առաջ: Հպարտանանք եւ այլեւս թույլ չտանք, որ սա էլ ուրիշն իր շահերին ծառայեցնի: Հայոց, շատ բան տեսած սարերն անթեղել են ազգի բոլոր իրադարձությունները, եւ ապառաժներն անգամ տեսել են, որ պատմության քառուղիներում հայը չի կորչում: Կոտորում են, կոտորվում է, ճնշում են, ճնշվում է, պակասում է, հարմարվում է, բայց եւ մի օր ընդվզում է, պայքարի ելնում ու ազատագրվում է: Ուրեմն, ժամանակն է, որ մեր իշխողները առաջին հերթին իրենց անհագուրդ կրքերը չափավորեն, թույլ տան, որ ժողովուրդը աշխարհի հետ իր տալիք-առնելիքը նժարավորի, իր ու-



ժերն ու ռեսուրսները ճիշտ բաշխի, ավերվածն ու աղավաղվածը կարգավորի, որպեսզի ի վերջո կարողանանք մեր բնօրրանում մեր քննաջան աշխատանքով ամեն մեկս մեր վար ու ցանքն անել ու հնարավորություն ստանանք մեր արդար քրտինքով մեր հո՛ղը ջրել, ոչ թե իշխողի գրպանը: Որպեսզի երկրին պետքական բերք ստանանք: Որպեսզի այլեւս մեր կյանքը եւ երկիրը կարգավորե՛նք, մեր ճակատագիրը մենք ուղղորդենք: Մենք ազգ ենք, մենք երկիր ունենք: Օրենքներ ու օրենսդիրներ ունենք (անօրինությունները վկա), կառույց ենք, միջազգային հարթակում մեր տեղն ունենք, մնում է աշխատենք, ոչ թե ձեւացնենք, թե գործ ենք անում (այսօր անունը կա, ամանումը չկա): Մենք ներուժ ունենք մեր երկիրը շենացնելու համար: Մենք արարող զարմ ենք, բայց օտար ափերում ենք բախտ որոնում: Նույնիսկ ռեպրեսիաներից հետո եւ հատկապես օտարի լծի տակ մեր հզոր գործիչներն ամենուր հայոց մշակույթը զարգացրել են, գիտական նվաճումներ ունեցել ու տնտեսություն են առաջ մղել: Եվ ուրիշները հաշվի են նստել մեզ հետ: Ուրեմն ինչո՞ւ դա չենք կարող անել «անկախ» կարգավիճակ ունեցող երկրում: Այլեւս պետք է, որ հայոց կյանքի անիվը «Գեղ կանգնի, գերան կկոտրի» սկզբունքով տնտեսությունը առա՛ջ մղի, ոչ թե քանդի: 25-27 տարին քիչ չէր երկիր շենացնելու համար, բայց պատասխանատուները թքած ունեցան, գնալով՝ ավելի քամահրաբար:

Եվ դրա տրամաբանական արձագանքն էր այս համաժողովրդական ընդվզումը (անկախ հանրահավաքների ու ակցիաների մասնակիցների թվաքանակից): Այն ինչ կատարվում էր, հայության արդարացի պահանջն էր, որը ազգաբնակչությունը իրականացրեց օրինավոր ու զանցանքներ թույլ չտալու հորդորներով: Եվ ամեն մարդ, լինի քաղաքացի, թե ոստիկան, իշխող, թե իշխվող (մարդկային, թե անմարդկային), ամեն մեկը, ինչի որ ինքն է ընդունակ, իրեն արժանի քայլն արեց:

բանակ (ծնողների ամենամյա տոնլիկները վկա): Ապա՝ Արցախը, որը Նախիջեւանի ճակատագիրը չունեցավ, աշխարհի հետ ինքնուրույն հարաբերվեցինք (էլի լացելու վիճակ է), օտարալեզու դպրոցների հաղթարշավը կասեցվեց (տա աստված, որ հայրենի վիճակը բարելավվի), մայրենի լեզուն պարտադիր դարձավ պետականորեն (մնաց պետականությունը մայրենի դառնա), մեր ազգի պատմությունն սկսեցինք ուսուցանել (կեղծումներով), որ մեր կյանքով ապրենք վերջապես (կեղծավորաբար): Մե՛ր սերիալները ծնվեցին (որակը թելադրվող բան է, այստեղ արցունքների միջից ավելի հեշտ կլինի ծիծաղելը), շատ հարցեր իրենց բնականոն զարգացումը պարտադրեցին (լավից վատ), ամենակարեւոր խնդիրներին բանի տեղ դնող չեղավ (այդ պատճառով են հիմա դրանք փողոցներում աղաղակվում): Ինչքան զարգացանք, այնքան մարդավայել գոյատեւելու պահանջով մեր սոցիալական կյանքի լացը խեղդեց, խլացրեց աղետների, պատերազմի ու եղեռնի ողբերը: Պայքարի ու պատերազմի ծանր պայմաններում արյունքրտինքով, առողջությամբ, չվայելած մանկությամբ, պատանեկությամբ կամ երիտասարդությամբ նվաճած, մեր իսկ սնած, բայց չտեսած «անկախությունը» պահպանելը այդ նույն անկախության սերնդի՝ այսօրվա երիտասարդության համար առավել թանկ է եւ վեր է ամեն ինչից: Հատկապես նրանց համար, ում գլխին իջավ նաեւ պատերազմի իրողությունը եւ ուսերին ծանրացավ հաղթանակի հարցը: Մարդիկ այլեւս սրբություններ զոհաբերելու տեղ չունեն, չեն ուզում հայոց կարկաչահոս աղբյուրների քարաշատ պատերը հերթական անգամ տեսնել գործ սվաղով ծածկված, հրաժարվում են ամենուր թմբկահարվող հաշիշից, թե իբր ոչինչ հնարավոր չէ փոխել: Ում բռունցքն ասես իջել է մեր գլխին, իսկ հայրական հոգատար մասը չի եղել, որն ամեն մեկին իր տեղը ցույց կտար, մարդկանց գործ, արժանի

AZG NEW SHABAT.QXD 26/04/2018 22:55 Page 11



# Իրանն ամրապնդում է թիկունքը՝ խորացնելով կապերը ՌԴ-ի ու ՉԺՀ-ի հետ

*Նավթային գործարքներում դոլարը կփոխարինվի եվրոյով*

Իրանի բանակի հրամանատար **Մուսավին** օրերս հայտարարեց, որ «բանակը կշարունակի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) հետ համագործակցել այնքան ժամանակ, քանի դեռ աշխարհում չի փլուզվել գերիշխանական համակարգը եւ չի ոչնչացել սիոնիստական վարչակարգը: Այդ վարչակարգի ոչնչացումը, անկասկած, տեղի կունենա ամենաուշը քսանհինգ տարի հետո»: Նրա խոսքերով, ԻՀՊԿ-ն պատասխանատվություն է կրում 1979 թ. Իսլամական հեղափոխության պաշտպանության համար:

Տվյալ հայտարարությունն անչափ կարեւոր է, եթե նկատի ունենանք իրանյան իրողությունները եւ այն հանգամանքը, որ վերջին տարիներին ԱՄՆ-ը եւ Եվրոմիությունը իրենց մեղադրանքների նշանակալի մասը հասցեագրել են հենց ԻՀՊԿ-ին: Նույնիսկ ձմռանը ԱՄՆ-ի, ԵՄ-ի եւ Իսրայելի բարձրաստիճան ղեկավարների հայտարարություններում ակնհայտորեն երեւում էր, որ Իրանի հավանական հակառակորդները ԻՀՊԿ-ի նկատմամբ իրանական հասարակության մեջ անվստահություն սերմանելու հույսեր են փայփայում:

Արեւմուտքի հույսերի զգալի մասը կապված էր այն բանի հետ, որ պառակտում ու թշնամանք ստեղծվի ԻՀՊԿ-ի եւ բանակի փոխհարաբերություններում: Ճիշտ է, անցյալում բանակի եւ ԻՀՊԿ-ի միջեւ եղել են վեճեր, բայց ոչ հակամարտություններ: Խոսքը հիմնականում այն մասին էր, թե ով է ավելի մեծ դեր խաղացել Սադդամ Հուսեյնի դեմ մղված պատերազմում եւ Իրանի 1979 թ. Իսլամական հեղափոխության մեջ: Այդ վեճերը հարթելու նպատակով այաթոլլահ Խամենեին ստեղծեց երկրի բոլոր զինված ուժերի եւ ԻՀՊԿ-ի հրամանատարի պաշտոն:

Իր ապրիլյան հայտարարության մեջ Մուսավին փաստորեն հասկացրեց, որ բանակի եւ ԻՀՊԿ-ի միջեւ հակամարտություն չի լինելու առաջիկա 25 տարում՝ մինչեւ սիոնիստական վարչակարգի ոչնչացումը: Մուսավիի հայտարարության երկրորդ նպատակը՝ աշխարհում ԱՄՆ-ի գերիշխանական նկրտումների խափանումը, ժամկետներով սահմանափակված չէ:

Իրանում դեպքերի վերջին զարգացումների առնչությամբ հարկ է նշել, որ երկրի պետական բոլոր լրատվամիջոցների հաղորդումների համաձայն, երկրի իշխանությունները ապրիլի 18-ից բոլոր պետական մարմիններին արգելել են հաղորդակցության համար օգտագործել արտասահմանյան հավելվածներ: Դրանց մեջ գլխավորը Telegram-ն է, որը շուրջ 40 հազար իրանցիներ օգտագործում են ինչպես շփումների, այնպես էլ առեւտրի եւ քաղաքական արշավների համար: Գերագույն հոգեւոր առաջնորդ այաթոլլահ Խամենեին ապրիլի 18-ից դադարեցրել է Telegram-ի օգտագործումը հանուն ազգային շահերի եւ ի նշան հայրենական տարբերակների պաշտպանության:

Անշուշտ, Իրանի իշխանությունների գործողությունները կապված են այն բանի հետ, որ, ավելի վաղ, Ռուսաստանում արգելվել էր վերոհիշյալ հավելվածի օգտագործումը, քանի որ դրա ղեկավարները հրաժարվել էին իշխանություններին փոխանցել ծածկագրման տվյալները:

Ս.թ. մարտին Թեհրանի իշխանությունները հայտարարել էին Telegram-ն արգելելու մտադրության մասին, քանի որ «քայքայիչ տարրերը» անցյալ տարեվերջից մինչեւ օրս հաղորդակցման այդ միջոցն օգտագործել էին բողոքի ելույթների ժամանակ: Երկրի իշխանությունները կարող են Telegram-ը փոխարինել սեփական տարբերակով, իսկ արտասահմանյան կապի միջոցներին երկրում գործելու թույլտվություն տալ լոկ այն դեպքում, եթե դրանք իշխանություններին փոխանցեն իրենց տվյալների բազան:

Իրանի Մեջլիսի միջուկային հարցերի հանձնաժողովի նախագահ **Մոջաբ Զոնուրին** օրերս միջուկային հարցերին նվիրված իրանա-չինական համատեղ կոնֆերանսում հայտարարեց. «Թեհրանը եւ Պեկինը բանակցեցին Իրանում փոքր ատոմակայանի կառուցման շուրջ»: Չինաստանի կազմակերպած կոնֆերանսին մասնակցում էին Իրանի հետ կնքված միջուկային համաձայնագրի մասնակից «Մեծ վեցյակի» երկրները: Նա հայտարարեց, որ Իրանի պատվիրակության Չինաստան կատարած այցը եղել է արգասավոր եւ որ Չինաստանը ողջունում է Իրանում ատոմակայան կառուցելու գաղափարը:

Եթե ՉԺՀ-ի հայտարարած ատոմակայանի շինարարությունը սկսվի, ապա դա կդառնի այն բանի ապացույցը, որ չին-իրանական հարաբերությունները իրոք ռազմավարական բնույթ ու նշանակություն ունեն: Տվյալ հանգամանքը պետք է նկատի ունենան Իրանի ոչ միայն հակառակորդները, այլեւ բարեկամները, այդ թվում՝ նաեւ Անդրկովկասում:

Ինչ վերաբերում է իրանա-ռուսական հարաբերություններին, ապա հարկ է նշել հետեւյալ տեղեկությունը: Իրանի կրթության նախարար **Սեյեդ Մահդի Բաթային** հայտարարել է, որ երկրի կառավարությունն ուզում է վերջ դնել որպես երկրորդ օտար լեզու անգլերենի մենատիրությանը եւ ուսումնական ծրագրերում ընդգրկել նաեւ ուրիշ լեզուներ, ներառյալ ռուսերենը: Իր հերթին, Ռուսաստանը նախատեսում է դասավանդվող օտար լեզուների ցանկում ընդգրկել ֆարսի լեզուն:

Դեռ ապրիլի սկզբներին Մոսկվայում Իրանի դեսպան **Մեհդի Սանաին** հայտարարել էր, որ երկու երկրները որպես Եվրասիական տնտեսական միության անդամներ համաձայնության են եկել արտոնյալ սակագների շուրջ եւ պատրաստ են ամենամոտ ժամանակներս համաձայնագիր ստորագրել: Նրա խոսքերով, Եվրասիական տնտեսական միությանը Իրանի անդամակցությունը թույլ կտա դյուրացնել առեւտրափոխանակությունը մաքսատուրքերի նվազեցման միջոցով: Ըստ դեսպանի, ամենայն հավանականությամբ Իրանը կանդամակցի առեւտրատնտեսական միությանը. այդ մասին խոսվել է մարտին կայացած փորձագիտական հանդիպման ժամանակ:

Ի դեպ, նավթի վաճառքի միջազգային գործառնություններում իրանցիները այսուհետեւ կհրաժարվեն ամերիկյան դոլարից եւ այն կփոխարինեն եվրոյով: Մի շարք այլ երկրների հետ մեկտեղ Թեհրանը վաղուց առաջ է քաշել դոլարից հրաժարվելու գաղափարը:

Իրանի միջուկային ծրագրին նվիրված 2015 թ. վեցակողմ համաձայնագրի ստորագրումից հետո ԱՄՆ-ն շարունակում է խոսել հակաիրանական պատժամիջոցների անհրաժեշտության մասին եւ մինչեւ օրս ամբողջովին չի վերացրել դրանք: Սակայն պատժամիջոցների իրական պատճառն այն է, որ իրանցիները Մերձավոր Արեւելքում վարում են ԱՄՆ-ին անհաճո քաղաքականություն եւ մասնավորապես աջակցում են Սիրիայի նախագահ Բաշար Ասադին: ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը Մերձավոր Արեւելքում կազմում է հակաիրանական զանազան կոալիցիաներ, հայտարարում Իրանի միջուկային ծրագրին նվիրված համաձայնագրից դուրս գալու մտադրության մասին, չի թաքցնում Թեհրանում վաշինգտոնամետ քաղաքական ուժերին իշխանության բերելու միտքը:



2018 թ. ապրիլին Իրանի կենտրոնական բանկը սահմանեց քաղաքացիների առձեռն արտարժույթի պահպանման առավելագույն քանակությունը, որը կազմում է 10 հազար եվրո: Սակայն ինտրիգն ուրիշ բանում է. միջազգային հաշվարկներ կատարելիս Իրանն ինչո՞ւ է դոլարից անցնում եվրոյի, այլ ոչ թե չինական յուանի, եթե նկատի ունենանք, որ Պեկինը երկկողմ գործարքներ կնքելիս լայնորեն օգտագործում է ազգային արժույթը եւ ձգտում է հասնել համաշխարհային ֆինանսական համակարգի փոփոխմանը: Հիշեցնենք, որ դեռ 2012 թվականին Չինաստանի հետ կատարվող առեւտրում Թեհրանն անցել էր յուանի օգտագործմանը: Այն տպավորությունն էր ստեղծվում, թե Թեհրանն աստիճանաբար շարժվում է Պեկինի ուղղությամբ, որն իրանական նավթի խոշորագույն գնորդն էր:

Բացի դրանից, Պեկինը վերջերս հայտարարեց, որ ստեղծվում է չին-ռուսական առեւտրում յուանով եւ ռուբլով վճարումների իրականացման միջբանկային համակարգ: Ըստ չինացիների՝ դրա նպատակը դոլարից այլ արժույթների անցնելն է:

Իրանցիների դիրքորոշման բացատրությունը ակնհայտ է թվում: Բանն այն է, որ Եվրոմիությունը հանդես է գալիս իրանական միջուկային ծրագրին նվիրված վեցակողմ համաձայնագրի պահպանման օգտին: Թեհրանը ձգտում է այս առումով ստանալ Բրյուսելի աջակցությունը: Սաուդյան Արաբիայից հետո Իրանը եվրոպացիների հետ կատարվող առեւտրում զիջում արեց սեփական էներգակիրների վաճառքի հարցում, սակայն բարձրացրեց գները ասիական ընկերությունների հետ կատարվող առեւտրում: Եվրոյին անցնելը տեղծում է հաշվարկների զուգահեռ համակարգ: Միեւնույն ժամանակ, կարելի է ենթադրել, որ Թեհրանը հեռանկարում Պեկինին չի համարում իր էներգակիրների գլխավոր գնորդ:

Սրա արդյունքում Իրանն ու Ռուսաստանը էներգակիրների վաճառքի հարցում կկիսեն Եվրոպայի շուկան, իսկ Ռուսաստանը իր ավելցուկները կառաքի Ասիա: Թեհրանում կարծում են, որ նավթային գործարքներում եվրոյին անցնելը առանձնակի բարդություններ չի առաջացնի, քանի որ Իրանի արտաքին առեւտրական գործառնությունների մի փոքր մասը շարունակում է իրականացվել դոլարով:

Հարկ կլինի, որ Իրանի հարեւան երկրների իշխանությունները եւ ընդդիմությունը իրենց արտաքին քաղաքական գործողություններում սեփական քայլերը համապատասխանեցնեին Իրանի, Չինաստանի եւ Ռուսաստանի ընդհանուր ձգտումների հետ, կարծում է «Ռեգնում» գործակալությունը:

Գ.Ք.

## Նոր զեկույցը մանրամասնում է Գերմանիայի մեղսակցությունը

Գերմանական «Դոյչե վելլեն» հրատարակել է «Global Net-Stop the Arms Trade» (GN-STAT), զենքի առեւտրի դադարեցումը պահանջող գլոբալ ցանցի հայտարարություն-զեկույցը, համաձայն որի օսմանյան բանակում ծառայող գերմանացի սպաներ ակտիվորեն մասնակցել են առանձին անհատների սպանություններին: Նրանք ականատես են եղել եւ իրենց ընտանիքներին գրած նամակներում գրել կոտորածների մասին: «Գերմանական ռայխը Օսմանյան կայսրությանն էր մատակարարել միլիոնավոր զենքեր (հրացաններ, կարաբիններ, ատրճանակներ, Էսսենում Krupp գործարանի արտադրած հրանոթներ եւ այլն), որպեսզի իրականացնի հայերի ցեղասպանությունը: Նրանք նաեւ «քաղաքական հիմնավորումն էլ հուշեցին թուրքերին», գրված է զեկույցում, որն առաջին անգամ մանրամասներ է պարունակում «Մաուզեր» եւ «Կրուպ» զենք արտադրող գործարանների գործունեությանց մասին: Զեկույցի հեղինակը **Վուլֆգանգ**



**Լանդգրեբերն** է, ֆիլմարտադրիչ, որը տարբեր ֆիլմեր է պատրաստել գերմանական զենքի արտահանումների մասին: Նա օգտագործել է 1915-ին Ուրֆայում գտնվող մայոր Գրաֆ Էբերհարդի Վուլֆսքելի նամակներում տրված տեղեկությունները: Վուլֆսքելը օսմանյան բանակի 4-րդ զորամասի հրամանատարի տեղակալ Ֆահրի փաշայի աշխատակազմի ղեկավարն էր եղել: Զեկույցում Լանդգրեբերն օգտագործել է նաեւ գեներալ-մայոր Կոլմար Ֆրեհեր վոն դեր Գոլցի վկայությունները: Վերջինս 1883-ին դարձել էր օսմանյան դասարանի կարեւորագույն զինվորական խորհրդատուն: Նա հպարտությամբ հոխորտացել է անընդհատ, որ մեծ դեր է կատարել «Մաուզեր» եւ «Կրուպ» գործարանների զենքերը Թուրքիա արտահանելու գործում: Հայերի հանդեպ ատելություն է դրսեւորել եւ Սուլթանին հորդորել միանգամընդմիշտ վերջ դնել հայկական հարցին: Գոլցը Գերմանիայում էլ նույն դիրքորոշումն է ունեցել Ռայխի թշնամիների հանդեպ, որոնց դեմ ոչ թե պայքարելու կոչ է արել, այլ անխնա բնաջնջելու: Հիտլերն օգտվել է նրա հորդորներից:

Հ.Ծ.

# 11 օր, որ փոխեցին Հայաստանը

⇨1

-21-րդ դարի հետ կատակել կամ հաշվի չնստել չի կարելի՝ 21-րդ դարի տեխնոլոգիաները երիտասարդները լայնորեն կիրառեցին:

-Կար համացանց, որ շատ դեպքերում կազմակերպական գործիք դարձավ, դա ինքնին տեխնոլոգիա է, որը մեր օրերում նպաստում է արագ իրազեկմանն ու ինքնակազմակերպմանը:

Այդպիսով՝ հարկավոր եղավ ընդամենը 11 օր՝ ծանրաշարժ իշխանությանը մարդաշատ փողոցի փաստի առաջ կանգնեցնելու համար՝ ընդհուպ իշխող ուժի վարչապետի հրաժարական, իսկ դրանից առաջվա եւ հետոյի Հայաստանները տրամագծորեն տարբերվում են իրարից: Հոգնեցրած, նորին անհաղորդ դարձած եւ նախաձեռնողականությունից կիլոմետրերով հեռու դեմքերից հայերի զգալի հատված հայացքն ուղղեց համակրելի եւ նախաձեռնող երիտասարդների ու նրանց առաջնորդի հուսադրող դեմքերին: Այժմ փողոցը դոմինանտ է դարձել պետության կյանքում, թավշյա հեղափոխությունը պայմաններ է թելադրում, իսկ նրա առաջնորդ Նիկոլ Փաշինյանը հավակնում է դառնալ վարչապետ, ձեւավորել ժամանակավոր կառավարություն՝ հետագայում օրենսդրության փոփոխությունից հետո Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ կազմակերպելով եւ նոր իրավիճակն արտացոլող Ազգային ժողով ձեւավորելով: Կարելի է անգամ ասել, որ այս ապրիլից սկսվում է Նիկոլի թիվը, ինչպես նրա կողմնակիցներն են կատակում:

Չգիտեմ ինչով կավարտվի այս ամենը, սակայն Նիկոլին, որը Հայաստանի անկախացմանը բերած առաջին շարժման ժամանակ ընդամենը դեռահաս էր, ուզում եմ հիշեցնել այն ժամանակվա հեղափոխական էյֆորիային հաջորդող քաոսի ու սխալների մասին, որոնցից ամենաէականն այն էր, որ հեղափոխություն կատարած նվիրյալները չկարողացան կամ չուզեցին փակել սովորաբար հեղափոխություններից հետո իրենց վրա լցվող պատեհապաշտների ու սրիկաների ճանապարհը, կադրային անասելի սխալ քաղաքականություն տարան, իշխանության ղեկի մոտ թողեցին արկածախնդիր եւ իրենցից ոչինչ չներկայացնող մարդկանց, որոնք հետագայում թալանեցին ու սնանկացրին Հայաստանը: Ընդ որում՝ նրանցից շատերն այսօր էլի ձիու վրա են: Իսկ Հայաստանի անկախության ուրախությանը զուգահեռ, վատ կառավարման ու Հայաստանի ունեցվածքը մեջ-մեջ անելու պատճառով տարիներով երկրում առկա էին անհուսություն, արտագաղթ, ապօրինություններ, որոնք խորացել էին նաեւ վերջին տարիներին: Չգիտեմ ինչպես պիտի չկրկնվեն այդ սխալները: Եթե էյֆորիայի մեջ գտնվող փողոցին թվում է, թե Հայաստանում անմիջապես պիտի սկսեն լավ ապրել, մարդկանց վարկերը պետք է Նիկոլն իր գրպանից վճարի, իսկ փողոցում հեղափոխական կոչ բղավող ամեն ավարա, անկախ որակներից պետք է պաշտոն ստանա, ապա նրանց պիտի բացատրող լինի, որ դա այդպես չէ, ու տեւական աշխատանք պիտի կատարվի ինչ-որ բան փոխելու համար, այն եւս՝ եթե այսօրվա տնտեսական կլանները սաբոտաժով ու հակաիրավական զանազան հնարքներով անփորձ հեղափոխականներին ընդհանրապես հնարավորություն չտան աշխատելու: Չծեծեմ ասույթը՝ հեղափոխութուն անող նվիրյալների եւ հետո իշխանության եկող սրիկաների վերաբերյալ, ամեն բան հայտնի է: Հուսով եմ՝ Փաշինյանը դա հասկանում է, համենայնդեպս՝ նա իր վերջին հրապարակային կարծիքներում խոսում է պրոֆեսիոնալների աշխատանքը պետական կառույցներում շարունակելու, կադրային ջարդը բացառելու մասին:

## Նայենք Սահմանադրությունը

Վերջին երկու օրը, երբ Հայաստանում կա վարչապետի լիազորություններն իրականացնող Կարեն Կարապետյանը, եւ նրա ու Նիկոլ Փաշինյանի միջեւ երկխոսության չկայացման մասին հակասական տեղեկատվության առկայությամբ մեկ անգամ չէ, որ բացել ենք Սահմանադրությունը, որի 149-րդ հոդվածում վարչապետի հրաժարականից հետո յոթ օրվա մեջ ԱԺ խմբակցությունների կողմից առաջարկվող վարչապետի նոր թեկնածուի մասին է խոսվում, առանց հրաժարական տված վարչապետի լիազորությունները ժամանակավորապես ինչ-որ մեկին փոխանցելը ֆիքսելու: Բայց մի ուրիշ հոդվածով, այնուամենայնիվ, հասկանալի ձեւակերպվում է, որ փոխվարչապետներից մեկը կատարում է վարչապետի պարտականությունները: Պարզ է, որ առաջին փոխվարչապետը պետք է ժամանակավորապես, այդ յոթ օրում վարչապետի լիազորություն իրականացնի, մինչեւ նոր վարչապետի ընտրություն: Դրանից հետո նոր կառավարությունն էլ կազմվում է վարչապետի նշանակումից հետո տասնհինգօրյա ժամկետում: Եթե դրանից Կարեն Կարապետյանը եզրակացրել է, որ ինքը կարող է նոր քաղաքական իրավիճակում արտահերթ ընտրություններ առաջարկելուց խոսել, ու անգամ վարչապետի թեկնածու առաջադրվել ՀՀԿ-ի կողմից, որն, ի դեպ, դեռ չի որոշել այդ հարցում իր անելիքը, ապա այստեղ ի տեղի կլինեին իսկապես չեզոք իրավագետների մեկնաբանությունները: Մենք առայժմ ֆիքսենք, որ սահմանադրականության ճանապարհով քայլեր անելու մտադրություն ունեցող Փաշինյանը այս պահին 9-ը պատգամավոր ունի, գումարած կոալիցիայից դուրս եկած ՀՅԴ-ի 7 ու Փաշինյանի շարժմանը միացած «Ծառուկյան» դաշինքի 31 քվեները, չնայած այս դաշինքի ներկայացուցիչ Նաիրա Զոհրաբյանը հորդորում է այս մասին խոսել, երբ քաղաքական ուժերն ավարտեն քննարկումները եւ հայտարարեն իրենց դիրքորոշումը: Համենայնդեպս Գագիկ Ծառուկյանի եւ Նիկոլ Փաշինյանի միջեւ կայացած հանդիպումների մասին տեղեկությունները հուշում են մեր կողմից վերն ասվածը: Ծառուկյանի կողմնակիցների միանալը ցուցարարներին, իրոք, նվազեցրել է Կարապետյանի շանսերը, որն, ըստ տարբեր լուրերի, անգամ ՀՀԿ խմբակցության քվեն չունի: Սակայն, ինչպես ԱԺ փոխնախագահ Է. Շարմազանովն ասաց երեկ, ՀՀԿ-ն փողոցի ընդդիմության հետ բանակցելու մանդատը տվել է Կարեն Կրապետյանին: Այժմ պետության ճակատագրով մտահոգ բոլոր ուժերի ու գործիչների ակտիվ շփումների ու ելքերի որոնման շրջան է: Մի բան կարելի է խիստ դրական գնահատել. չնայած մի քանի անգամ փողոցում իրավիճակը սրվեց՝ ցուցարարների ու իշխանության օգտին կարելի է գրանցել, որ ուժային լայնածավալ մեթոդներ չկիրառվեցին՝ առիթ չտալով աշխարհի ուժային կենտրոններին խառնվելու մեր գործերին ու չեզոքություն պահպանելու գոնե առերեւույթ:

Եթե Նիկոլ Փաշինյանը դառնա վարչապետ, ձեւավորի իր ասած ժամանակավոր կառավարությունը, ապա նրա ասած արտահերթ խորհրդարանական ընտրությունների իրավական հիմնավորման խնդիրը դեռ պետք է կարգավորել: Մինչ այդ էլ միգուցե ՀՀԿ-ն կպառակտվի, ու այնտեղ կմնան մի 15՝ ՀՀԿ-ի սուպերնվիրյալներ, որոնք այս խորհրդարանում կդառնան ընդդիմություն, իսկ մնացյալը կանցնեն «Ծառուկյան» դաշինք, «Ելք»՝ համալրելով խորհրդարանի նոր մեծամասնությունը, այսինքն՝ առնետավազք կլինի: Խորհրդարանի նոր մեծամասնությունը կընտրի խորհրդարանի նոր ղեկավարություն, ելնելով նոր քաղաքական իրավիճակից: Համենայնդեպս՝ ԱԺ «Ելք» խմբակցությունն արդեն վարչապետի թեկնածու է առաջադրել Փաշինյանին, եւ վերջինս էլ հանրահավաքում խոսում էր խորհրդարանով վարչապետ դառնալու սցենարի օգտին: Բացի այդ՝ նա կարծես տրամադրված է համաձայնության կառավարություն ստեղծելուն առայժմ՝ պահպանելով նախարարների մի մասին, խոսում է կադրային ջարդ չիրագործելու, վենդետա չանելու, բիզնեսը չվերաձեւելու օգտին: Ներհայկական թշնամանքի էջը փակված է, ասում է նա, օլիգարխները չեն փոխարինվելու, փոփոխությունները պոզիտիվ են լինելու, արտաքին քաղաքականության կտրուկ շրջադարձ չի լինելու, արտաքին հարաբերությունները պետք է լավանան՝ բոլոր ուղղություններով, եւ ոչ՝ մեկը մյուսի հաշվին: Նիկոլը խոստանում է նաեւ փոփոխել օրենսդրությունը՝ վարչապետի լիազորությունների մի մասը վերադարձնել նախագահին:

Վարչապետի ընտրությունը մայիսի առաջին օրն է, ԱԺ հատուկ նիստում այդ մասին երեկ հայտարարեց ԱԺ նախագահ Արա Բաբլոյանը: Հիմա խորհրդարանական ուժերը քննարկում են, թե ինչպես են մասնակցելու՝ սեփական թեկնածուով, թե՞ քվեարկելու են Փաշինյանի օգտին. մինչեւ ապրիլի վերջին օրը որոշում կայացնելու ժամանակ կա:

Իսկ թե ինչ կլինի, եթե փորձ արվի չճանաչել ժողովրդի թեկնածուին, կամ անցկացնել ՀՀԿ-ական թեկնածուի, ըստ Փաշինյանի, նորից ցուցարարները կսկսեն շրջափակել կառավարական շենքերը:

Չնայած՝ ՀՀԿ-ն հազիվ թե ուղղի մեջքը, չնայած ՀՀԿ-ականների վերնախավը խոսում է այս կուսակցության միասնականության մասին, համենայնդեպս նրանց եւս, այսպես ասած, «թասիբի է գցել» նախագահ Արմեն Սարգսյանը՝ իր ուղերձում նշելով. «Այնպես, ինչպես Սերժ Սարգսյանը սթափ գնահատականով բացեց Նոր Հայաստան տանող դարպասը, նույն կերպ քաղաքական բոլոր ուժերը, հատկապես՝ Ազգային ժողովում ներկայացված, պետք է համերաշխաբար հարթեն այդ ճանապարհը՝ առաջնորդվելով Սահմանադրությամբ»: Հուսով ենք՝ մեր ընթերցողը ծանոթ է ե՛ւ Սերժ Սարգսյանի հրաժարականի տեքստին, ե՛ւ հետագա մանրամասներին:

Այս հրապարակումը պատրաստել էինք երեկվա հանրահավաքից առաջ, ուր Նիկոլ Փաշինյանը պետք է անդրադառնար իր նախաձեռնած շարժման հետագա ճանապարհային քարտեզին:

***Հ.Գ.-*** *Երեկ Նիկոլ Փաշինյանը «Մարիոթ Արմենիա» հյուրանոց, լրագրողների ներկայությամբ բանակցությունների հրավիրեց վարչապետի պաշտոնակատար Կարեն Կարապետյանին: Ավելի վաղ ՀՀԿ- ն հայտարարել էր, թե կուսակցությունը պատրաստ է առանց նախապայմանների բանակցությունների: Ինչպես հայտնի է, նույն վայրում, ապրիլի 21-ին Ն. Փաշինյանի եւ Սերժ Սարգսյանի հանդիպումը ավարտվել էր դեռեւս չսկսված՝ ընդդիմության ղեկավարի առաջադրած կապիտուլացիոն օրակարգի պատճառով:*

*Տեսնենք այս անգամ ի՞նչ օրակարգ դեմ կտա Փաշինյանը՝ ՀՀԿ-ի «առանց նախապայմանների» պատրաստակամության դիմաց:*

VIVACELL MTS

## ՎիվաՍել-ՄՏՍ.վերածե՛ք ներցանցային րոպեները մեգաբայթերի

ՎիվաՍել-ՄՏՍ-ը տեղեկացնում է, որ մինչեւ 2018թ. մայիսի 10-ը «Viva» կանխավճարային եւ հետվճարային սակագնային պլանների բաժանորդները (բացառությամբ «Viva 1500» կանխավճարային սակագնային պլանի բաժանորդների) կարող են իրենց սակագնային պլանով տրամադրվող ներցանցային րոպեները վերածել մեգաբայթերի:

1 րոպեն = 1 ՄԲ

Փոխանակման համար անհրաժեշտ է ուղարկել *888*րոպեների թիվը# հրահանգը: Այսպես, ուղարկելով *888*1000#՝ բաժանորդը ստանում է 1000 ՄԲ ինտերնետ:

Փոխանակված ՄԲ-երը կանխավճարային բաժանորդները կարող են օգտագործել մինչեւ «Viva» սակագնային պլաններով տրամադրվող փաթեթների գործողության ժամկետի ավարտը, իսկ հետվճարային բաժանորդները՝ մինչեւ օրացուցային ամսվա վերջին օրը:

Գործողության ժամկետից շուտ փաթեթներից որեւէ մեկը սպառելու դեպքում կարելի է ընթացիկ սակագնային պլանի փաթեթները վերաակտիվացնել՝ հավաքելով *161*4#. այդ դեպքում, չսպառված մյուս փաթեթները, ինչպես նաեւ փոխանակված ՄԲ-երը զրոյանում են եւ ակտիվանում են նոր փաթեթներ, որոնց գործողության ժամկետը կազմում է 30 օր:

***Փոխանակումից հետո խոսելաժամանակի մնացորդը պետք է կազմի առնվազն 500 րոպե: Փոխանակված ՄԲ-երը հասանելի չեն ռոումինգում:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.mts.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը: Մեր նորություններին մշտապես ծանոթ լինելու համար միացեք մեզ Ֆեյսբուքում՝ https://www.facebook.com/MTSArmenia/

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 26.4.2018, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2:

AZG NEW MSHAKUIT.qxd 26/04/2018 21:01 Page 1

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՒՅԹ
Թիվ 16(376)
27 ԱՊՐԻԼ
2018

# ՌՈՒԴՈԼՖ ԽԱՌԱՏՅԱՆ. «Մեր խնդիրն է՝ հասնել հայի արքետիպին»

**Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ**

*Պարող, պարուսույց, պարադիր, նկարիչ, Հայաստանի ժողովրդական արտիստ Ռուդոլֆ Խառատյանը վերջերս է վերադարձել Հարավային Կորեայից, որտեղ բեմադրել է կորեացիների պատմությունից վերցված «Արքայադուստր Դյոկհե» բալետը: Սակայն իմ զրույցը նրա հետ ոչ միայն այդ մասին է...*

**-Ինչպե՞ս եղավ, որ կորեացիներն իրենց ազգային պատմությունից վերցված բալետը վստահել են հայ բալետմայստերին:**

-Իրենց համար տվյալ դեպքում հայը չէր կարեւոր, այլ՝ միջազգային, արտասահմանցի բալետմայստերը: Ավելին, երաժշտությունը, որ լիովին կորեական է, գրել է Դուբայում ապրող մի խորվաթ կոմպոզիտոր՝ Վլադիմիր Բոդեգրայացը: Այսօր ամեն ազգ ուզում է աշխարհին ցույց տալ իրեն որպես ազնվական, ընտրյալ, կարեւոր առաքելություն կատարելու կոչված: Ճապոնացիները ցանկացել են կորեացիներին զրկել իրենց ազգային պատմությունից ու մշակույթից եւ 1920-ականներին Կորեայից փախցրել են նրանց կայսերական ընտանիքի վերջին շառավիղին՝ արքայադստերը: Ահա այս պատմությունն էր, որ հանվեց բեմ:

**-Ռուդո՛լֆ, փաստորեն դու հայ բալետի պատմության մեջ ամենաբեղմնավոր բալետմայստերն ես**

-Այո՛, ցավոք: Ես շատ կուզեի, որ շատ հայ բալետմայստերներ մտնեին բալետի աբստրակտ, պայմանական, ազատ մտածողության մեջ: Բալետն ամենից բարձր արվեստն է, այն մշակույթ չէ, այլ՝ արվեստ: Ինչպես Արշիլ Գորկին է մտել աբստրակտ արվեստի մեջ ու կարողանալով ազատ մտածել ու ստեղծագործել՝ մնացել է իր հայկականության մեջ, կուզեի նույն կերպ հայ խորեոգրաֆներն էլ մտնեին պարային պայմանական մտածողության մեջ եւ բալետում որոնեին ու գտնեին այդ հայկականություն կոչվածը: Ի վերջո, ո՞րն է հայկական էությունն արվեստում՝ «Անուշ» օպերա՞ն է, «Գայանե» բալե՞տը, տրեխներով-փափախներով պա՞րը, թե՞ մի պար, որը շարժումներով կբնորոշի հայկականը: Եվ ինչքան շատ լինեն խորեոգրաֆները, այնքան մեր գործն ավելի կզարգանա: Մյուս հարցն այն է, որ մենք խնդիր ունենք թե՛ մեր հանդիսատեսի գեղագիտությունը զարգացնելու, թե՛ դրսում ներկայանալու որպես քաղաքակիրթ ու բանիմաց ազգ, որը գիտակցում է, թե աշխարհն ու՛ր է զարգանում, որո՛նք են մեր խնդիրները եւ գիտի դրսի հանդիսատեսին հրամցնել հայկականությունը:

**-Այնուամենայնիվ, ո՞րն է ներշնչանքների անսպառության ակունքը՝ շա՞տ ես կարդում, շա՞տ ես տեղեկացված միջազգային մշակույթի անցուդարձին, բնությո՞ւնն է, կի՞նը...**

-Այդ հարցերին տարբեր տարիքներում տարբեր պատասխան ես ունենում: Ամենից առաջ հարցը դիտարկենք ազգային առանձնահատկության համատեքստում: Գիտեմ, որ հայերին շատ բնորոշ է, որ ծնված պահից իսկ նրանց մեջ շատ լավ է դրված լինում ստեղծագործականության շարժիչ ուժը, այդ էներգիայի կտորը, այսօրվա նորաձեւ խոսքով ասած՝ դրայվը: Հետո նա կա՛մ թերանում է, կա՛մ լավ չի աշխատում, կա՛մ սխալ ուղղությամբ է գնում ու փչանում է: Հարցնում ես՝ իմ ներշնչանքների աղբյուրը կի՞նն է, գինի՞ն է... Ես կասեմ՝ Աստծո կողմից դրվածն է, որը մենք հաճախ չենք օգտագործում: Կյանքն ինձ ոչ պատահականորեն (աշխարհում արդեն ոչ մի պատահական բան չկա) տարել է այն տեղերը, որտեղից կարող ես քեզ հուզող հարցերի պատասխանները ստանալ, հասկանալ, ասենք, թե ո՛րն է մարդկության ճանապարհը, ինչո՞ւ կան ազգություններ, ինչո՞ւ է հայը՝ հայ եւ ո՛րն է նրա առաքելությունը: Եվ ինձ միշտ շատ է ջղայնացնում, երբ տեսնում եմ, որ հայերի մեջ դրված այդ դրայվն իրեն չի արդարացնում:

**-Իսկ ինչո՞ւ մեզ մոտ դա չի զարգանում, մեղքն ո՞ւմն է, հասարակական դրվա՞ծքն է, ազգային առանձնահատկությո՞ւնն է: Չհեռանալով բալետի թեմայից՝ հարց տանք, թե ինչպե՞ս է, որ մեր հարեւան վրացիները պետական մակարդակով կարողանում են իրենց բալետը դարձնել ազգային բրենդ, իսկ ՀՀ ղեկավարները կարծես տեղյակ էլ չեն մեր ժողովրդի բալետային պոտենցիալի մասին:**



-Նախ հիշենք, որ վրացիների նման վերաբերմունքը խոր արմատներ ունի: Ռուսական կայսրության ծայրամաս Թիֆլիսը Կովկասի մայրաքաղաքն էր, որտեղ հյուրախաղերով ելույթներ էին ունենում Ֆոկինը, Կարսավինան, Կշեսինսկայան, Պավլովան: Ես հետեւում եմ Վրաստանի բալետին ու չեմ ասի, թե նրանք հատուկ մեծ հաջողություններ ունեն: Վրացական բալետը ղեկավարող Նինո Անանիաշվիլին (որին, ի դեպ, ես դաս եմ տվել Վաշինգտոնում) այսօր փորձում է աշխարհում հաստատել վրացական բալետը: Վրաստանում դրվածքը, ուղղվածությունը ճիշտ են, բայց նաեւ չես համեմատի մեր տաղանդների հետ, որոնք լավ ձեռքերում հայտնվելով՝ շատ ավելի արդյունավետ են լինում: Սաակաշվիլին, Մոսկվայի Մեծ թատրոնից բերելով Նինոյին, տարեկան միայն երեք միլիոն դոլար էր տրամադրում բալետի նոր ներկայացումներ բեմադրելու նպատակով: Իսկ մեր մեջ կա մի տեսակ ցեղային նեղ մտածելակերպ, որի պատճառով մեր զարգացումն է կասեցվել, մենք հողեր ենք կորցրել, կորցրել ենք մեր էության իմաստը: Ինչ-որ բան պիտի անենք, որ չենք անում: Մեզ մոտ մտածված չի վաղվա քայլը, մյուս օրվա քայլը, էլ չասած՝ տասը-քսան տարվա մասին: Մեկ այլ նորաձեւ բառով ասած՝ տեսլական չունենք: Վերջին ամենալավ օրինակը ձմեռային օլիմպիական խաղերն էին Փհենչանում, որին հայաստանցի դահուկորդը ներկայացել էր առանց դահուկների: Աբսուրդ է, իհարկե, այս աբսուրդի մեջ էլ դեռ ինչ-որ բաներ արվում են, բայց մենք չենք ուզում հասկանալ, որ աշխարհից շատ հետ ենք մնում բոլոր ասպարեզներում: Երբ 2009 թվականին ինձ հրավիրեցին այստեղ՝ որպես թատրոնի գլխավոր բալետմայստեր աշխատել ու առաջ տանել հայ բալետը, ես էլ, իմ ամերիկյան փորձի համաձայն, չորս տարվա համար բեմադրելիք երեսուն բալետի վերնագիր բերեցի: Սկսեցի աշխատել տեղացի խորեոգրաֆների հետ, որպեսզի նոր աճ տանք թե՛ մտածելակերպի, թե՛ կատարողականի մեջ, քանի որ երկուսի մեջ էլ շատ հետ ենք: Բայց չորս տարվա ընթացքում պարզեցի, որ մարդիկ պարզապես չեն կարող պատասխանատու լինել եւ կամք դրսեւորել: Մինչդեռ համաշխարհային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տաս հազար ժամվա պարապմունք եւ տաս հազար անգամ փորձարարություն է պետք՝ որեւէ գործ կատարելագործելու համար, իսկ արտիստը նույն նպատակի համար պիտի առնվազն 150 անգամ բեմ բարձրանա:

**-Մոտ քսան տարի առաջ մի հարցազրույցում ասացիր, որ հայկական բալետը մաշվել է, ճիշտ Երեւանի շենքերի պես: Կնշանակի՝ հիմա է՛լ ավելի՞ է մաշվել:**

-Հայ բալետը մաշված է այն առումով, որ այն ո՛չ առաջ գնաց, ո՛չ հետ: Ինքը կորցրել է իր գործառույթը, ինքն արժեք ունի միայն կատարման պահին. ինչպես Անտոնեն Արտոն էր ասում դերասանին՝ այդ քո շարժումն արժեքավոր է միայն ա՛յս պահին: Իսկ հետո այն արդյոք հետք թողնո՞ւմ է, պե՞տք է, թե պետք չէ: Այդ երեսուն վերնագրերը, որ բերել էի, որ պիտի լինեին մեր ճանապարհը՝ լավ կատարելով հինը ու ստեղծելով նոր մտածելակերպ, լրիվ ջնջվեց, ավելի ճիշտ՝ ջնջեցին: Չգիտեմ, դա տվյալ դեպքում ի՞մ գործոնն էր, թե՞ այդպես էլ պիտի լիներ, հայերս այդպես էլ չպիտի՞ կարողանանք մեր իսկ երկրում ինչ-որ էական բան անել մեզ համար: Վերադառնալով Հայաստան՝ ես խնդիր դրեցի արտիստներին հասցնել կատարողական արվեստի բարձրագույն արտահայտությանը եւ հայկականություն մտցնել մեր բալետային մտածողության մեջ, որովհետեւ խորհրդային ժամանակներում (շնորհակալ ենք Խորհրդային Միությանը, որ մեզ բալետ տվեց) մենք ընդամենը կրկնում էինք ռուսական դպրոցը: Ես մի բան էլ հասկացա, որ բալետը ո՛չ ռուսական է, ո՛չ ֆրանսիական, ո՛չ մի ուրիշ ազգի, այլ արվեստի մի տեսակ է, որը ինչ երկիր էլ մտնում է՝ հարստանում է տեղական մշակույթով: Բնութագրի փոփոխություն է կրում, բայց մտածելակերպը մնում է նույնը:

**-Իսկ ըստ քեզ, մենք երբեւէ ունեցե՞լ ենք ազգային բալետային առանձնահատկություն կամ գոնե մոտեցե՞լ ենք այդ գաղափարին:**

-Մոտեցել ենք, եւ կարող եմ ազգային բալետմայստերական արտահայտման միայն մեկ օրինակ բերել: 1960-70-ականներին, հայ արվեստի վերածնման ժամանակաշրջանում, երբ Էդգար Հովհաննիսյանն էր մեր օպերային թատրոնի տնօրենը, երբ բեմադրվում էին Վագների «Տանհոյզեր» կամ Ստրավինսկու «Էդիպ արքա» օպերաների թափի գործեր, հող կար ազգային բալետային գործերի ստեղծման համար: Այդ պայմաններում էր, որ Մաքսիմ Մարտիրոսյանը 1969-ին կարողացավ բեմադրել «Անտունի» բալետը Կոմիտասի մասին, որով հայկական նոր բալետային մտածելակերպ ձեւավորվեց: Ես երիտասարդ էի, մասնակցում էի այդ բեմադրությանը ու շատ հետաքրքրական բան էր կատարվում. պարելով այդ բալետում՝ կարծես միջից դուրս էր գալիս իմ աստրալ մարմինն ու կողքից նայում էր ինձ: Մաքսիմը կարողացավ շոշափել հայկական էությունը, շարժուձեւը, միտքը, չգիտեմ՝ գիտակցաբար, թե ոչ, բայց առաջին անգամ մեր բալետի պատմության մեջ դուրս եկավ մի նոր հարթություն:

**-Իմ սերունդը շատ լավ է հիշում քո հիմնած հեռուստաբալետը, որը մեծ նորություն էր խորհրդային իրականության համար: Ի՞նչ հանգամանքներում ստեղծվեց այդ, խորհրդային իրականությանն ասես անհարիր արվեստը, որն, ըստ էության, ավանգարդ էր:**

-Խորհրդային տարիներին ճանաչված լրագրող Արմեն Հովհաննիսյանը երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագիրն էր մեր հեռուստատեսությունում ու վարում էր «22.30» հաղորդումը: Այն արդեն առաջադիմություն էր մեզ համար: Մի անգամ նա ինձ հրավիրեց իր մոտ զրույցի ու առաջարկեց ստեղծել հեռուստաբալետ: Հետո գնացինք հեռուստառադիոպետկոմի նախագահի առաջին տեղակալ Վիկտոր Բալայանի մոտ, որը նույնպես ոգեւորվեց գաղափարով, ու վերջապես գնացինք նախագահի՝ Ստեփան Պողոսյանի մոտ, որը հավանություն տվեց մեր գաղափարին. ռադիոհեռուստատեսության շենքի երրորդ հարկի տաս սենյակ քանդեցին ու տարածքը տրամադրեցին հեռուստաբալետին: Ռադիոյի աշխատողներն ապշել էին: Այդպես ստեղծվեց հեռուստաբալետը, առաջինը ԽՍՀՄ-ում: Հեռուստաբալետում առաջին բեմադրությունս եղավ «Մոցարտիանան», երկրորդը՝ «Համլետը», լրիվ գծական մի ներկայացում, որտեղ Համլետի կերպարով պատմում էի իմ մասին, օպերայի թատրոնում իմ տառապանքների մասին: Ի դեպ, գորբաչովյան «վերակառուցման» օրոք, 1988-ին, Կենտրոնական հեռուստատեսությունը, եթերային ամենալավ ժամերի, երկու անգամ ցուցադրեց «Համլետը»: Մոսկվայի հաղորդավարն ասում էր, որ մենք փաստորեն Խորհրդային Միությունում ունեցել ենք ավանգարդ բալետ, բայց տեղյակ չէինք: Իսկ դրանից առաջ Մոսկվայում երբ ցուցադրում էի բեմադրություններս, վրաս միշտ մատ էին թափ տալիս՝ ասելով, որ չեմ կարող նման բան անել: Ինձ չէին հասկանում, երբ ասում էի՝ ուզում եմ բեմադրել Բեթհովենի երաժշտությանը համարժեք բալետային ներկայացում, բայց ոչ այնպես, ինչպես Ստրավինսկին ու Բալանչինն էին միասին աշխատում, այսինքն՝ Բալանչինը կարողանում էր Ստրավինսկիի նոտաները ցույց տալ բեմի վրա: Ես շարժումների լեզվով արտահայտում էի նույն գաղափարը, նույն զգացողությունը, բայց ոչ անպայման՝ երաժշտության ռիթմին ու շարժումներին համապատասխան: Այդ ժամանակ արդեն մարտարվեստի տարբեր ձեւեր էի պարապում ու իմ ամբողջ խմբին էլ պարապել էի տալիս (ի դեպ՝ Արցախի թեմի ներկա առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոսի հետ):

➥ Դ

AZG NEW MSHAKUIT.qxd  26/04/2018  21:01  Page 2



# Բաքվի հայկական պետական

**Բախտիար ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

***Բաքվի հայկական թատրոնի Դրամատիկական ստուդիայի 1947 թ. շրջանավարտ, թատերագետ***

Բաքվի հայկական պետական թատրոնը Անդրկովկասի հնագույն թատրոններից մեկն էր: Թատրոնի գործունեության մասին քիչ թե շատ պատկերացում ունենալու համար համառոտակի վերհիշենք նրա անցած ստեղծագործական ուղին: Շամախիում հաճախակի կրկնվող երկրաշարժի պատճառով նահանգական կենտրոնը 1859 թվականից Բաքու փոխադրվելուց հետո, քաղաքը տնտեսական ու կուլտուրական վերելք է ապրել: Քաղաքի ու նահանգի զարգացման գործում կարեւորագույն դեր են կատարել նաեւ հայերը:

Ոչ պաշտոնական տվյալներով Բաքվի տարածքում հայերն ապրել են դեռեւս Վարդան Մամիկոնյանի ժամանակներից. իսկ ըստ պատմական հուշարձանների՝ դեռեւս 15-րդ դարում Բաքվի մերձակա Բուզովնա գյուղում եղել է հայ բնակչություն իր մատուռով, որի ավերակներն իրենց խաչքարերով ու ջրհորի արձանագրությամբ գոյատեւել են մինչեւ 20-րդ դարի սկզբները: 1806 թվականին, երբ ռուսական զորքը մտել է Բաքու, քաղաքում ապրելիս են եղել զգալի թվով հայեր, որոնք ունեցել են իրենց եկեղեցին Միջնաբերդի (Շիրվանշահերի պալատի համալիրում) ներսում: 1860-ական թվականներին կառուցվել է Ս. Լուսավորիչ եկեղեցին, որի վերանորոգումից հետո այնտեղ է հանգրվանել Հայ եկեղեցու թեմը: 1920-ական թվականներին կառուցվել է Բուդաղյանների եկեղեցին (ճարտարապետ՝ Հովհաննես Քաջազնունի), որն ավերվել է կուլտուրական հեղափոխության տարիներին եւ նրա տեղը վեր հանվել Ադրբեջանի կոնսերվատորիան: Բաքվի հայության այս ստվար հատվածը եկեղեցուց ու դպրոցներից բացի, բնական է, որ պետք է ունենար նաեւ իր թատրոնը:

Հետեւելով ռուսների օրինակին, Բաքվի Ռեալական գիմնազիայի հայ ուսանողները նավթարդյունաբերող Կրասիլնիկյանների նորակառույց տանը 1870 թվականի դեկտեմբերի 28-ին տվել են իրենց առաջին ներկայացումը: Բեմադրվել են Ն. Փուղինյանի «Ղալալ Ղաղո» եւ Գ. Սունդուկյանի «Գիշերվան սաբրը խեր է» պիեսները: (Վերոհիշյալ օրինակներով էլ կազմակերպվել է ազերի աշակերտների ուժերով տրված Բաքվի ադրբեջանական թատրոնը: 1873 թվականի մարտի 10-ին ներկայացվել է Մ.Ֆ. Ախունդովի «Լենքորանի խանության վեզիրը»):

Աշակերտական ներկայացումներին շուտով փոխարինել են պրոֆեսիոնալ դերասանների մասնակցությամբ պիեսների բեմադրությունները: Թատերական գործի կազմակերպմանը եւ զարգացմանը մեծ չափով նպաստել է Հայոց Մարդասիրական ընկերությունը, որի՝ հետագա տարիներին կառուցած շենքում տեղավորված է Բաքվի քաղաքային կենտրոնական գրադարանը (եկեղեցուն կից):

1884 թվականին կազմակերպվել է Թատերական կոմիտեն, որը գործնական կապերի մեջ է եղել Թիֆլիսի թատերական Ակումբի (ընկերության) հետ եւ միասին նպաստել են Անդրկովկասի հայ թատրոնի հետագա զարգացմանը:

Սկսած 1880 թվականից Բաքվում հյուրախաղերով հանդես են եկել Սաֆրազյան ամուսինները, Գեւորգ Տեր-Դավթյանը, Գեւորգ եւ Սաթենիկ Չմշկյանները, Պետրոս Ադամյանը, Փառանձեմը, Վարդուհին, Սիրանույշը, Գեւորգ Պետրոսյանը, օպերային երգիչներ Նադեժդա Պապայանը, Արշակ Կոստանյանը, Ներսես Շահլամյանը. երկար ժամանակ գործել է Կարա-Մուրզայի ղեկավարությամբ երգեցիկ խումբը, որի մենակատարներից մեկը եղել է  բանաստեղծ Հակոբ Հակոբյանը:

Բաքվում հանդես է եկել աշուղ Ջիվանին՝ իր հայերեն երգերով նպաստել հայապահպանությանը, մեծ ընդունելություն է կազմակերպվել ի պատիվ Ռափայել Պատկանյանի, իսկ 1910-ական թվականներին Բաքվի հայ գրողների ընկերությունը կազմակերպել է Վ.Յա. Բրյուսովի դասախոսությունները հայ գրականության մասին:

Իրենց բեմական գործունեությունը Բաքվի հայկական թատրոնում են սկսել Հովհաննես Աբելյանը, Գրիգոր Ավետյանը, Նիկողայոս Հովհաննիսյանը, Օլգա Մայսուրյանը (Թիֆլիսի ռուսական բեմից անցնելով հայ թատրոն), Սաթենիկ Ադամյանը (Բաթումի սիրողական խմբից), Օվի Սեւումյանը, Քնարիկը, Պոլսից եկած Արուս Ոսկանյանը եւ շատ ուրիշներ, որոնք մնայուն հետք են թողել հայ թատրոնի պատմության մեջ:

Բաքվի հայկական թատրոնի մի շարք դերասաններ օգնության ձեռք են մեկնել նոր զարգացող ազերիական թատերախմբերին: Ընդառաջելով նրանց խնդրանքին, դեռեւս 80-ական թվականների սկզբներից Ստեփան եւ Ալմա Սաֆրազյանները (վերջինս եղել է Ադրբեջանի առաջին վաստակավոր դերասանուհին, 1926 թ.), Հովհաննես Աբելյանը, Գ. Տեր-Դավթյանը, Եկատերինա Արզումանյանը, Գրիգոր Ավետյանը, Ելիզավետա Մելիք-Շահնազարյանը, Արուս Ոսկանյանը, Հովսեփ Ոսկանյանը եւ շատ ուրիշներ պարբերաբար մասնակցել են ադրբեջանական ներկայացումներին:

1897-1901 թվականները եղել են Բաքվի հայկական թատրոնի ոսկեդարը: Այդ տարիներին Բաքվի հայկական թատրոնում են համախմբված եղել հայ բեմի լավագույն ուժերը՝ Ազնիվ Հրաչյա, Գ. Պետրոսյան, Սիրանույշ, Հ. Աբելյան, Պ. Արաքսյան, Գ. Ավետյան, Ա. Վրույր, Փառանձեմ, Վարդուհի, Ա. Հարությունյան, Հ. Ստեփանյան, Օ. Մայսուրյան, Ս. Ադամյան, Վարդիթեր եւ Մարի-Հրանուշ Ֆելեկյան քույրեր, Քնարիկ, Օլգա Գուլազյան, Ի. Ալիխանյան, Հ. Զարիֆյան եւ ուրիշներ, որոնք բեմ հանելով հայ եւ համաշխարհային դրամատուրգիայի լավագույն գործերը, նպաստեցին հայ թատրոնի հեղինակության բարձրացմանը:

Բաքվի թատրոնի անցած հարուստ ու հետաքրքրական ուղու վառ վկայություններից մեկն այն բազմաթիվ միջոցառումներ են, որոնք տեղի են ունեցել ամենատարբեր առիթներով. հիշենք «Պեպոյի» առաջին բեմադրության 30-ամյակի (1901 թ.), Արեւելահայ թատրոնի 50-ամյակի, Հ. Աբելյանի եւ Ա. Վրույրի բեմական գործունեության 25-ամյակների (1908 թ.), Սիրանույշի 30 (1909 թ.), Գ. Ավետյանի 25 (1912 թ.), Փառանձեմի 30 (1913 թ.)-ամյակների հանդեսները:

Բաքվի թատերական կյանքի առաջընթացին նպաստել է 1906 թվականին տեղի Հայոց կուլտուրական միության գեղարվեստական մասնաճյուղի դերասանական խմբի կազմակերպումը, որը տարբեր տարիների ղեկավարել են Հ. Աբելյանը, Սիրանույշը, Հ. Զարիֆյանը, Ա. Արմենյանը, Հ. Ոսկանյանը, Ա. Հրաչյան եւ ուրիշներ: 1910-ական թվականներից Բաքվում գործել են նաեւ օպերետային խմբեր: Թատերական կյանքի բուռն վերելքի գրավիչ արտահայտություններից մեկը եղբայր Մայիլյանների կառուցած Օպերային թատրոնի շենքի գոյությունն է (հայազգի ճարտարապետ Բաեւ (1911 թ.), որտեղ մինչեւ օրս գործում է Ադրբեջանի Ախունդովի անվան Օպերայի եւ բալետի թատրոնը:

1910-ական թվականներից Բաքվի Օպերա-օպերետային թատրոնի գործունեությանը մեծ չափով նպաստել է երգիչ, ռեժիսոր, թատերական գործի կազմակերպիչ Պավել Ամիրագոն (Ամիրաղյան), որի բեմադրությամբ 1912 թվականին, առաջին անգամ Անդրկովկասում, ներկայացվել է Տ. Չուխաճյանի «Լեբլեբիջի Հոր-Հոր աղա» օպերետը, մասնակցել է նաեւ հայերեն մի շարք ներկայացումների:

Բաքվի երաժշտական թատրոնի կյանքում զգալի հետք են թողել երգիչ Ներսես Ղուկասովը, կոմպոզիտոր Անտոն Մայիլյանը, որը 1910-1917 թվականներին Բաքվում հրատարակել է «Թատրոն եւ երաժշտություն» հանդեսը, գրել մանկական օպերաներ («Գիքոր» եւ այլ), երաժշտություն գրել հայկական եւ ադրբեջանական դրամատիկական թատրոնների ներկայացումների համար, «Սաֆա» օպերան գրել (բեմադրվել է 1938-ին), եղել է Հայարտան երաժշտական ստուդիայի եւ Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի ղեկավարը:

Բաքվի Օպերային թատրոնում են աշխատել վաստակավոր արտիստուհիներ Քնարիկ Գրիգորյանը, Մարիամ Բաբաեւան, Տատյանա Բադիրովան, երգիչներ Նինա Մարտիրոսովան, Սերգեյ Դանիելյանը, Արտաշես Հայրյանը, ռեժիսոր Բաղդասարովը, պարադիրներ Սերգեյ Կեւորկովը, Իլյա Արբատովը (Յաղուբյան), Թադեւոս Սարգսյանը (հետագայում Երաժշտական կոմեդիայի թատրոնի գլխավոր պարադիր), բեմանկարիչ Մուշեղ Սաղյանը, պատանեկան թատրոնի հիմնադիրներից են եղել Գրիգորի Կորգանով-Կորնելլին, Առնոլդ Մարտիրոսյանը, Ագիտ-Սատիր թատրոնի ռեժիսորն է եղել վաղամեռիկ Վոլոդյա Ղասաբյանը (Ուգրյումի) եւ ուրիշներ:

Բաքվի հայկական թատրոնի դերասաններն ակտիվ դեր են կատարել քաղաքում եւ Ադրբեջանի շրջաններում խորհրդային կարգերի հաստատման համար: Նրանցից Հ. Աբելյանը, Ալեքսանդր Հովհաննիսյանը, Ժասմենը (որպես գթության քույր), երիտասարդ թատերասերներ, հետագայում անվանի գործիչներ Տիգրան Շամիրխանյանը, Առնոլդ Մարտիրոսյանը եւ ուրիշներ, ոմանք գեղարվեստական խոսքով՝ բանակայինների շրջանում, ոմանք զենքերը ձեռքին մասնակցել են Բաքվի կոմունայի պաշտպանությանը: Այդ շրջանում, պրոլետարիատի զինվոր-նավաստիների շրջանակներում նշվել է Աբելյանի բեմական գործունեության 35-ամյակը:

1918 թվականին մուսավաթականների նախաձեռնությամբ թուրքական եւ անգլիական զավթիչները Բաքուն գրավելուց հետո, հայ դերասանների մի կարեւոր փունջ հարկադրված է եղել թողնել քաղաքը: Աբելյանը, որը գտնվելիս է եղել Բաքվի 26 կոմիսարների հետ նույն նավում, ինչպես պատմում էր դերասանուհի Արուս Ազնավուրյանը՝ իբրեւ դեպքի ականատես, սրտի ցավով է ընդունել Շահումյանին եւ նրա ընկերներին իրենց նավից իջեցնելու եւ ուղղությունը փոխելու ոճրագործ ակտը,- մեկնել է Թերեքյան երկրամաս, այնտեղից՝ Թիֆլիս: Սիրանույշը, Արմենյան ամուսինները, Ալ. Հովհաննիսյանը տարբեր ժամանակներ անցել են Պարսկաստան, Ժասմենը՝ նախ Աշխաբադ, ապա Էնզելի եւ կարճ միջոցից հետո նորից վերադարձել Բաքու: 1918-1919 թվականներին Բաքվի հայկական թատրոնում հիմնականում ներկայացվել են քաղաքական հարցեր չշոշափող, կենցաղային պիեսներ եւ հայկական ու թարգմանական օպերետներ:



*Մայիլյան եղբայրների օպերային թատրոնը Բաքվում, 1911թ.:*

Ադրբեջանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, 1920 թվականի հունիսին կազմակերպվել է Բաքվի հայկական թատրոնը, որը սեպտեմբերից կրել է պետական անունը: Թատրոնի ռեժիսորը եղել է Ժասմենը: Թատրոնը գործել է Լուսավորության մինիստրության, Ազգային փոքրամասնությունների կոմիտեի, այնուհետեւ Արվեստի գործերի վարչության ղեկավարությամբ:

1922 թվականից մինչեւ 30-ականների սկզբները Բաքվում գործել է Ա. Մյասնիկյանի անվան Հայ արվեստի տունը, որն ունեցել է դրամատիկական, երաժշտական եւ նկարչական ստուդիաներ: Նույն շենքում է գործել նաեւ 1920 թվականից մինչեւ 1990-ը լույս տեսնող «Կոմունիստ» (հայերեն) թերթի խմբագրությունը (այժմ՝ Սամեդ Վուրղունի տուն-թանգարան): Համատեղ ուժերով կազմակերպվել են ներկայացումների քննարկումներ, գրական դատեր, ասմունքի երեկոներ, որոնց մասնակցել են Վահրամ Փափազյանը, Լեւոն Երամյանը, Պահարեն, բազմաթիվ գրողներ: Այդ եւ հետագա տարիներին թատրոնը գլխավորել են ռեժիսորներ Արմեն Արմենյանը, Մուշեղ Սաղյանը, Լեւոն Քալանթարը, Թաթիկ Սարյանը, Արտաշես Հովսեփյանը:

Բաքվի թատերական կյանքի բովանդակալից ընթացքի մասին են վկայում Ա. Արմենյանի բեմական գործունեության 30-ամյակի (1921 թ.), Վարդան Միրզոյանի 25 (1924), Հ. Աբելյանի 50 (1930), Հ. Ոսկանյանի 25 (1931), Լ. Ալավերդյանի 25 (1932), Ա. Հովհաննիսյանի 20 (1934), Ժասմենի 25 (1935), Լ. Երամյանի 25 (1936)-ամյակների հանդիսավոր տոնակատարությունները: Թատրոնն իր 10-ամյակի առթիվ, 1932 թվականին, պարգեւատրվել է Կարմիր դրոշի շքանշանով, լույս է տեսել Արշակ Մկրտչյանի գրքույկը:

Իբրեւ ստեղծագործող օրգանիզմ, թատրոնն անմասն չի մնացել 30-ական թվականների ռեպրեսիաներից, որի զոհերից է Լեւոն Երամյանը: Նա մեղադրվել է դաշնակցության հետ առնչություն ունենալու համար: 1927-1928 թթ. ստեղծագործական գործուղման մեջ լինելով Փարիզում, նա «Պեպոյի» իր ներկայացմանն է հրավիրել գրական-հասարակական գործիչ, ռամկավար Արշակ Չոպա-

AZG NEW MSHAKUIT.qxd 26/04/2018 21:01 Page 3



# Թատրոնի փակման շուրջը

նյանին: Ըստ երեւույթին սա էլ պատրվակ են դարձրել նրան անպայման մեղադրելու համար: Անհիմն մեղադրանքները եւ հաճախակի սպառնալիքները տանել չկարողանալով, 1938 թվականի դեկտեմբերի 22-ի գիշերը սրտի պայթյունից մահացել է Բաքվի բազմազգ բնակչության սիրելի, կրթված ու զարգացած դերասան, ռեժիսոր, թարգմանիչ Լեւոն Երամյանը: Բաքուն այդպիսի թաղում չէր տեսել: (Այդպիսի թաղում ունեցել է միայն բանաստեղծ Սամեդ Վուրղունը, 1956 թ.): Ժասմենի պատմելով, Ադրբեջանի կառավարությունը Երամյանի նկատմամբ անիրավացիության կասկածները ցրելու նպատակով թատրոնը կոչել է նրա անվան: 1939-1949 թվականներին թատրոնը կոչվել է Ադրբեջանի Լ.Գ. Երամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոն:

Պետք է նշել, որ դեռեւս 1900-ական թվականներից, քաղաքի թատրոնին զուգահեռ, Բաքվի բանվորական արվարձաններում գործել են թատերասերների խմբակներ, որոնք սպասարկել են Սեւ եւ Սպիտակ քաղաքների, Բալախանիի, Սաբունչիի բանվորությանը: Այստեղ հանդես են եկել նաեւ Հ. Աբելյանի եւ Սիրանույշի ղեկավարությամբ դերասանական խմբերը: 1908-1913 թվականներին գործել է վաղամեռիկ դերասանուհի Քնարիկի անվան թատերախումբը Սեւ քաղաքում: Բալախանիում գործել է նավթահանքատեր Փիթոեւների բանվորական թատրոնը: Բանվորական թատրոնների ավանդները շարունակվել են նաեւ խորհրդային տարիներին. Տնայնագործների ակումբում այդ խումբը ղեկավարել է Ա. Սաֆրազյանը, երկաթուղայինների ակումբում՝ Հ. Ոսկանյանը, Լ. Երամյանը, Հ. Հովհաննիսյանը, Պիոներ-դպրոցականների պալատում՝ Ալ. Հովհաննիսյանը:

Բաքվի հայկական թատրոնը սպասարկել է ոչ միայն հանրապետության հայաշատ զանգվածները՝ Լեռնային Ղարաբաղի մարզը, Կիրովաբադի եւ մերձակա շրջանները, այլեւ հյուրախաղերով հանդես է եկել Ռոստովում եւ Խարկովում (1930), Թիֆլիսում, Երեւանում, Լենինականում (1934), Գորիսում (1925), Միջինասիական հանրապետություններում (1926, 1948):

Հայրենական պատերազմի տարիներին թատրոնը գործել է Ռուսական թատրոնի շենքում (իր շենքը հոսպիտալի էր վերածված), գեղարվեստական մի շարք բրիգադներով ելույթներ է ունեցել քաղաքի հոսպիտալներում եւ շրջաններում՝ արժանանալով հանրապետության եւ ԽՍՀՄ վերադաս կազմակերպությունների պատվոգրերի, շնորհակալագրերի, մեդալների: Դերասաններից Ժասմենը չորս անգամ անընդմեջ ընտրվել է Ադրբ. ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ, ոմանք՝ Քաղխորհրդի եւ շրջխորհրդի դեպուտատ:

Թատերական տեխնիկումի հայկական մասնաճյուղը փակվելուց հետո, թատրոնը եւ հանրապետության մյուս թատրոնները մասնագետ դերասաններով ապահովելու համար, թատրոնին կից 1944-1947 թվականներին գործել է Դրամատիկական ստուդիան: 1947-ին բացվել է երկրորդ ստուդիան:

Ահա, ստեղծագործական այսպիսի մեծ անցյալ ու հարուստ պատմություն ունեցող Բաքվի հայկական թատրոնը 1949 թվականի մարտի 9-ին մտել է հավիտենական փակուղի: Ինչո՞ւ, որովհետեւ թատրոնը հետպատերազմյան տնտեսական ծանր տարիներին չի կարողացել կատարել իր ֆինանսական պլանները, աշխատել է պարտքով:

Բաքվի թատրոնի երկարամյա դերասան, ռեժիսոր եւ դրամատուրգ Գուրգեն Թավրիզյանը 1968 թվականին գրած իր հուշերում հայտնում է, որ «1948 թվականի հատուկ որոշմամբ վերացվեց թատրոնին տրվող նյութական օժանդակությունը, Բաքվի հայկական թատրոնը կանգնեց լուրջ աղետի առաջ»: Թատրոնի պարտքը հասել է 600 հազարի: Սա որքան էլ լուրջ պատճառ լիներ, այնուամենայնիվ, չպետք է որոշիչ դեր խաղար թատրոնը շտապափույթ փակելու համար: Չէ՞ որ այն տարիներին ոչ մի թատրոն չէր կատարում իր ֆինանսական պլանները եւ բոլորն օգտվում էին պետական օժանդակությունից:

Աստղիկ Երամյանը 1956 թվականին գրած իր հուշերում նշել է, որ «Ամառային տուրնեից (1948 թ., Ստեփանակերտ- Բ.Հ.) վերադարձանք Բաքու: Արդեն խոսակցություն էր գնում, որ թատրոնները պետք է անցնեն տնտհաշվարկի: Բոլոր թատրոնները պետք է իրենք իրենց արդարացնեն»: Ի հավելումն սրան, Արվեստի գործերի վարչությունից անընդհատ հիշեցրել են, որ եթե թատրոնը չարդարացնի իրեն՝ կփակեն: Իսկ նրանց ներկայացուցիչն ամեն օր թատրոն գալով շտապեցրել է՝ «Ե՞րբ եք փակելու ձեր դուքանը»:

Դեռ ամիսներ առաջ կոլեկտիվը գիտեր, որ թատրոնը փակվելու է: Բայց նա հույս ուներ, որ կվերանայվի կառավարության որոշումը, որ չի կարելի փակել մայրաքաղաքի հայ ազգաբնակչության միակ գեղարվեստական օջախը: Գ. Թավրիզյանն այս առիթով գրել է. «միայն վերջին ներկայացումից հետո, թատրոնի աշխատակիցներն ամբողջ սրությամբ զգացին կորցրածի ցավը եւ դեռ երկար ժամանակ ճշտապահորեն աշխատանքի ժամերին հավաքվում էին փակ դռների առաջ, կարծես չէին կարողանում բաժանվել շենքից, որի կամարների տակ էր անցել նրանցից շատերի բեմական պատանեկության երջանիկ օրերը... Բաքվի հայկական թատրոնի լիկվիդացումը կարելի է դիտել որպես անիմաստ վարչարարություն»:



***Վահրամ Փափազյանը Բաքվի հայկական թատրոնի դերասանների եւ «Օթելլո» ներկայացման մասնակիցների հետ. 1946-ի հունվարի 5-ի գիշերը, «Օթելլո» ներկայացումից հետո: Վերեւի շարքում, աջից առաջինը՝ Բ. Հովակիմյան:***

1949 թվականի մարտի 6-ին տրվել է վերջին ներկայացումը՝ «Մի քաղաքում», իսկ մարտի 9-ի հրամանով թատրոնը փակվել: Ըստ որում ոչ թե փակվել է, այլ Լեռնային Ղարաբաղի մարզային թատրոնը ուժեղացնելու պատրվակով Բաքվի թատրոնը միավորվել է Ստեփանակերտի թատրոնի հետ: **Մեր ձեռքի տակ չկա այդ հրամանի կամ որոշման տեքստը**, բայց պահպանվել են որոշ փաստաթղթեր, որոնք որոշակիորեն լուսաբանում են մեզ հետաքրքրող հարցը:

Թատրոնի փակումից հետո, առաջատար որոշ դերասանների գործուղել են Ստեփանակերտ, ոմանց թոշակ ձեւակերպել, իսկ մեծ մասին թողել բախտի քմահաճույքին: Բաքվում մնացած մի խումբ դերասաններ տեղական հաստատություններին դիմելուց եւ տնտհաշվարկով թատերախումբ պահելու առաջարկից մերժվելուց հետո, դիմել են իրենց վաղեմի ընկեր Վահրամ Փափազյանին, իբրեւ հեղինակավոր անձնավորություն եւ իրենց կոլեկտիվին մոտիկից ճանաչող դերասան՝ միջամտել Ադրբեջանի կառավարությանը վերոհիշյալ նպատակով թատրոն ունենալու հարցին դրական լուծում տալու: 1949 թվականի մայիսի 7-ին նրան գրել են.

*«Մեծարգո ավագ ընկեր եւ բարեկամ*
Վահրամ Կամերովիչ

Մենք՝ Ադրբեջանի Լ.Գ. Երամյանի անվան հայկական պետական նախկին թատրոնի դերասաններս, լիազորում ենք Ձեզ, իբրեւ վստահելի ընկերոջ եւ խնդրում Ձեզ՝ դիմել վերադաս կազմակերպություններին, ինչպես նաեւ ղեկավար ընկերներին խնդրանքով.- Ադրբեջանի մայրաքաղաքում մինիմալ կազմով հայկական դրամայի թատրոնի աշխատանքը շարունակելու մասին, չպահանջելով դրա համար ոչ մի նյութական օգնություն, այլ միայն բարոյական աջակցություն:

Թանկագին Վահրամ Կամերովիչ. ելնելով Ձեր երկարամյա փորձառությունից, խնդրում ենք Ձեզ միջնորդել վերականգնելու թատրոնը վերոհիշյալ ձեւով:

1. Երամյան Աստղիկ Մ.- Ադրբ. ԽՍՀ վաստ. արտիստուհի
2. Եսայան Վահան Ս.- Ադրբ. ԽՍՀ վաստ. արտիստ
3. Հայրյան Սերժ- արտիստ
4. Աղաբեկյան Արո- ...........
5. Արզումանյան Սոնյա- .........
6. Սիմոնյան Ծովիկ- ............
7. Ղազարյան Աշոտ- ...............
8. Դանիելյան Հմայակ- ...............
9. Թավրիզյան Մանյա- .............
10. Առստամյան Նիկիտա- ..........

եւ մի շարք ուրիշ ընկերներ:

Ընդառաջելով աղետի մատնված իր ընկերների բաղձանքին, նույն մայիսին Փափազյանը դիմել է Ադրբեջանի կոմկուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար Մ.Ջ. Բագիրովին, որի հանձնարարությամբ նրան պատասխանել են Ադրբ. ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, գրող Միրզա Իբրահիմովը եւ «Կոմունիստ» (հայերեն) թերթի խմբագիր Համո Ամիրխանյանը: Կառավարության կողմից պատրաստված 1949 թվականի մայիսի 19-ին գրած նամակով նրանք հայտնել են՝

*«Լենինգրադ, ժողովրդական արտիստ Վ. Փափազյանին*

Հարգելի ընկեր Փափազյան

Ստացել ենք Ձեր նամակը՝ հասցեագրված Ադրբեջանի ԿԿ(բ) ԿԿ քարտուղար ընկեր Մ.Ջ. Բագիրովին:

Բաքվի հայկական դրամայի թատրոնը, ինչպես Ձեզ հայտնի է, միշտ եղել է ոչ եկամտաբեր եւ պետական խոշոր դոտացիա է ստացել: Միայն անցյալ թատերաշրջանում կուտակված պարտքը հասնում է ավելի քան 600 հազար ռուբլու:

Բոլոր ունեցած տվյալների մանրամասն ուսումնասիրությունը մեզ բերել է այն եզրակացության, որ թատրոնը չի կարող հետագայում եւս դուրս գալ ոչ եկամտաբեր վիճակից, քանի որ 1949 թվականի սկզբից նրա պարտքը շարունակելու է աճել:

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կենտրոնում, Ստեփանակերտ քաղաքում գործում է դրամատիկական թատրոն, որն ուներ ավելի կայուն հանդիսատեսային բազա, չուներ բավականաչափ որակյալ եւ կազմված կոլեկտիվ:

Հաշվի առնելով այս հանգամանքները, հանրապետության ղեկավարությունը որոշել է ամրապնդել Ստեփանակերտի թատրոնը ի հաշիվ Բաքվի հայկական դրամայի առաջատար դերասանների, իսկ այդ թատրոնի պարտքը փակել պետության միջոցներից:

Երամյանի անվ. թատրոնի դերասանների հիմնական կորիզը արդեն մեկնել է Ստեփանակերտ, որի պատճառով թատրոնը դադարել է Բաքվում գործելուց:

Միաժամանակ որոշված է Բաքվի հանդիսատեսի սպասարկումն ապահովելու համար կազմակերպել Խորհրդային Հայաստանի թատրոնների, ինչպես նաեւ Ստեփանակերտի հայկական դրամայի հյուրախաղային ելույթները Բաքվում:

Ընկերական ողջույններով...»:

Այս պատասխանն ուշանալու, թե՞ արձագանքելով համանման մի այլ նամակի, Փափազյանը մի առանձին նամակով դիմել է նաեւ Ադրբ. ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Արվեստի գործերի վարչությանը, որի պետ Ա. Սուլթանովան մայիսի 28-ի պատասխան նամակում հետեւյալ պատճառաբանությունն է տվել Բաքվի հայկական թատրոնի փակման մասին.

*«Հարգելի ընկեր Փափազյան*

Բաքվի հայկական դրամայի թատրոնը ապակազմված չէ, ինչպես այդ նկատվում է 1949 թ. ապրիլի 22-ի (հավանաբար պետք է լինի մայիսի 22- Բ.Հ.) Ձեր նամակից, այլ միացված է Հայկական դրամայի մարզային թատրոնին, որի գտնվելու մշտական վայրը Ստեփանակերտ քաղաքն է: Հիմնականում, թատրոնի ստեղծագործական առաջատար կազմը աշխատանքի է փոխադրված Ստեփանակերտ, եւ թատրոնը ամրապնդված է համապատասխան նյութական բազայով եւ հաջողությամբ աշխատում է՝ սպասարկելով ոչ միայն ԼՂԻՄ, այլեւ Ադրբեջանական ԽՍՀ հարեւան շրջանների աշխատավորությանը, կոլտնտեսականներին, մտավորականությանը:

Բացի այդ, համաձայն Ադրբեջանական ԽՍՀ Մինիստրների խորհրդի 1949 թ. մարտի 10-ի Որոշման, թույլատրված են թատրոնի հյուրախաղերը ինչպես Բաքվում, այնպես էլ Կիրովաբադում»:

Ինչպես տեսնում ենք Փափազյանին ուղղած պաշտոնական այս երկու նամակներում ոչ մի կոնկրետ կետ չի հիշատակվում Բաքվի թատրոնի փակման անհրաժեշտության մասին: Եղածից կարելի է հետեւեցնել, որ թատրոնը պարտքով աշխատելու պատճառով ոչ թե փակվել, այլ միացվել է Ստեփանակերտի թատրոնին՝ այն ուժեղացնելու համար: (Աստված գիտե թե Կիրովաբադի հայկական պետական թատրոնն էլ ինչ պատրվակով է փակվել նույն 1949 թվականին):

Թատրոնը փակվելուց հետո, դերասաններից ոմանք փոխադրվել են Ստեփանակերտի թատրոն, ոմանք էլ այլ թատրոններում աշխատելու անհաջող փորձեր կատարել: Այսպես, օրինակ. դերասանուհի Հրանուշ Բաբաջանյանը, նկարագրելով իրենց անելանելի վիճակը, դիմել է Սունդուկյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Գուլակյանին՝ աշխատանքի ընդունել թատրոնի առավել կարող ուժերից մի քանիսին:

➡ Դ

AZG NEW MSHAKUIT.qxd 26/04/2018 21:01 Page 4



# Բաքվի հայկական պետական թատրոնի փակման շուրջը

→Գ

Եվ, քանի որ այդ ուժերից մեկն էլ իրեն է համարել, նամակը ստորագրել է «Թատրոնի ծառա» անունով: Անկախ նամակի ստորագրությունից, Սունդուկյանի անվան թատրոնի դռներն այն ժամանակ փակ էին «կողմնակի» դերասանների համար:

Բաբաջանյանն իր նամակում գրել է. *«Ամսույս (մարտի- Բ.Հ.) 6-ին վերջին անգամ փակվեց Բաքվի հայկական թատրոնի վարագույրը.... Ծանր է, անասելի ծանր է այս երեւույթը... Դուք երբեք չեք կարող պատկերացնել ինչ սարսափելի բան է այդ... Այժմ թատրոնը ներկայացնում է իրենից մի մեծ սգատուն: Բոլորը ողբում են, սկսած հնոցապանից, հրդեհաշեջներից, որոնք ռուս մարդիկ են, վերջացրած ինձնով ու դիրեկտորով: Բոլորս անխտիր սգում ենք, սգում ենք անկախ մեզանից... մենք հոգեկան մեծ վիշտ ենք ապրում, մենք կորցրինք մեր երիտասարդությունը, մեր ամենաեռանդուն ստեղծագործական տարիները տվինք մեր թատրոնին` այս օջախը վառ պահելու համար... Մենք ամեն ինչ կորցրինք...*

Հարգելի Գուլակյան, դիմում եմ ձեզ` համարեցեք այս իմ վերջին խնդիրքը, գուցե եւ կտակը... Բաքվի թատրոնում կան շատ շնորհալի ուժեր: Երեւի շատերը կդիմեն ձեզ` ձեր թատրոնում աշխատելու համար, բայց չորս մարդու համար ես ձեզ խնդրում եմ ինքս. վաստակավոր դերասանուհի Հրանուշ Բաբաջանյան, վաստակավոր դերասաններ Արզո Արզումանյան, Գուրգեն Հարությունյան եւ Աղասի Բադալյան: Այս չորս դերասանները միշտ կարդարացնեն իրենց թե շնորհքով եւ թե համեստությամբ, թե իրենց դիսցիպլինար վարքագծով: Ընդունելով նրանց, դուք չեք զղջա երբեք»:

Նրանցից եւ ոչ մեկը տեղ չունեցավ Սունդուկյանի անվան թատրոնում: Ժամենին ընդունեցին հազիվ տասը տարի անց, իսկ Հ. Բաբաջանյանի համար «քննություն» կազմակերպեցին Մարգարիտի դերում («Պատվի համար») եւ չընդունեցին: Տարբեր տարիների Ստեփանակերտի թատրոնից Լենինականի թատրոն փոխադրվեցին Արզո Արզումանյանը, Մանյա Կարապետյանը, Աղասի Բադալյանը, Բաքվից` Աստղիկ Երամյանը, Կիրովաբադից` Լեւոն Աբրահամյանը, Երեւան եկավ ռեժիսոր Արտաշես Հովսեփյանը, իսկ Հրանուշ Բաբաջանյանը` Պատանի հանդիսատեսի թատրոն ընդունվեց:

Բաքվի հայկական թատրոնի հետ փակվեց նաեւ նրա դրամատիկական երկրորդ ստուդիան: Իսկ երկու ամիս անց, հուսահատությունից հանկարծամահ եղավ Բաքվի բազմազգ բնակչության սիրելի դերասան Սաշան` Ալեքսանդր Հովհաննիսյանը, այն դերասանը, որը 1910-ական թվականներից աշխատել էր այդ թատրոնում, զենքը ձեռքին կռվել Բաքվի պաշտպանության համար, աշխարհազորայինների շարասյուն ղեկավարել Հայրենական պատերազմի տարիներին:

Թատրոնի փակման հետ քայքայվել է նրա ունեցվածքը, հարուստ զգեստահավաքածոն, կահ-կարասիքը: Աստղիկ Երամյանն իր հուշերում գրել է, որ *«բեռնատար մեքենան կանգնեցրին թատրոնի մուտքի առջեւ, բարձեցին մեր կահկարասիները, կոստյումները եւ այլն եւ ուղարկեցին Ստեփանակերտի թատրոնը: Հետագայում մեր սեղանները ու աթոռները տեսել էին Աղդամում, ինչ-որ մի ճաշարանում»*: Ըստ Երամյանի վկայության, թատրոնի այդքան արագ վերացումը մի նպատակ էլ է հետապնդել: *«Թատրոնը փակելուց մի երեք օր հետո,-* գրել է նա,*- մեր թատրոնի դռանը փակցվեցին ադրբեջաներեն լեզվով գրած աֆիշներ: Մեր թատրոնը փակվելուց անմիջապես հետո Ազիզբեկովի* (անվան թատրոնի- **Բ.Հ.**) *շենքը հիմնովին վերանորոգեցին, իսկ մինչեւ թատրոնի պատրաստվելը մեր շենքում սկսեցին իրենց ներկայացումները»*:

Թատրոնի փակումից հետո, Բաքվում մնացած մի խումբ դերասաններ դիմել են վերադաս կազմակերպություններին թույլատրել խումբ կազմել եւ ներկայացումներ տալ քաղաքի շրջաններում ու արվարձաններում: Պատասխանը եղել է. «**Մենք նրա համար չփակեցինք, որ դուք բաց անեք**»:




Բաքվի հայկական թատրոնն իր անցած ճանապարհին այսպիսի ստառնալիքների շատ է հանդիպել: Եթե նախկինում դա հաղթահարվել էր, ապա փակումից հետո անհնար էր վերաբացել: Եզակի չեն եղել ազգային փոքրամասնությունների մշակութային օջախների վերացման փաստերը: Հայրենական պատերազմից առաջ Բաքվում փակվել էին Հրեական եւ Վրացական դրամատիկական թատրոնները: Հերթը հասել էր հայկականին. որոշեցին-կատարեցին:

Հայկական թատրոնին, նրա գործիչներին ճնշելու մասին հետաքրքրական տվյալներ է հայտնել բանաստեղծ Գառնիկ Ղազարյանը: Բաքվի «Կոմունիստ» հայերեն թերթի 1924 թ. 30-րդ համարում տպագրած *«Բաքվի հայկական թատրոնը»* հոդվածում ուղղակիորեն գրել է. *«Բաքվի հայ դերասանական խումբը նյութապես շատ խղճուկ դրության մեջ է գտնվում: Նա մեր լուսժողկոմատից բավարար չափով չի բավարարվում: Բավարարից բարձր է վարձատրում ռուսական եւ թուրքական թատերական խմբերին, իսկ հայ խմբին միայն շենքն է ձրի տալիս եւ ասում` խաղացեք եւ նրա եկամուտով ապրեցեք: Սա սառը վերաբերմունք է դեպի ազգային փոքրամասնության կուլտուրական կրթական գործի աշխատանքները: Մենք գիտենք, որ աշխատակիցները ամսական շատ չնչին եկամուտ են ստանում ներկայացումներից»:*

Թատերական գործի կազմակերպիչ Գուրգեն Թավրիզյանին մի կերպ հաջողվել էր Ադրբեջանի ֆիլհարմոնիային կից «Բաքվի հայկական դերասանական կոլեկտիվ» կազմակերպել եւ 1951 թվականից ներկայացումներ տալ: Բայց դա էլ երկար չտեւեց. երիտասարդ ուժերի պակասը, հասույթի 30 տոկոսի բռնագանձումը քայքայեց այդ խմբի գործունեությունը:

Այդ վերջին հույսի հետ մարվեց նաեւ նրա հանդիսատեսի մի զգալի մասի բռնագաղթումը Ստեփանակերտ: Բաքվի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի հայկական մասնաճյուղը փոխադրվեց Ստեփանակերտ: Կամաց-կամաց փակվեցին հայկական դպրոցները, գրադարանները: Կամաց-կամաց մարեցին Շահումյանի անվան կուլտուրայի պալատի հայկական դրամխմբակի (ղեկ. Ա. Մարտիրոսյան), Էլեկտրադեպոյի հայկական դրամխմբակի (ղեկ. Ս. Հայրյան), Լ. Շմիդտի անվան մեքենաշինական գործարանի կուլտուրայի պալատի հայկական դրամխմբակի (ղեկ. Ա. Աղաբեկյան) բեմի լույսերը: Մոմի պես հալվեցին հայ մշակույթի եւ գրականության օջախները: Մնաց միայն «Կոմունիստ» թերթի խմբագրությունը, որը ոչնչացվեց 1990-ի հունվարյան դեպքերի օրերին:

**20.07.1989 թ.**

# ՌՈՒԴՈԼՖ ԽԱՌԱՏՅԱՆ

→Ա

Այդ շրջանում համախոհներիս հետ ունենում էինք երկար փիլիսոփայական զրույցներ, ուսումնասիրում ու վերլուծում էինք տարբեր հեղինակների, փորձում էինք հասկանալ հայ լինելու խորհուրդը, տարված էինք Արեւմտյան Հայաստանն ազատագրելու գաղափարներով: Այս ամբողջ պաշարի հիման վրա հետագայում ես հատուկ բալետային համակարգ մշակեցի, որով ուսուցանում էի Վաշինգտոնի Կիրով ակադեմիայում: Այդ համակարգը միավորում է մարդու մարմնի երեք հատվածները. առաջին` գոտկատեղից ներքեւ` ֆիզիկականը, մարզականը, երկրորդ` սրտի շրջանում, զգայականը, երրորդ` գլխի մասում` մտածելակերպը, որն էլ կառավարում է ողջ մարմինը...

**-Անցնենք քո գործունեության մյուս ասպարեզին` նկարչությանը: Ֆոկինը գրել է, որ ամենը, ինչ ծառայում է կերպարվեստին, կարող է ծառայել եւ պարին, մեկ այլ տեղ էլ նկատել է, որ կերպարվեստն ու պարը մյուս արվեստների նկատմամբ ունեն այն առավելությունը, որ պատկանում են բոլոր երկրներին, բոլոր ժողովուրդներին: Հիշում եմ, դեռ դպրոցական ժամանակ կարծեմ «Գառնի» ամսագրում կարդացի, որ դու զբաղվում ես նաեւ քանդակով եւ կապ ես տեսնում քանդակագործության ու բալետի միջեւ:**

**Ի դեպ, այդ կապը մի ամերիկացի քննադատ նկատել էր քո բեմադրած «Նարայամայում»` գրելով, որ բեմադրությունն օժտված է ճարտարապետական գեղագրություն հիշեցնող քանդակագործական կեցվածքներով: Սակայն տարիներ անց մենք իմացանք ոչ թե Խառատյան քանդակագործի, այլ նկարչի կայացման մասին: Այսօր իմացա, որ ընտրվել ես Հայաստանի Նկարիչների միության պատվավոր անդամ: Շարունակո՞ւմ ես դարձյալ օրական 4-5 ժամ նկարել:**

-Ոչ այստեղ, բայց Ամերիկայում այդքան ժամ տրամադրում էի նկարչությանը, անգամ գիշերն էի աշխատում: Քանդակն ինքը շատ հետաքրքական ձեւ է, որ ժամանակ ու նյութ է պահանջում, այսօրվա նյութն էլ տարբեր է անցյալից: Նկարչությունը եւս նույն գործառույթներն է կատարում, բայց գունային մեկնաբանություններով ու հիմնված տարբեր նրբությունների վրա` յուրաքանչյուր գույն ո՛ր էներգետիկ կենտրոններին է համապատասխան, գույների խառնուրդները մեկը մյուսի հետ ի՛նչ կկարողանան ասել, եւ այլն: Բոլոր արվեստներն էլ նույն բանին են ծառայում, պարզապես` տարբեր միջոցներով: Գաղափարը նույնն է, ուղղակի տեխնիկան է տարբեր: Մի դեպքում տափակ մակերեսի վրա ես խորությունները ստանում, մյուս դեպքում` բեմի վրա, որը նաեւ կարող ես շարժել: Ընդհանրությունն ինքը` արվեստն է, մտածելակերպը: Իսկ այլ հարց է` արվեստագետը մտածելիս սեփակա՞ն մտքերն է արտահայտում, թե՞ մտնում է մեկ այլ ոլորտ: Չէ՞ որ ինչքան մտածում ես որեւէ առարկայի մասին, այնքան մտնում ես դրա մեջ` ձգտելով պարզել նրա գործառույթը: Օրինակ, պիրուետ նայելով` մարդ տեսնում է ֆիզիկական պտույտը, բայց նա իրենով մագնիսական դաշտ է ստեղծում իր շուրջը, որը չես տեսնում: Եվ այդ մագնիսական դաշտում տարբեր արվեստագետներ տարբեր զգացողություններ ու գույներ կարող են դնել` երկնային, մտավոր, սեռական, անել դա ենթագիտակցորեն կամ գիտակցված...

**-Շատ ուրախ ենք, որ Կորեայում բեմադրեցիր... իսկ այստե՞ղ:**

-Այստեղ հարցերը գնալով ավելի են բարդանում: Շարունակում է տիրել նույն նեղմիտ, գեղարվեստի աշխարհի հետ կապ չունեցող ԽՍՀՄ-ական մտածողությունը` «ես եմ, ախպորս տղեն, հորողբորս տղեն, ընկերս, ես քո ցավը տանեմ...»: Իսկ կա՞ն երկրի, մշակույթի մասին մտածողներ, երկիրն ինչպե՞ս պիտի ներկայանա աշխարհին, մինչեւ ե՞րբ մեր մարզիկն առանց դահուկ պիտի ներկայանա օլիմպիադային: Մեզ մոտ ո՛չ նախարարը գիտի, թե ո՛ւր ենք գնում, ո՛չ էլ օպերային թատրոնի տնօրենը: Իսկ եթե կոնկրետ խոսեմ` իմ վերջին բեմադրություններից մեկից` «Բոհեմից» հետո հանդիպեցինք Միշել Լեգրանի հետ ու պայմանավորվեցինք իր «Շերբուրգյան հովանոցներ» երաժշտախաղի հիման վրա բալետ բեմադրել: Ստեղծեցինք համապատասխան սցենար, Լեգրանը գոհ մնաց, մեր նախարարությունը` նույնպես: Ներկայացրի մեր թատրոնի գեղարվեստական խորհրդին, շատ լավ ընդունեցին, որոշվեց, որ 2018-ին կբեմադրվի, բայց ի վերջո փակեցին: Պատճառը չգիտեմ: Կամ գիտեմ` մեր ոչ պետական մտածելակերպն է ու անձնական գործոնի անհարկի կարեւորումը: Այդ պատճառով էլ Հայաստանը կտրված է մնում աշխարհից ու ոչ մի տեղ չի հասնում: Մեր պարարվեստն էլ չի զարգանում:

**-Իսկ «Բալետ-2021» հիմնադրամը ստեղծել ես, որ զարգանա...**

-Մեր հիմնադրամն արդեն հասցրել է շատ գործեր անել, հանդիպումներ ենք ունեցել բուհերում եւ դպրոցներում` հասկանալու համար, թե ինչ ուղղությամբ ենք ուզում զարգանալ: ԱՄՆ-ի դեսպանատան համագործակցությամբ Երեւան բերեցինք «Բադ բոյզ օֆ դանս» ամերիկյան պարախումբը, բեմադրեցի «Զույգ արեգակներ» ներկայացումը, «Բոհեմը»` Շառլ Ազնավուրի համագործակցությամբ: Այս ներկայացմամբ մեր հիմնադրամը ցույց տվեց, թե ո՛րն է լինելու մեր շարունակությունը, իսկ «Զույգ արեգակներով»` ո՛րն է դուրս գալու եւ աշխարհին ներկայանալու մեր ճանապարհը: Գիտեմ, որ աշխարհում ոչ մի բալետ չի օգտագործում 5-րդ դարի երաժշտություն, Մաշտոցի շարականները կամ ներկայացնում Նարեկացու նման մի փիլիսոփայի կերպարի: Հիմնադրամը պիտի պատրաստի այն շնորհալի մարդկանց, որոնք վաղը, մյուս օրը, հարյուր տարի հետո հայկականությունը կհասցնեն` որպես զարգացման կարեւոր մի ձեւ: Մեր գաղափարն է` օժանդակել հայ բալետում ազատ մտքի դրսեւորմանը: Մեր խնդիրն է` հասնել հայի արքետիպին ու նրա միջոցով փոխել զոհի մեր ինքնազգացողությունը, պարտվածից վերափոխվել հաղթողի: Սա՛ է մեր թիվ մեկ խնդիրը, որին եւ պարտավոր է ծառայել մեր մշակույթը:

Ներդիրը հրատարակված է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: